

85

4-78

31 MAY 2009

18 NOV 2011

85
4-78

ԳՐԱԳԱՐԱՆ ԹԱՏԵՐԳԱԿԱՆ



Ա. — ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՅԻՆ ՀԱՄԵՏԸ

Ե Ի

Բ. — ԱՆՉՐԵՒՈՏ ԳԻՇԵՐ ՄԸ

1002
5051



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԳԱԶԱՐ

1909

12 MAY 2013

(380 20/ա.ա.)
8078

14

ԱՆՁԻՆՔ

Մարտին Պապա .
 Արմանտ, Մարտինի որդին .
 Ֆելիչիանոյ, բարեկամ Արմանտի .
 Նարանցոն, Վաշխատու .
 Լորենցոյ, Արմանտի ծառայող .
 Տիլպուրկ Նաւապետը .
 Վիսքոնտէ մը .
 Մարքիզ մը .
 Պատուխանոյ, սպարտիզպան .
 Գէորգ, Մարտինի եղբայրը .
 Հենրիկ .
 Ովրեստ, բարեկամք , պանդոկի ծառայողներ,
 երկաթուղայ գործաւորներ, ճանապարհորդք,
 բեռնակիրք, քաղաքացիք :

Նիւթը և տարազները ներկայ դարուս կը վերաբերին .
 գործողութիւնը կը կատարուի մասամբ մը Փարիզու մօտ
 Օթէօյլ ամարանոցին մէջ, մասամբ մ'ալ Հաւի մէջ :

Ա.

ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՅԻՆ ՀԱՄԵՏՐ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳՐԵՑԻՆ

ԿՈՐՄՈՆ ԵՒ ԳՐԱՆՁ

ԻՏԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԾՄՈՒՆՔԻՆ ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ՕՒՆՔՔ ՏԱՅԵՏՆ

2159.60

12

ՏԵՍԻԼ Բ.

Լորենցոյ, Շարակցոն և Առաջիկաները

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Օթէոյլի մէջ պարտէզ մը՝ վրանածև տնակով, խորը վանդակապատ մը, առջևուով՝ դէպ 'ի ձախ՝ դաշտագետին մը, որուն վրայ կայ ճամբայ մը:

ՏԵՍԻԼ Ա.

Արմանտ, Ֆելիչիանոյ, Վիսքոնդ, Մարքիզ և Բարեկամներ

Թատրոնին մէջտեղ խաղի սեղան մը, տեսարանին երկու կողմերը բոլորշի սեղաններ պարտեզի՝ որոնց վրայ կան ծխաբարշ, ծխախոտի տուփեր և գրանիկներ և շաւրշայկիայի շիշեր: Արմանտ կը քնանայ ձօձքին մէջ, Ֆելիչիանոյ և իր բարեկամները՝ ապիին անդին ընկած կը քնանան, գլխարկներն և զգեստները ծառերուն վրայ ըստ քնաց կախուած են:

Ֆելիչիանոյ (կրակելով). — Տա՛սը ոսկի... ճիշտ տասը ոսկի:
Վիսքոնդ (խորդարով). — Խըռ... խըռ... խըռ:
Ֆելիչիանոյ. — Տա՛սը ոսկի. շամբայներ. (վայրկեան մը շոռքիւն):

Լորենցոյ. — Ահաւասիկ Պարոն Շարանցոնը կու գայ:

Շարակցոն (գլխարկը ձեռքը բռնած առաջ գալով և բարեկարգ). — Պարոններ, պատիւ ունիմ... (կը կենայ խելոյն՝ տեսնելով որ աւեկերը կը քնանան. - Լորենցոյին) Ի՞նչ կ'ըսէիր ինձի... քեզի պէտ վարպետորդի, իբր թէ պարտէզը կեցած օրինագիրքը կը սուրվէին: Լորենցոյ. — Ինչ որ ինձի պատուիրեր էին՝ այն ըսի:

Շարակցոն. — Ինչ որ կը տեսնուի Ուտուցապետ շամբայներէն բացայտուած՝ օդիի և գաւրեջրոյ օրինագիրքը կը սերտեն:

Լորենցոյ (ընկնելով գաւառ մը). — Պարոն, եթէ ուզէք գաւաթ մը խմել զովանալու համար... խմեցէ՛ք, վասն զի սաստիկ տաք է:

Շարակցոն. — Այո՛, կրնամ ասկէ խմել առանց խիղճ ընելու, վասն զի իմ ոսկիս է՝ որ այս վատնողներուն պարել կու տայ՝ խմելով ու խաղաղով:

Լորենցոյ (խնտալով). — Այո՛, պարոն, ճիշտ ձեր փողերանոցէն ելած ոսկիներն են:

Շարակցոն (աչքի անցնելով զանոնք). — Արմանտ Մարտինեան, և Ֆելիչիանոյ Լարոշ, Մարքիզը... Վիսքոնդը... ահա իմ ամբողջ ցիրուցան դրամագլուխներս:

Լորենցոյ. — Աստուած գիտէ թէ՛ սրջափ դեռ ուրիշ դրամներ ունիք, որ այդ կերպով կը քնանան:

Շարակցուն. — Է՛հ, այսպիսի դատարկապորտներէ շահ յուսալս յիմարութիւն չէ Ի՞նչ է. — Բու կենացդ, մանչ:

Լորենցոյ. — Ո՛հ, մեծապէս կը պատուէք զիս. (կրկնաբար միասին կը խմեն, յետոյ վար կը դնեն զաւարակերը): Արթընցնե՛մ գիրենք:

Շարակցուն (կեցնելով զանկիւս). — Սպասէ: (Անկիւն մը տակելով) Հաւատարիմ ծառայ մ'ես դուն, տէրերդ մատնելու անկարող, այնպէս չէ՞:

Լորենցոյ. — Կարծեմ թէ... հարցընելու պէտք չկայ:

Շարակցուն. — Ո՛հ, արդէն չափեցի զքեզ մէկէն, սիրուն պատանի. (հիկ գիրակը տարով իրեն) Ա՛ռ, ահա քեզի հինգ ֆրանք: (Յետոյ վստահո՞րքեամբ մը) Ըսէ նայիմ, որո՞նք է այս տունը:

Լորենցոյ. — Իմ տիրոջս, քիչ ժամանակ է որ գնեց՝ ամառը գիւղն անցընելու համար:

Շարակցուն (սիրտ գրաւելու ոճով). — Գնուած... և վճարուած:

Լորենցոյ (չարտքեամբ և աչքերը վար առնելով). — Այդպէս կ'ըստի և կը կարծուի:

Շարակցուն. — Իսկ կահ-կարասիքը:

Լորենցոյ. — Գնուած են... մի և նոյն կերպով:

Շարակցուն. — Եւ վճարուած... մի և նոյն դրամով:

Լորենցոյ (միշտ չարաձօնիկ կերպով). — Այո՛, նոյն ստակով: Է՛հ, ամէն մարդ գիտէ՝ որ Մարտին Պապան հարուստ է, և պարոն Արմանտն ալ անոր միակ որդին է, և թէ ուշ կամ չուտ...

Շարակցուն. — Բնականաբար... և այն օրէն որ տէրդ գնած է այս տունը...

Լորենցոյ. — Կը խմեն, կը խաղան... կը պարեն... վերջապէս շարունակ գուարճութեանց մէջ են:

Շարակցուն. — Դերքին մասն ալ լաւ կահաւորուած է:

Լորենցոյ. — Արտաքինէն քիչ մ'աւելի. սրահները շքեղազարդ կը փայլին:

Շարակցուն. — Այո՛, կը փայլին անոր համար՝ որուն սուղի նստեր են:

Լորենցոյ (մատնակիչ ընկղով տնակը). — Եթէ հաճիք, պարոն, աչք մը տալ սենեակներուն...

Շարակցուն. — Ամենայն սիրով: (Ինքնիրեն) Պիտի կարենամ ասով վեր ի վերանց հաշիւ մ'ընել կահ-կարասեաց արժէքին:

Լորենցոյ. — Պիտի տեսնէք որ ըսածներս ստոյգ են. սուտեր շինելու անկարող եմ:

Շարակցուն (ինքնիրեն). — Եթէ ծախողը գրաւի տակ չէ ձգած... լաւ գիտեմ վերջը վերջը որուն ձեռքը պիտի իյնայ այս տունը և անոր շքեղ կահ-կարասիները: (Կը մտնէ Լորենցոյի հետ, որ աչ և աչ կ'աներուն ակունկերը կու տայ, միևնույն որ ձայնը կը նշաղի կամաց կամաց. վայրկեան մը լռութիւն կը տիրէ):

Վիսպրնդ (կը խորրայ). — Խըն... Խըն... Խըն...

Ֆելիչիանոյ (արքրնկարով). — Է՛հ... Ի՞նչ բան է... որոտում կայ: (Վիսպրնդը կը խայ). Ա՛հ, անասուն Վիսպրնդն է... (Ոտքերով ակնոր ոտքերը կը զընցէ) Ո՛ր Արամազդ... չե՞ս ուզեր խոխոտող դադրեցնել... անձըն պիտի տեղաս:

Վիսպրնդ (արքրնկարով). — Է՛հ... Ի՞նչ կայ:

Ֆելիչիանոյ. — Ստուարափողի մը պէս կը խընկաս: (Անկերը կ'արքրնկան):

- Վխարնդ. — Ներողութիւն, պարոններ, հոովմէական իրաւագիտութեան դասին վրայ երազ կը տեսնէի:
- Ֆէլիչիանոյ. — Ես ալ յաջողութիւն կ'երագէի... բուռերով ոսկի կը շահէի երագիտ մէջ, բայց հիմայ որ արթուն եմ՝ ահա հինգ հարիւրէք կայ քովս. (գրպակէն կը հանէ):
- Վխարնդ. — Ուրիշ չունի՞ս:
- Ֆէլիչիանոյ. — Ոչ:
- Վխարնդ. — Այդ ալ կրնայիր սպառել:
- Ֆէլիչիանոյ. — Պարտապահանջներու հատուցանելու համար պահեցի:
- Վխարնդ. — Եւ դեռ տրտնջելու պիտի համարձակի՞ն ապերախտները:
- Ֆէլիչիանոյ (ոտք կըդնուի). — Ինչ որ կ'երեւի երկար քնացեր ենք:
- Վխարնդ. — Շատ տար է:
- Ֆէլիչիանոյ (ձօձրիկ մէջ Արմանուր դիտելով). — Պարոններ, նայեցէք ինչպէս կը քնանայ Արմանա... ինչ հանդարտ... ինչ խաղաղ... թշուառականք:
- Վխարնդ. — Անմեղութեան քուն կրնայ ըսուիլ:
- Ֆէլիչիանոյ. — Տեսած ես դուն անմեղութեան քնանալը. երանի՜ քեզի:
- Արմանու (ձօձրիկ իջնելով). — Ժամը քանի՞ է:
- Ֆէլիչիանոյ. — Չորսն է:
- Վխարնդ. — Եթէ չեմ սխալիր, միւս բարեկամները մեզի խոտացան որ վեցին պիտի գան:
- Արմանու. — Հիմայ երկու ժամ ի՞նչպէս պիտի անցընենք:
- Ֆէլիչիանոյ. — Ինչ գիտնամ... խմեցինք... ծխեցինք...
- Վխարնդ. — Խաղացինք...

- Արմանու. — Քնացանք... վերջապէս ինչ որ կարելի էր ընել ըրինք՝ ապուշ մը չըլլալու համար: (Այ կողմի գրասեղանէն գիրք մ'առնելով) Օրէնսգիտութիւնը սորվինք՝ որ դիպուածով հոս կը գտնուի:
- Մարքիզ. — Օ՛Ֆ, մի՛ ձանձրացներ զմեզ օրինագիրքով:
- Ֆէլիչիանոյ. — Ինչո՞ւ... քիչ մը նիւթը փոփոխելու և զբաղելու համար լաւ չէ՞. թող որ հետաքրքրական գլուխներ ալ կան. — պարզ կեներու գլուխը, ժառանգութեանց գլուխը... Ո՛հ, իրաւ, ժառանգութիւնները բերնի ջուրերնիդ վազցընել կու տան, այնպէս չէ՞, երանելիներս:
- Արմանու. — Ո՛հ, թող կրողը տանի ժառանգութիւններն ալ, դարերով սպասեցնել կու տան, և երբ խեղճ մարդուս բերանը ակոյց չի չմնար՝ այն ատեն կը հասնին:
- Վխարնդ. — Իմ կարծիքով՝ դեռ չհասած՝ լաւագոյն է սպառել զանոնք:
- Ֆէլիչիանոյ (կարդարով). — Յաղագս ձերբակալ առնելոյ զոր. — այսինքն է՝ պարտքերու տակ ինկնող մը բանտ տանելու վրայ:
- Արմանու (գիրքը ձեռքէն առնելով). — Ապուշ, պիտի լտես:
- Վխարնդ. — Մէկդի ձգէ օրինագիրքը:
- Անկէքը. — Կրողը տանի. կրակն իյնայ օրինագիրքը:
- Արմանու (կորէն տղը դնելով օրինագիրքը). — Ի՞նչ ուսանելու կատաղութիւն մ'է որ յանկարծ վրադ եկաւ:
- Մարքիզ. — Ճիշտ է, վայրկեաններ կան՝ որ միայն ձախորդ բաներ մարդուս միտքը կ'իյնան... ինչպէս յանկարծ միտքս ինկաւ հիմայ՝ որ շատ ժամանակէ ի վեր, ընտանեացս վրայօք լուր չունիմ:

Վխարնոյ. — Ես ալ նոյնպէս:

Ամենքը. — Ես ալ:

Մարրիզ. — Յաւալի բան մ'է. արդեօք չէ՞ կա-
րելի գրել մեր ծնողաց թէ դրամի կարօտ ենք:

Արմանտ. — Աղէկ գտար (նեղօրոյն): Ուսման
և քննութեանց աշխատութիւններէն ծանրա-
բեռնուած... մեր արտասուալի վիճակը անոնց
նկարագրել՝ սուտերով լեցուն նամակներով՝
ծթրած ու հինցած գաղափար մ'է, սիրելիք.
և եթէ յաջողի ալ՝ ի՞նչ շահ պիտի ունենանք,
բայց եթէ կանխիկ ամսական թոշակ մը...
ողորմելի հարիւր ֆրանքնոց մը:

Ֆելիչիանոյ. — Այո, սխիարները վճարելու
կրնայ ծառայել:

Վխարնոյ. — Ամօթ է, ամօթ... հարիւր ֆրան-
քի համար շնորհով մարդիկ պէտք չէ որ խա-
բեբայութիւն ընեն... ոչինչ բանի մը հա-
մար: Այդպիսի տխմար չարութիւնները դե-
ղավաճառներու աշկերտներուն թողուցէք:

Արմանտ. — Մենք, ո՞վ պարոններ, կեանքը ու-
րիշ կերպով կ'ըմբռնենք, մենք լայն ճամբան
կը կտրենք. մեզի հազարներ պէտք են և ոչ
թէ տասնեակներ. մենք ամէն թատերական
ատաշին ներկայացումներուն համար օթեակ-
ներ կը գնենք. ունինք գիւղային զբօսավայր
տուներ, ձիեր, ծառաներ և նաև պարտքեր,
որոնք ներկայիս օգուտին համար ապագանիս
կը սպառեն: Այս է ահա կեանքը ըստած բա-
նը... ճշմարիտ կեանքը... համառօտ... բայց
երջանիկ...: Չեզի այդպէս չի՞ տեսնուիր, ը-
սածօ աղէկ չէ՞. մեզմէ վերջն ալ կ'ուզէ թող
աշխարհօ կործանի... Ուրեմն վայելենք...
որչափ որ կրնանք վայելենք:

Ֆելիչիանոյ (պրտալով). — Գողը բռնեցէք, գո-
ղը բռնեցէք:

Արմանտ. — Ի՞նչ կ'ընես:

Ֆելիչիանոյ. — Այս խօսքերդ ինձմէ գողցեր
ես... կը ճանչնամ իմ սկզբունքներս, իմ գա-
ղափարներս, դուն միայն բանաբար մ'ես.
բայց փոյթ չէ, գրկէ քու վարժապետդ. (կ'ող-
ջագոչրի Արմանտը):

Արմանտ (խնտալով). — Լմընցուցի՞ր:

Ֆելիչիանոյ (մեկդի տակերով գիւրքը). — Բայց
երէկ աւելի խոնարհ կերպով կը խօսէիր,
մտածելով որ վաղը վճարելիք պարտքիդ հա-
տուցման պայմանաժամը լրացեր է:

Արմանտ. — Վասն զի երէկ ստակ մ'ալ չունէի,
մինչդեռ այսօր...

Ֆելիչիանոյ. — Յետին թշուառութեան հասեր
ես:

Արմանտ. — Դեռ չէ... բայց Շարանցոնին գը-
րեցի, և ինձի պատասխան տուաւ թէ պիտի
գայ. ուստի կը սպասեմ ու կը յուսամ...

Ֆելիչիանոյ. — Ստակ կորզելու համար անկից-
բայց թէ որ չեմ սխալիր, շատ պարտք ունիս
անոր:

Արմանտ. — Այդ դե՛ռ աւելի յաջող պարագայ
մ'է՞ դարձեալ դրամ առնելուս, որովհետև ի-
րեն շահը կը պահանջէ որ զիս պաշտպանէ:

Ֆելիչիանոյ. — Ի՞նչպէս ալ գործդ գիտես:

Վխարնոյ. — Պարոններ, մրցանքի ընթացք
մ'ընել կ'առաջարկեմ, գրաւ մը դնենք, աշ-
խոյժ կը զգամ:

Ամենքը. — Աղէկ է, աղէկ, կ'ընդունինք:

Արմանտ. — Ուրեմն ինձմէ առաջ դուք գնա-
ցէք... ես հոս մէկու մը կը սպասեմ... բայց
պիտի չուշանամ. Ֆելիչիանոյի հետ ձեզի կը
հասնիմ. բայց մի՛ մոռնաք որ ժամը վեցին
սեղան պիտի սկսինք:

Ֆելիչիանոյ (վարդապետական ձայնով). —

Հասկըցաք, պատանիներ. ճիշդ ժամը վեցին է՛ պորտաբուժութեան բարձրագոյն և փորձառական ուսմանց ընթացքին բացումը: Վազեցէք եռանդուն աշխուժով լեցուած... սիրով եկէք, որպէս զի յագեցնենք այն բամբակէ յարգելի գլխարկներուն փափաքը, որոնք իրենց գաւառներէն գոռոզութեամբ հեռուէն իրենց սրբուց յառաջագիմութիւնները կը տեսնեն, եկէք... (ճայնը փոխելով) Աղանդերի ժամանակ ալ պար ունինք (խնուարով):

Աճե՛նքը. — Երթանք, երթանք. (ըռըս կ'ըլլեն):

ՏԵՍԻՒ, Գ.

Արևևտ և Ֆելիսիանոյ, ապա Շարանցուն

Ֆելիսիանոյ. — Ուրեմն կ'ըսէիր թէ մեր Շարանցուն բարեկամը...

Արևևտ. — Պէտք է որ արդէն հասած ըլլայ... քեզի աղաչեցի որ քովս կենաս, որպէս զի քաջալերես զիս և թելադրես ինձի...

Ֆելիսիանոյ. — Վտտահ եղիր բարեկամութեանս վրայ:

Շարանցուն (տունէն կ'ըլլելով). — Շատ աղուոր, ամէն բան կիրթ ճաշակով:

Արևևտ. — Ո՛հ, որ կողմէն ներս մտաք:

Շարանցուն. — Գուք կը քնանայիք... և չուզելով ձեր քունը վրդովել՝ անկէ օգուտ քազեցի ամարանոցնիդ այցելելու:

Ֆելիսիանոյ (անոր ուսերն այնպիսի կերպով մը բանկելով որ արգելք ըլլայ դառնալուն). — Բարի լոյս, չարագործ, աւագակ, վաճառական մարդկային մտի:

Շարանցուն (խնուարով). — Հարկ չկայ հեղինակին անունն հարցրնել, մի միայն Ֆելիսիանոյ լարոջ բարեկամս է, որ այդպիսի սրախօսութեան մը ձիրքն ունի:

Ֆելիսիանոյ. — Ա՛... ա՛, դէմքիդ վրայ հեղնութիւն կայ. հո՛ս, տո՛ւր ձեռքդ սեղմեմ... բարի լոյս, ի՛նչպէս է առողջութիւնդ. լա՛ւ է... է՛հ արդէն կը տեսնուի... խօս գործե՛րդ:

Շարանցուն. — Այլ վաստըկիմ կաթիլ կաթիլ: Աեանքը խիտ ու փշալից է... անոր համար որ զայն շահեցնել կ'ուզէ:

Ֆելիսիանոյ. — Ո՛հ, այդ երգդ արդէն ինձի ծանօթ է, ուրիշ եղանակ մը պէտք ես հնարել: Անպիտան, ոսկին պարկերով կը շահիս... և դարձեալ կ'ողբաս:

Շարանցուն (ակռակերը սեղմ՝ խնուարով). — Ի՛նչպէս ալ միշտ զուարթ ու հեզնող է այս մեր Ֆելիսիանոն:

Ֆելիսիանոյ. — Քու շնորհիւդ է որ այդպէս եմ. քանի որ ձեռքս դրամ կար՝ ողբերգակ առաջնակարգ դերասանի մը պէս տխուր մնացի... բայց այն ատենէն որ զիս կողոպտեցիր, առտուրնէ մինչև իրիկուն կը ծիծաղիմ: Հա՛պա ուրեմն, ուրախացուր հիմայ նաև իմ Արմանտ բարեկամս:

Շարանցուն (Արևևտի). — Տխուր ես դուն:

Ֆելիսիանոյ. — Այո՛... որովհետև դեռ ուտելու յոյսեր ունի, անոր համար կը նեղուի և անհանգիստ է:

Արևևտ. — Ֆելիսիանոյ խե է... ըսածնէրուն մտիկ մի՛ ըներ: Յուսամ որ այս իրիկուն մեզի հետ ընկերութիւն պիտի ընես. քանի մը բարեկամներ պիտի հաւաքուինք... և յոյսս քու վրայ դրած եմ:

Ֆելիսիանոյ. — Իբրև ամենէն աւելի սիրելի մը վրայ:

Շարակցուն. — Բոլոր սրտանց կ'ընդունիմ. երեսասարդութիւնը կը սիրեմ, անոնց հետ զանուած ասենս՝ ինքզինքս երիտասարդ կը զգամ... Բայց եթէ ժամանակին ինծի իմացուցած ըլլայիր, քիչ մը վրաս զուգիս կը շտկէի:

Արևանտ. — Ժամանակ ունիք, եթէ ուզէք...

Շարակցուն. — Փարիզ դառնալու...

Ֆելիշիանոյ. — Երկաթուղիով. այնքան մօտ ենք:

Արևանտ. — Սահայն քեզմէ փոքրիկ շնորհք մը կ'ուզեմ խնդրել:

Շարակցուն. — Ամենայն սիրով. ի՞նչ բան է նայինք:

Արևանտ. — Ար դարձիդ՝ ինծի ութը կամ տասը հազար ֆրանք բերես:

Ֆելիշիանոյ. — Եւ սեխ մ'ալ:

Շարակցուն. — Սեխը դիւրին է, կը խոստանամ. գալով միւսին...

Ֆելիշիանոյ. — Բայց ինչո՞ւ հաճօքին կէսն ընել կ'ուզես. սեխը՝ ֆրանք, ֆրանքներն ալ սեխ կը բերեն:

Շարակցուն. — Տա՛սը հազար ֆրանք. արդէն ինծի երեսուն հազար պարտք ունիս, և վաղը ճիշտ փոքրիկ փոխանակազրի մը հատուցման պայմանաժամն է...

Արևանտ. — Ո՛հ, շատ լաւ կը յիշեմ:

Շարակցուն. — Վեց հազար ֆրանք է... Ուստի չեմ հասկնար թէ ինչո՞ւ այսօր փոխ կ'ուզես ուրիշ տասը հազար ֆրանք:

Ֆելիշիանոյ. — Քեզի վճարելու համար, տըխմար:

Շարակցուն (զարնացած). — Ինծի՞ վճարելու համար:

Ֆելիշիանոյ (դէպ իրեն դարձրնելով). — Բա՛ն

չես հասկընար. — Այս իրիկուն Արմանտին դուն տասն հազար ֆրանք տուր, որպէս զի վաղը վեցը անկից վճարէ քեզի:

Շարակցուն (Արմանտին դառնալով). — Որով պիտի մնայ չորս հազար:

Ֆելիշիանոյ. — Ինչ որ մենք պիտի պահենք:

Շարակցուն. — Ա՛հ:

Ֆելիշիանոյ. — Ապա թէ ոչ՝ ի՞նչ շահ պիտի ունենայինք:

Շարակցուն. — Չեզի, այո՛, շահ կայ... բայց ինծի՞... որ և իցէ կերպով՝ (Արմանտին դառնալով) այս պարտնին տասը հազար ֆրանք աւելի պարտք տուած պիտի ըլլամ:

Արևանտ. — Որոնցմէ կանխիկ պիտի ստանաս շահերը... և ուրիշ փոքրիկ ծախքերը...

Ֆելիշիանոյ (Շարակցունը իրեն դարձրնելով). — Եւ սեխը... Է՛հ, մի մտմտար, գործերու մէջ անվախ ըլլալու է... կամքի տէր...

Շարակցուն (տատանւելով). — Կը հասկնամ... բայց տա՛սը հազար ֆրանք...

Ֆելիշիանոյ. — Լա՛ւ, յառա՛ջ ուրեմն: Մենք միթէ չափահաս և մէկ հատիկ որդիներ չենք, զարմանալի՛ բան: Մարտին պապան Հաւրի մէջ բոլորովին անծանօթ չէ: Օր պիտի գայ՝ որ մենք տասը կամ տասներկու հազար ֆրանքի հասոյթ պիտի ունենանք... և զանոնք գնտակներու պէս օդի մէջ պիտի խաղցընենք... Արեացիք, սիրտ ըրէ ուրեմն... Հաւանութիւնդ տո՛ւր, ո՞վ փափո՞ւկ խղճմտանք ունեցող, ո՞վ մարդկային մտի վաճառական... տո՛ւր ձեռքդ սեղմեմ... ինչ գեղեցիկ մարդ... ի՛նչ նախանձելի կերպարանք:

Շարակցուն. — Աղէ՛կ, աղէ՛կ, կը հաւանիմ. Ֆէլիշիանոյ իրեն զուարթաբանութեամբ ինծի խենթութիւններ ընել պիտի տայ: Ուրեմն շուտով ֆարիզ երթամ:

Արևանո. — Պատրաստէ փոխանակագիրը, այնպէս որ իմ ստորագրութենէս դուրս բան չպակօսի:

Շարանցուն (յանկարծակի կենալով). — Ա՛հ, աղէկ ըսիր, կը մոռնայի:

Արևանո. — Ի՞նչ բան:

Շարանցուն. — Վախեմ որ պիտի չկարենամ դառնալ: Ուրիշ մէկը այս իրիկուն զիտ երեկոյթի մը հրաւիրած է, և ես չեմ կրնար տուած խոստումս չպահել:

Արևանո. — Լաւ, զինքն ալ հետդ մեզի՛ բեր առանց ակնածութիւն ընելու:

Շարանցուն. — Այն առեն իսկոյն կ'երթամ. (կնարեկ կենալով) Ո՛հ, խօսք մ'ալ. գիտցիր որ ամբողջ գումարը պիտի չկարենամ համրել ու տալ... դրամը շատ հագուագիւտ բան դարձեր է... սակայն պարտքներ ունիմ, և...

Ֆիլիխանոյ. — Այ, այ:

Շարանցուն. — Քեզի համար դիւրին պիտի ըլլայ զանոնք ծախելը...

Ֆիլիխանոյ. — Թու՞թակնե՞ր... բո՞ժոժաւոր օձե՞ր:

Շարանցուն. — Ո՛չ... ո՛չ... որմակալ դիպակներ, և ինչ որ կը տեսնեմ՝ պէտք ունիք:

Ֆիլիխանոյ. — Կը պակօսի նաեւ դաշնամուր (փիւնոփոքրի) մը. կարելի է դիպուածով ունենաս:

Շարանցուն. — Եւ իրաւցընէ, անոր նման բան մ'ունիմ... դաշնակարան (արմոնիտով) մ'ունիմ և երգիտն (օրկանոյ) մը, ուրիշ քանի մը խաղալիկներ... վերջապէս ձեզի հետ բարեկամաբար պիտի վարուիմ, վստահ եղէք:

Ֆիլիխանոյ (ժիժաղկով). — Ա՛հ, ձեր վամփիո... եթէ յանկարծ վաշխառուները կախելը նորելուք մ'ըլլար...

1001

09 6112
1001
1505

Շարանցուն. — Է՛հ, միշտ նոր կատակներ. ո՞ր տեղ ալ կը գտնես այդչափ սրամտութիւններ (ժիժաղկով):

Ֆիլիխանոյ (ձախակողմը տանելով զակիկայ և սիկար մ'առնելով). — Չուանը պրկելու և ուղբերէզ քաշելու պաշտօնը էս յանձն կ'առնէի:

Արևանո (դիպ 'ի վրանը ձայնելով). — Լորենցոյ, Լորենցոյ: — (Լորենցոյ կը մտնէ). Ամէն բան կարգի դիր, եթէ մարդ գայ՝ սպասեցնել տուր, ես կայարան կ'երթամ պարունին ընկերելու:

Ֆիլիխանոյ (Շարանցունիկ). — Եկուր, Շարանցոն. լաւագոյն է որ երթուրթա՞ծի տոմսակ մ'առնես, քիչ ծախք կ'երթայ:

Շարանցուն. — Աղէկ ըսիր... ճիշտ է... մտածած չէի (դուրս կրկնով):

ՏԵՍԻՒ Դ.

Լորենցոյ առանձին, յետոյ Պաստիխանոյ

Լորենցոյ. — Հը՛, կ'ուզեն որ ջարդուկտոր ըլլամ բոլոր կահ-կարասիները շտկելու ու տեղերնին դնելու համար, որպէս զի յետոյ փայծաղի ցաւ ունենամ, որուն սկսեր եմ ենթարկուիլ... ո՛չ, ո՛չ... լաւագոյն է հանգիստ առնեմ: Օ՛Ք, (կը նստի և ուտերը ուրիշ արուի մը վրայ կը դնէ): Թող որ պարտէզն ենք, ուրեմն պարտիզպանին կ'իյնայ, (իշխանակալ ձայնով մը կանկնով պարտիզպանը, որ խորը կ'աշխատի) Պասդիանոյ, Պասդիանոյ, (Պաստիխանոյ ներս կը մտնէ) Կարգի դիր



այդ կահկարասիները... է՛յ, ուրիշ աթոռ մը տուր ինձի՛ բազուկս վրան հանգչեցնելու (Պասպիանոյ կը կատարէ): Լաւ է. ինձի սիկար մը բեր (Պասպիանոյ կը լեբի՛ ձրագով մը): Բոլորն ալ աղէկ են, ընտրելու հարկ չը կայ: (Աննեցմէ ուրր տասը նստ կ'առնէ և անբողջ գրպանը կը դնէ, և մէկ նստ ալ կը վառէ): Ամէն բան իր տեղը դիր. (Պասպիան կը կատարէ, բայց տուփը տանկուռ միջոց՝ դեռ վրանը չմտած՝ բռն մը սիկար գրպանը կը դնէ: Վանդակապատին դրան զանգակը կը ննչէ) Օ՛Ֆ, բարկութիւնս կու գայ, չեն թողուր որ հանգիստ կերպով ծուխ մը քաշեմ: (կանչելով՝ Պասգիանոյ, Պասգիանոյ, հոս եւ կուր բաց, շուտ ըրէ: (Գրպանէն օրագիր մը կար նստէ). կը փափագէի գիտնալ թէ երկաթուղու այ արժէթղթերը բարձրացած են: Վերջերս անտրիական երկաթուղու թղթեր գնեցի... (զանգակը դարձեալ կը ննչէ) բարձրացած են, իջած են. եթէ պիտի շարունակուի բարձրացումը՝ գործակալիս պիտի յանձնէի գանոնք ծախելու՝ հանրակառքի (օմնիպուս) արժէթղթեր գնելու համար: (Զանգակը կը ննչէ) Չեռքէրդ չորնան. ուրեմն կարելի պիտի չըլլայ հանգիստ կերպով օրագիր մը կարգալ՝ մեր այս գիւղագնացութեան ատեն: (Կ'երբայ դուրս բանարու Մարտինի. իսկ Պասպիանոյ մնացած շիշերը վերցրնելու կու գայ, և աստիճաններուն վրայ նստնելով՝ կը դիտէր արդեօք մեկը կը նայի՞, և կը խմէ շիշէն):

ՏԵՍԻ, Ե.

Լորենցոյ և Մարտինի

Մարտինի (վանդակապատին առջև. բառակալ կոկիկ նագուած, բայց այնպիսի գգեստներով, որոնց գոյնը և ձևը գրեթէ բաւ տարուան նկերքիւն կը ցոյցնեն). — Հո՞ս է Արմանո... պարոն Արմանո Մարտինը:

Լորենցոյ (ներս ընդունելով). — Հոս կը բնակի, բարի մարդ, մտիր, մտիր: Քիչ ատեն է որ պարոն Արմանո դուրս ելած է, բայց թէ որ կ'ուզես իրեն սպասել՝ կրնաս հոս կենայ: Մարտինի. — Կը ցաւիմ որ դուրս ելեր է... Փարիզէն կու գամ, Ս. Յակովբոս փողոցին վրայ գտնուած իր սենեկէն. հոն ինձի ըսին որ ինքը՝ Օթէօյլ գիւղագնացութեան ելեր է. հասցէն առի, կառք նստայ և հոս եկայ:

Լորենցոյ. — Դառնալու շատ չ'ուշանար. բարեկամի մը ընկերելու գնացած է մինչև կայարան:

Մարտինի. — Կայարան. շատ լաւ, շուտ ըրէ ուրեմն ու վազէ ետեւէն, տղայ:

Լորենցոյ. — Վազել:

Մարտինի. — Ըսէ՛ իրեն որ հոս մէկը կայ... մէկ մը որ... մանաւանդ թէ երկու հոգի... (Լորենցոյ չորս կողմը կը նայի) գորոնք տեսնելու ինքը մեծ հաճոյք պիտի ունենայ... և ըսէ որ ինքն ալ շտապով վազէ գայ: (Գրպանին մէջ պրպտելով) Ա.ս., ահա քեզի յիսուն հարիւրչեայ (սանդիս), քու աշխատութեանդ համար:

Լորենցոյ (տժգոնորեանք). — Յիսուն հարիւր-
չեայ. (գրպանը կը դնէ):

Մարտին. — Երթամ պատանի մը կանչելու
որ կառքին մէջ մնացեր է. (վայրկեան մը
կ'երբայ):

Լորենցոյ. — Յիսուն հարիւրչեայ... Ինչպէս
ալ շնորհալի է կոշտ գիւղացին իր յիսուն
հարիւրչեքով. գլուխն ուտէ. կառք մը կը բռն-
նեմ. կ'արժէ՞ շապիկ թացցնել յիսուն հա-
րիւրչեքի համար:

Մարտին (նորեկ ներս մտնելով). — Եկո՛ւր
առաջ... քալէ՛...:

Լորենցոյ (ինքնիրեն). — Ո՞վ կրնան ըլլալ ար-
գեօք այս ողորմելի գեղացիները:

Մարտին. — Դեռ չե՞ս մեկնած, ուրեմն շո՛ւտ
ըրէ, ճամբայ ել:

Լորենցոյ (մեկնելով). — Կ'երթամ, կ'երթամ...
պարոն. (ռշտերը քարձրացնելով) յիսուն հա-
րիւրչեայ, փի՛ւն:

ՏԵՍԻՒ Զ.

Մարտին և Հենրիկ

Հենրիկ. — Կը կարծես ուրեմն թէ անիկայ պի-
տի գա՞յ:

Մարտին. — Ի՞նչ հարցմունք. զարմանալու
ի՞նչ բան կայ... յորչափ գոհ պիտի մնայ:
Խեղճ տղայ, սիրտս կը բաբախէ միայն մտա-
ծելով որ զինքը պիտի տեսնեմ... պիտի գըր-
կեմ...: Ահա գրեթէ երկու տարի է, զիտես,
որ Հաւրը թողուցեր է, երբ զձեզ երկուքնիդ
ալ փարիզ տարի:

Հենրիկ. — Այո՛, ճիշտ է, երկու տարի: Ի՞նչ
միայն մէկ անգամ դպրոց եկած է զիս տես-
նելու:

Մարտին. — Պիտի ապշի զքեզ այդպէս մեծ-
ցած տեսնելով:

Հենրիկ (շոշրջը նայելով). — Բայց նայէ՛, հայ-
րիկ, ի՞նչ աղուոր բնակարան:

Մարտին. — Տղան անշուշտ ծանօթութիւն հաս-
տատեր է հարուստ ընտանեաց մը հետ, որ
զինքը զիւզ հրաւիրած է:

Հենրիկ (սեղանիկ վրայ գտնելով օրինագիրքը).
— Ահաւասիկ այն գեղեցիկ գիրքը՝ որ դուք
իրեն համար գնեցիք:

Մարտին. — Ստոյգ է... ճիշտ այն է... օրի-
նագիրքն է:

Հենրիկ. — Դոր է դեռ, նո՛ր:

Մարտին. — Այո՛... կը տեսնուի որ խնամք
ունի զքերտուն վրայ... Կարծես թէ հազար
տարի է հետը խօսած չեմ. հիմայ սրչափ բան
պիտի գիտնայ, տղաս գիտնական մ'է, Սողո-
մոն մը:

Հենրիկ (վանդակապատեկ նայելով). — Հայ-
րիկ, ահա ինքը... ճանչցայ զինքը... Ահաւա-
սիկ:

Մարտին (յուզգունաբ). — Ի՞նքը... ահ, ի՞նչ է,
ուրախութենէս ոտքերս կապուեցան, աչքերս
կը մթըննան:

ՏԵՍԻՒ Է.

Արևանու և Առաջինները

Արևանու (ներս մտնելով՝ առանց իր հայրը
տեսնելու). — Օտարականներ՝ զիս կ'ուզեն

- տեսնել... (նաև նկարով հայրը՝ կը նկատուի ա-
 օ նոր բազկաց մէջ) Հայր իմ:
- Մարտին (գրկերով գանձիկայ) — Որդեակ իմ,
 շատ երջանիկ եմ գրեզ տեսնելուս:
- Արմանտ. — Ես ալ, հայր իմ, ես ալ:
- Մարտին. — Բաւական ատենէ ի վեր է՝ որ
 այսպիսի ուրախութիւն չէի ունեցած:
- Արմանտ. — Բայց ես կը զարմանամ... Ի՞նչ
 պէս եղաւ որ հոս Սթէյօլ եկար:
- Մարտին. — Այս առտու Հաւրէն մեկնեցայ՝
 Հենրիկը դպրոցէն առնելու համար, որ ասկէց
 վերջ քովերնիս պիտի մնայ:
- Արմանտ (բարև տարով ակնոր). — Պարոն Հեն-
 րիկ:
- Մարտին. — Այդ ի՞նչ արարողական ձեւեր են.
 ողջագործէ՛ զինքը, համբուրուեցէք, փոքրիկ
 ընկերդ է՝ որուն հետ սնած ու մեծցած ես:
 Հենրիկ (ժպտելով). — Կարծես թէ ալ զիս չես
 ճանչնար:
- Արմանտ. — Ստուգիւ. զինքը չտեսնելէս ի վեր՝
 շատ մեծցեր է:
- Հենրիկ. — Իրաւ կ'ըսես:
- Մարտին. — Իրաւ է, իրաւ... այդ տարիքին
 մէջ շուտով կ'երկըննայ մտախոտը:
- Հենրիկ (յեղ տարաւ նաւար). — Հայրիկ... թող
 հիմայ...:
- Մարտին. — Թողունք, վերջը կը խօսինք: Ը-
 սէ նայիմ, գաւակս, ի՞նչպէս է առողջութիւնդ,
 ուսմունքդ:
- Արմանտ. — Ամէն ինչ աղէկ է, հայրիկ:
- Մարտին. — Սեղանիդ վրայ օրինագիրքդ տե-
 սայ, աղէկ նշան է ատիկայ... կը տեսնեմ որ
 լրջօրէն աշխատելու փափաք ունիս:
- Հենրիկ. — Ո՛րչափ գոհ պիտի ըլլայ Գէորգ հօր-
 եղբայրդ՝ երբ մեր դարձին պատմենք քու յա-
 ռաջադիմութիւններդ:

- Արմանտ. — Ախ, դեռ անոր վրայօք բան մը
 չըսիք ինծի. ի՞նչպէս է:
- Մարտին. — Փաւօք Աստուծոյ, ողջ առողջ է.
 ինծի յանձնեց որ քեզի շատ և շատ բարեներ
 ընեմ. և այս երկու զոյգ բողէ գուլպաներն
 ալ գրպանս խոթեց՝ քեզի յանձնելու համար.
 (կը նաևէ ծոցէն և Արմանտի կու տայ):
- Արմանտ (նախաբեամբ). — Ո՛հ, շնորհակա-
 լութիւնս ըրէ իմ կողմանէս. (սեղանին վրայ
 կը դնէ):
- Մարտին. — Կ'ուզէր նաև յանձնել շիշէ մը
 ինձորօղի... (ժիծաղկով) այո, ինձորօղի...:
 Ո՛հ, ի՞նչպէս ալ մտածեցիր, ըսի իրեն. ի՞նչ
 կ'ընես. երբ տուն վերադառնայ՝ որչափ որ
 ուզէ՝ թող խմէ. ինքը հիմայ Փարիզ զինի կը
 խմէ... Բայց Արմանտ, ի՞նչ մտածմունքի
 մէջ ես, կարծես խելքդ գլուխդ չէ, չփոթու-
 թեան մը մէջ ես:
- Արմանտ (ցնցուելով). — Ե՛ս:
- Հենրիկ. — Արդօք քեզի անհաստութիւն կը
 պատճառէ մեր այցելութիւնը:
- Արմանտ. — Օ՛, ի՞նչ բաներ կ'ըսես: Պատճառը
 յանկարծակիի գալս է... սաստիկ ուրախու-
 թիւնս... վասն զի մտքէս չէր անցնիր գա-
 լուտնիդ:
- Մարտին. — Ա՛հ, պատճառը ուրախութիւնդ
 է, շատ լաւ... ուրեմն կ'ըսէի որ...

ՏԵՍԻԼ Ը.

Ֆելիչիանոյ և Առաչիկները

Ֆելիչիանոյ (վագերով). — Արմանտ, Արմանտ...
 եկուր գրեզ կը փնտռեն...

Արևանտ (ըսկերով րեկե). — Լ՛ուռ կեցիր ... հայրս հոս է:

Ֆէլիչիանոյ. — Իրա՛ն կ'ըսես:

Արևանտ (ներկայացնելով զիւրը). — Պարոն Ֆէլիչիանոյ Լարոշ... փաստաբան ու բարեկամս:

Մարտիկ (զլիսարկն հանելով). — Փաստաբան մը:

Ֆէլիչիանոյ (ինքնիրեն). — Բարեկամս կը հըպարտացնէ զիս:

Մարտիկ (ինչպէս վերը). — Անշուշտ տան տէրը պիտի ըլլայ:

Ֆէլիչիանոյ (ողորունելով). — Պարոն, յարգանքներս...

Մարտիկ. — Գո՛ւն ես, պարոն, որ որդիս հիւր ընդուներ ես:

Ֆէլիչիանոյ. — Ե՛ս, ի՛նչ կ'ըսես. դուք իր տանը մէջ էք:

Հներիկ (սպառ). — Ի՛ր տունը:

Մարտիկ (Արևանտիկ). — Գիւղի տո՛ւն մ'ունիս դուն:

Արևանտ (ցած ձայնով Ֆէլիչիանոյիկ). — Ապո՛ւշ:

Ֆէլիչիանոյ (ինքնիրեն). — Ա՛յ, ի՛նչ անմտութիւն ըրի: Ա՛չ, ո՛չ, մեր տունն ըսել կ'ուզէի, արդէն երկուքնուս ալ կը վերաբերի, որչափ իմս է՝ այնչափ ալ իրենն է...

Արևանտ. — Այս տնակը միտսին վարձու առինք:

Ֆէլիչիանոյ. — Ճիշդ այդ ըսել կ'ուզէի:

Մարտիկ. — Խօսք չկայ... բայց ըսէք ինձի, տղաք. այո՛, շատ գեղեցիկ է... ուստի պէտք է որ շատ սուղի նստած ըլլայ:

Արևանտ. — Ո՛հ, գիւղի մը մէջ...

Ֆէլիչիանոյ. — Վարձբերը ոչինչ են:

Մարտիկ. — Իրա՛ն կ'ըսես:

Արևանտ. — Ատէց գատ՝ մարդս հանգստութիւն կ'ունենայ, որ աշխատութեան օգտակար է:

Ֆէլիչիանոյ. — Կանաչութիւնը... մաքուր օդը... ասկէ աւելի լաւ մը տեղ չկայ օրէնսգիտութեան խորը թափանցելու: Լիկուրգոս, Կիկերոն, Գեմոսթենէս, հնութեան բոլոր գլխաւոր իրաւագէտները պատնէշներէն դուրս կ'ելլէին — արտաքոյ պարսպաց:

Մարտիկ. — Թէ որ այդպէս է՝ ըսելիք չկայ. քանի որ աշխատելու աղէկ կը ծառայէ և միանգամայն սուղի ալ չի նստիր...

Ֆէլիչիանոյ. — Շատ աղէկ կը հասկնաք՝ որ առանց այսպիսի խնայողութեան՝ դպրոցական թողապնիս...

Մարտիկ. — Սքանչելի՛ բան. քանի որ հոս՝ գրեթէ քու տանդ մէջ ենք, կրնամ ուրեմն այս զիշեր ժամը տասնըմէկին շոգեկառքով մեկնիլ:

Ֆէլիչիանոյ (ինքնիրեն). — Ա՛յ, այ:

Արևանտ (ինքնիրեն). — Կայէ թէ ի՛նչ կը մըտած է:

Մարտիկ. — Այս կերպով պիտի կարենանք քեզի հետ ճաշել, և ամբողջ իրկունը միտսին գուարճանալ:

Արևանտ (ցած ձայնով Ֆէլիչիանոյիկ). — Իսկ բարեկամները՝ որ հասնելու վրայ են:

Մարտիկ. — Է՛, դուն ի՛նչ կ'ըսես մտածածիս վրայ, գաւաղս:

Հներիկ (ուրախ). — Ի հարկէ, հայրիկ, ատկեց աւելի դեռ ի՛նչ մեծագոյն հաճոյք կրնամ ունենալ:

Մարտիկ. — Ուրեմն խօսքերնիս խօսք է, հոս պիտի մնանք:

Արևանտ (չաւարով գուշարը ըլլալ). — Իրա՛ն, ո՛հ, որչափ գոհ եմ:

Մարտիկ. — Իրաւ է որ զիշերը անիւններու վը-
րայ պիտի անցընենք... բայց փոյթ չէ, մէկ
անգամով չենք նիհարնար. վաղը աւելի հա-
ճոյքով պիտի քնանանք սաւաններու մէջ:

Արմանտ (ցած ձայնով Ֆելիչիանոյի). — Ի՞նչ
պէս հեռացընենք:

Ֆելիչիանոյ (ինչպէս վերը). — Կրողը զիտ տա-
նի՛ թէ հնարք մը մտքէս կ'անցնի:

Արմանտ (ինչպէս վերը). — Եւ սակայն դար-
ման մը պէտք է գտնել:

Մարտիկ. — Լաւ, ի՞նչ կը փոփոսար հոտ եր-
կուքնիդ:

Արմանտ. — Բան չկայ... բանն այն է... որ...

Մարտիկ. — Ի՞նչ, արդեօք քեզի ներդուծի՞ն
կու տանք:

Արմանտ. — Դեղուծի՛ւն ... քաւ լիցի, ի՞նչ
կ'ըսէք:

Հերիկ (աչքերը ակունց վրայ սեւեւելով). —
Այս պարոնները գուցէ ուրիշ ծրագիր մ'ունին:

Մարտիկ. — Ուրիշ ծրագիր մը:

Արմանտ. — Ստոյգ է ... Առաջուց գուշակել
չկրնալով՝ որ զձեզ տեսնելու երջանկութիւնը
և բաղդը պիտի ունենայի...

Մարտիկ. — Լաւ, առաջ տար ... համարձակ
ճիշտն ըսէ ինձի...

Արմանտ. — Որոշեր էինք փարիզ երթալու:

Ֆելիչիանոյ. — Քննութեանց ... բանախօսու-
թեանց ժամանակն է: Արմանտ առաջին ան-
գամ է որ ճիշտ այս երեկոյ քննութիւն պիտի
տայ Իրաւագիտութեան ուսուցչապետներուն
առջև:

Մարտիկ. — Ո՛հ, ո՛հ ... ուսուցչապետներո՞ւն
առջև... ի՞նչ կ'ըսես, Հներիկ, մեր Արմանտը
ուսուցչապետներուն առջև խօսելու պիտի եր-
թայ...

Արմանտ. — Բայց քանի որ հոս էք ... ուրիշ
օրուան կը ձգենք:

Մարտիկ. — Ո՛չ... ո՛չ... չեմ ուզեր... պարտքը
ամէն բանէ առաջ: Այս կը պակսէր՝ որ ես
Փարիզ գայի՛ գրեց քու աշխատութենէդ յե-
տաձգելու:

Արմանտ. — Ո՛չ, ո՛չ, հայր իմ:

Մարտիկ. — Իսկ ես կ'ըսեմ՝ այո՛:

Ֆելիչիանոյ. — Ասո՛ր կ'ըսեն՝ խելացի մարդու
խօսուածք:

Մարտիկ. — Փափաքդ արձակուրդի ատեն լիտ-
վին պիտի լեցնես:

Արմանտ. — Խօսք կու տամ. պիտի գամ, կա-
րելի եղածին չափ երկար ժամանակ ձեզ հետ
անցընելու:

Մարտիկ. — Ուրեմն զնա՛, դասերուդ վազէ՛,
որդեակ իմ:

Հերիկ (ինքնիրեն). — Եւ սակայն ես չեմ կըր-
նար հաւատալ զիշերուան այս քննութեան:

Մարտիկ. — Ուրեմն գրեց ազատ կը թողունք:

Ֆելիչիանոյ (ինքնիրեն). — Ազատեցանք: (Գուշ-
ակե կառքի վը շատաւ):

Արմանտ (ինքնիրեն). — Ո՛վ երկինք:

Ֆելիչիանոյ (ցած՝ Արմանտի). — Կառք մ'է՛
որ վանդակապատին առջև հասաւ:

Արմանտ (ցած՝ Ֆելիչիանոյի). — Ապահով՝ բա-
րեկամներն են:

Ֆելիչիանոյ (եռյկակ). — Վազեմ կեցնեմ զի-
րենք: (Գուշակ երկուք վրայ կ'ըլլայ, երբ Ո-
վրեստ կը մտնէ):

Արմանտ (ինքնիրեն). — Շատ ուշ:

Ֆելիչիանոյ (ինքնիրեն). — Հիմայ խայտա-
ռակուցանք:

ՏԵՍԻՒԹ.

ՈՎՐԵԱՍ և ԱՐԱՋԻՆԵՐԸ

- ՈՎՐԵԱՍ. — Ի՞նչպէս... մարդ չկայ:
- Մարտին. — Ահա ուրիշ պարոն մը:
- ՈՎՐԵԱՍ. — Յիրաւի շատ քաղաքավար, շատ ազնիւ էք (հեզնօրեն):
- Արմանտ (ինքնիրեն). — Ի՞նչ խառնակութիւն. պաղ քրտինք կու գայ վրաս:
- ՈՎՐԵԱՍ. — Ո՛հ, մարդիկ կան եղեր ձեր քով... ներողութիւն, չէի տեսած... (Քրակկնոցով մը Մարտինը դիտելով):
- Մարտին (ինքնիրեն). — Կարճատես է... պէտք է... մեծ մարդ մ'ըլլայ:
- ՈՎՐԵԱՍ (ինքնիրեն). — Գեղեցիկ հին գլուխ մ'է: — (Չափազանց յարգանք մ'ընկելով) Պարոն...
- Մարտին (Արմանտին). — Ո՞վ է այդ պարոնը:
- Արմանտ. — Պարոնը... այս պարոնը... (ինքնիրեն) Ես ալ չեմ գիտեր ինչ ըսեմ:
- Ֆելիչիանոյ (շուտով). — Պարոնը յաճախորդ մ'է (խորհրդաւոր ձայնով):
- ՈՎՐԵԱՍ. — Ի՞նչպէս... Ի՞նչ ըսել կ'ուզես...
- Ֆելիչիանոյ (ցած ձայնով ՈՎՐԵԱՍԻՆ). — Լուռ կեցիր, խոհեմութիւն:
- Արմանտ. — Այո՛, իմ Ֆելիչիանոյ բարեկամիս յաճախորդ մ'է:
- ՈՎՐԵԱՍ (ինքնիրեն). — Չարմա՛նք, կ'ուզեն որ այդպէս ըլլամ:
- Ֆելիչիանոյ. — Գրաքորիսի կոմսն է:
- Արմանտ. — Լեհացի մ'է:

- Մարտին. — Իրա՞ն կ'ըսես... Ուրեմն դուն ալ յարգանքներդ ըրէ, չենքիկ:
- Ֆելիչիանոյ. — Դատի ներքեւ եղած խնդրոյ մը վրայ՝ ինձի խորհուրդ հարցնելու եկած է:
- Մարտին. — Իրատունք ունի, քանի որ փաստաբան ես:
- Ֆելիչիանոյ. — Դատավարութիւն մը տեղի ունի:
- ՈՎՐԵԱՍ (ինքնիրեն). — Այո աղուոր (կը խորտայ)... աղէ՛կ գտաւ:
- Արմանտ. — Շատ նշանաւոր պարոն մ'է:
- Մարտին. — Կը հատամ:
- Արմանտ. — Բայց շատ ալ թշուառ է:
- ՈՎՐԵԱՍ (ցաւ կեղծելով). — Ո՛հ, այո՛, ամենաթշուառ:
- Մարտին (ՈՎՐԵԱՍԻՆ). — Ափսոս, ցաւակից եմ թեզի... այսօրունէ սկսեալ՝ ամէն առտու «Լրագիր Ատենի» պիտի կարդամ՝ դատիդ վրայօք տեղեկութիւն առնելու համար:
- ՈՎՐԵԱՍ (ողջունելով). — Պարոն...
- Մարտին. — Օ՛ն, չենքիկ, յարգանքներդ ըրէ:
- Ֆելիչիանոյ (ՈՎՐԵԱՍԻՆ). — Հաճեցէ՛ք, պարոն կոմս, գրասենեակս երթանք, հոն բացատրելու ինձի ձեր դատի խնդիրը:
- ՈՎՐԵԱՍ (ցած ձայնով). — Հոն մատերս կայ:
- Ֆելիչիանոյ (ցած ձայնով). — Բաղարջիկները ալ կան. (ձեռքը ներկայացնելով) անոր և բարձր ձայնով) Հրամեցէ՛ք:
- ՈՎՐԵԱՍ (ինքնիրեն). — Ինչպիսի՞ գաւեշտ (վրասը մտնելով ՈՎՐԵԱՍԻՆԻՆ):
- Մարտին (անոր ընկերակցով). — Լաւ, պարոն փաստաբան, եռանդեամբ պաշտպանէ զինքը, ձերմակերես ելլաս...: (ինքնիրեն) Խեղճ պարոն, նայէ՛ մէյ մը. կոմս մը, որ սերունդ է վեհաշուք գերդաստանի մը...: (Արմանտին) Բարեկամդ աղէկ յաճախորդ մ'ունի:

Արմանտ. — Ո՛հ, բախտաւոր փաստաբան մ'է:
Մարտիկ. — Աղէկ միաքո եկաւ, դեռ չմեկնած՝
ամսականդ տամ քեզի. արդէն ամսուն վեր-
ջը հասած ենք... և շրերը ցածցած պիտի
ըլլան...

Արմանտ. — Յամբած ալ են:
Մարտիկ. — Կեցիր, դրամը հաշուեմ հիմայ
քեզի. (կաշիե քսակ մը կը ձակե և նաշուե-
լու կ'երթայ սպակողըն սեղանի մը վրայ):
Հեկրիկ (Արմանտին մտեկնարով և ցած ձայնով).

— Պարոն Արմանտ, իր միակ ուրախութիւ-
նը, միակ յոյսն էս. կ'ողաչեմ, մի՛ ոչընչա-
ցնէր իր երջանկութեան երազները:

Արմանտ (յուզուած). — Ի՞նչ, կը կարծես որ...
Հեկրիկ. — Լո՛ւս կեցիր (Մարտիկը մտաւնագոյց
ընկրով):

Մարտիկ (դաւնարով). — Ահաւասիկ գումարը.
հարիւր ֆրանք ոսկի, և յիսուն ֆրանք ալ
արծաթի մանրուք կը գտնուին այս գլանի-
կիս մէջ, որոնք մանր ծախքերու համար կա-
րելոր կ'ըլլան:

Արմանտ (դրամն ընդունելով). — Շնորհակալ
եմ, հայր իմ, շնորհակալ եմ:

Մարտիկ. — Հիմայ, որդեակ իմ, ողջագուրէ
զիս. (կը գրկուի):

Արմանտ. — Երթաս բարով, հա՛յր իմ... Եր-
թաս բարով, Հենրիկ:

Հեկրիկ. — Մնաս բարով, պարոն Արմանտ:

Մարտիկ. — Աշխատէ, և այնպիսի կերպով մը
կարգադրէ որ կարենաս գալ և մեր քով ան-
ցընել արձակուրդդ: Ես կ'երթամ, և Գէորգ
հօրեղջօրդ ալ այդպէս իմաց պիտի տամ:

Արմանտ. — Այո՛, այո՛, վտանհ եղէք:

Մարտիկ. — Ինքիրմէ՛ դուրս պիտի ելլէ ուրա-
խութենէն, երբ ի դարձիս ըսեմ իրեն՝ թէ

քիչ ատենէն նորէն պիտի տեսնես որդիս:
Յտետութիւն. յարգանքներս յայտնէ փաստա-
բան բարեկամիդ:

Արմանտ. — Շնորհակալութիւն անոր կողմա-
նէ. ցտետութիւն, բարի ճանապարհ, համբոյր-
ներս Գէորգ հօրեղջօրս:

Մարտիկ. — Կ'ուզէի աւելի երկար ժամանակ
քեզի հետ մնալ, բայց դուն գործ ունիս, ու-
սուցչապետները քեզի կը սպասեն... համբե-
րութիւն: Եկուր Հենրիկ, եկուր, չըլլայ թէ
մեր պատճառաւ ուշանայ: Բարի յաջողու-
թիւն, իսկոյն գրէ մեզի թէ քննութիւնդ ինչ-
պէս անցուցիր: Ուրիշ յանձնելիք չունիմ, ա-
հա կ'երթամ: Մնաս բարով, մնաս բարով.
(անգամ մ'ալ կը սեղմէ որդւոյն ձեռքը, և
Հեկրիկի հետ քաւորակեկ խորեկ դուրս կ'ել-
լէ. Արմանտ կ'ընկերէ իրենց. յետոյ կը դաւ-
նայ անտառակիկ ըստ կը կուտի՝ մտածուելու-
քի մէջ ընկրմամբ):

ՏԵՍԻՒ Ժ.

Արմանտ, Ֆեյիլիանոյ, յետոյ Ուրկես

Ֆեյիլիանոյ (տնակիկ դրամ վրայ երևնարով).
— Մեկնէ՛ր են: — (Արմանտի ուսիկ զարեկ-
րով) Գիտես որ հայրդ բարի մարդ մ'է:

Արմանտ. — Այո՛, և երբեմն երբեմն ինքզինքս
կը մեղադրեմ իր վտանհութենէն զեղծանելուս
համար:

Ֆեյիլիանոյ (տնակիկ մտեկնարով). — Եկուր,
գեղեցիկ Լեհացի, կրնաս մտենալ:

Ուրկես (մտեկնարով և քրքրաւոր խնայարով). —

Հա՛, հա՛... սքանչելի՛ գիւտ... և հայրդ կըլ-
լե՛ց... (Երկնցնէրով՝ ձեռքը) Օրհնած ըլլատ
առաքինի և միամիտ ծերունի:

Արմանտ (տնամտրեամբ). — Ուրե՛տա:

Ուրեւտ. — Իսկ այն պարզամիտը՝ որ չէր խօ-
սիր, բայց երկու աչքերը այնպէս դէմքիս վը-
րայ սեւեռած էր՝ որ վախ կ'ազդէր:

Արմանտ (շուրջ կերպով). — Անիկայ իմ հօրս
բարեկամներէն մէկուն որդին է, խեղճ որբ
մ'է՛ որ հայրս մեծցուց:

Ուրեւտ. — Շիշով ու այծի կաթով:

Արմանտ. — Է՛, զնա կ'ըսեմ՝ քեզի, մէկդի ձգէ
այդ անհամ կատակները:

Ուրեւտ. — Ա՛յտ աղուոր, կատակ կ'ընեմ՝ դու
կը բարկանաս. եթէ զիս հրաւիրեցիր խոժոռ
դէմքդ ցուցնելու համար՝ լաւագոյն էր զիս
տունս թողուիր:

Ֆէրիխանոյ. — Ստոյգ է, Ուրեւտ իրաւունք
ունի. Արմանտ, դուն ալ խնտա՛: (Կ'երկնցնէ.
ձեռքը՝ գոր Արմանտ կը սեղմէ. դրսէն ա-
ղաղակ):

Լարեկոյ (դրսէն). — Ասկից, այս կողմէն, պա-
րոններ:

Ֆէրիխանոյ. — Ո՛հ, ահաւաստիկ զուարճասէր
խումբը:

ՏԵՍԻ, ԺԱ.

Վ. Խարոնդ և Առաջիկները

Վ. Խարոնդ. — Արմանտ, բարեկամութեան իրա-
ւունքն ամենուն հաւասար է:

Ֆէրիխանոյ. — Կեցցեն ուրեմն, կեցցեն բոլորն
ալ, երթանք՝ վասն զի սաստիկ անօթի եմ:

Արմանտ. — Ուրեմն երթանք:

Ֆէրիխանոյ. — Երթանք. (կրգելով կը մեկնին):

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Հա՛ր, Մարտինի տան մէջ՝ զեանայարկ մը, որ պար-
տէզին վրայ կը նայի. Աջ կողմը՝ քովքնախ առաջին սրա-
հակին մէջ դուռ մը կայ, որ դէպի խոհանոց կը տանի,
խորը ձախակողմը՝ ուրիշ դուռ մը՝ որ նեղ ճամբու մը
վրայ կը բացուի, և դէպ ի մտան կը տանի. Գարձեալ
խորը մէջ տեղը՝ մեծ ապակեղէն դուռ մը: Աջակողմը
երկրորդ սրահակին առջեւ դարան մը, որուն վրայ հա-
մետ մը զետեղուած է: Աջ կողմը խոհանոցին դռնէն
անդին՝ սեղան մը՝ եօթը հոգոյ համար պատրաստուած.
սեղանը սիւսոցով ծածկուած է, վրան ալ անձնոցներ
և սպաններ: Տեսարանին առջեւի կողմը դէպ ի ձախ՝
աթոռներ և բոլորչի սեղանիկ մը. իսկ խորը դրան քով՝
զգետաակալ մը և ճօճանաւոր ժամացոյց մը: Ուրիշ դուռ
մ'ալ ձախակողմը առաջին սրահակին մէջ:

ՏԵՍԻ, Ա.

Գեորգ և Հենրիկ

Վարսագոյրը բացուելուն առեկ՝ Գեորգ ձա-
խակողմեան սեղանիկ վրայ՝ պնակի մը մէջ
պտուղ կը պատրաստէ: Հենրիկ ծաղիկ կը դնէ
կողովի մը մէջ: Ժամը շուրջ կը զարնէ:

Գեորգ (ժամացոյցիկ մտիկ ընելով). — Ժամը
չորսն է... և այս պարոնները դեռ չդարձան.
սիրտս կը նեղուի:

Գրդն. Թատր. 8.

Հևերիկ. — Իրաւացի չէ ըսածդ. հազիւ երկու օր է՝ որ Արմանտ փարիզէն դարձեր է, և բընական է թէ հայրը զինքը բարեկամներուն այցելութեան կը տանի, որոնք երեք տարի կ'ընէ զինքը չեն տեսած:

Գեորգ. — Այո՛, ըսելիք չկայ. ընտանիքէն առաջ՝ բարեկամները: Երէկ պիտի ցուցնէր պարտէզը... պատուաստները, նոր տնկած արմատները, ելակի տունկերը... ամբողջ տունը՝ մառանէն սկսեալ մինչև շտեմարանները... և դեռ ուրիշ չեմ գիտեր ինչ բաներ: Մարտին միշտ նիւթ մը կը գտնէ թոռնիկի հետ զբաղելու համար... Ասդին տո՛ր տանձը... իբրև թէ ես իրեն չափ իրաւունք չունեմ նայի: Վերջապէս այս կ'ըսեմ որ նենգութիւն մ'է զինքը անէն հեռու բռնելը՝ հետը միասին տանելով:

Հևերիկ (դարսնեկ տաննի պնակը ստնկոյլ և Գեորգիկ տալով). — Գիտե՛ս ինչ ընենք. տանը դուռը ներսէն կողպենք՝ որ դուրս չկարենայ ելլել... և հոս մեր քովը պահենք... մեր քովը միայն... ամբողջ օրը:

Գեորգ. — Այո՛... այո՛... այս կերպով Մարտին պիտի չկրնայ զինքը մեզմէ գողնալ հեռացնել. է՛հ, աղուոր խաղ մը պիտի ըլլայ, և արժանի է: Հայրը ուրախութենէն վեր վեր կը ցատքէ, վասն զի հիմայ փաստաբան որդի մ'ունի. կարծեմ որ եթէ կարենար՝ զանիկայ պիտի ուտէր... Անձնատէ՛ր:

Հևերիկ. — Ո՛հ, ահաւասիկ, ահաւասիկ, պարտէզը կը մտնեն, ձայներնին կը լսեմ:

Գեորգ. — Յուսամ թէ վերջապէս պիտի շնորհուի ինձի քիչ մը զինքը քովս բռնելու:

ՏԵՍԻՒԼ Բ.

Այրանտ, Մարտին և Առաջինները

Այրանտ (իր ձորը բազիկէն զատուելով). — Իմ սիրելի հօրեղբայրս. (կ'ողջագոչրէ):

Գեորգ. — Շատ ազնիւ ես, որ վերջապէս զիս ալ կը յիշես...

Մարտին. — Շուտ ըրէ՛, տըռտըռ, ուշ մնալ նուս համար մի՛ նեղորտիր:

Գեորգ. — Հինգ ժամ է որ դուրսն էք, հինգ ժամ... ներէ՛ թէ որ քիչ է:

Այրանտ. — Յանցանքը հօրս է, ես ամէն վայրկեան կը փութացնէի զինքը տուն դառնալու:

Գեորգ. — Այնպէս է, իրենն է. կը կարծես որ հայրդ գուրիշնէ՞րն ալ պիտի մտածէ, անիկայ անձնասէր ծեր մ'է: Եկուր հանգչէ՛, հոս նըստէ՛, զաւակս:

Հևերիկ (սեղանը պատրաստելով). — Ժամանակն է, պարոն Արմանտ, որ քիչ մ'ալ հօրեղբորդ հետ ընկերութիւն ընես:

Գեորգ (քովը նստելով). — Վերջապէս իմ քովս ես:

Մարտին. — Պիտի տեսնէք հիմայ թէ ի՛նչպէս բոլորովին իրեն պիտի սեփականէ... շուտ ըրէ՛, շուտ, առ զինքը զրպանդ դիր:

Հևերիկ. — Հայրիկ, կարծեմ թէ բարեկամներու հետ տեսակցութիւննիդ չափէն աւելի քըչեց:

Մարտին. — Ի՞նչ կ'ուզես որ ընէի, ձագուկս. մէյմը մէկը, մէյմը միւսը. հարցումնին ետևէ ետև՝ վերջ չունէին. — և յետոյ նաւա

հանգստէն անցնելով՝ Տիւպուրկի նաւն ալ տեսանք: Այն ազնիւ բարեկամս այս իրիկուն առագաստները պիտի պարզէ մակընթացութեան ժամանակ ճամբայ ինկնալու. ինծի խօսք տուա գալու և ընթրիքնիս միասին ընելու:

Հէկրիկ (աշարիս). — Լա՛ւ, անձեռոց մ'աւելի կը գնեմ, ասիկայ անակնկալ մ'է:

Գեորգ (Արմանտիկ՝ որ մտածուան մէջ ղնկրում է). — Բայց խօսէ՛ նայիմ... բան մ'ըսէ: ... Կը տեսնուի որ գոհ չես մէջերնիս գտնուելուդ համար... հօրեղբորդ քովը:

Արմանտ. — Կրնա՞ք տարակուսիլ:

Գեորգ. — Քեզմէ գոհ չեմ, այն ատենէն ըսկըտեալ որ հոս ես՝ մտքով յափշտակուած՝ տըխուր կը կենաս... ի՞նչ է մտածութիւնդ:

Հէկրիկ (խայրիչ կերպով). — Կարելի է պարոն Արմանտը ֆարիզի վրայ կը մտածէ:

Արմանտ. — Է՛հ, ի՞նչ կ'ըսես դուն ալ:

Գեորգ. — Ո՛վ գիտէ ինչպէս ձանձրացած պիտի ըլլաս, որդեակ իմ, մինակ գտնուելով այն մեծղի քաղքին մէջ՝ զոր ես կ'ատեմ, որովհետեւ մեզի պէս խեղճերէ որդիներն և թողները կը յափշտակէ: Եթէ՛ դուն հոգ չունեննայիր շուտով դառնալու՝ պիտի մեռնէի:

Մարտիկ. — Նայէ՛ թէ ի՞նչ կ'ըսէ. ուրեմն կ'ուզէիր զինքը ծունկերովդ վրայ բռնել, որ հինցած կօշիկներուդ կպած՝ Օրէնսգիտութիւն սորվի:

Գեորգ. — Ի՛նչ ձանձրացուցիչ ես... Թող հայրդ ուզածը խօսի, բայց գիտցիր, թոռնիկս, որ աւելի քաղցր բան չկայ աշխարհիս վրայ, քան թէ...

Արմանտ. — Քան թէ՛ իր սիրելիներուն գորովանքը և հայրենի յարկը:

Մարտիկ (սեղանի նստելով). — Նայինք, տը-

տը՛ն, դուն որ անցեալին վրայ կը գանգըտիս — վասն զի Արմանտ մեզմէ հեռու ապրեցաւ երկար ատեն և հիմայ հոս է ահաւասիկ — մի՞թէ պիտի չպարծի՞ս երբ գան պարոն Արմանտ Մարտին փաստաբանը հարցընեն... և երբոր տունը լեցուած ըլլայ կնքուած ծրարներով, ու դատի թուղթերով ու դատ վարողներու բազմութեամբ, որոնք ասկէ պիտի չհեռանան՝ առանց կլորիկ կլորիկ դեզին ոսկիները շողացնելու:

Գեորգ. — Ստոյգ է, պիտի պարծիմ, երջանիկ պիտի ըլլամ:

Հէկրիկ (Մարտիկի քով գալով, և պնակ մը սրբելով). — Բայց ես կ'ուզեմ պարոն Արմանտին մտիկ ընելու երթալ՝ երբ իր առաջին դատը պիտի պաշտպանէ:

Գեորգ. — Ես ալ... երբ նոյն իսկ ստիպուիմ ամբողջ օրս Գատարանին մէջ անցընել և կերակուրը գրպանիս մէջ կրել:

Մարտիկ. — Այն օրը շատ մը խցաններ պիտի թոցընենք. կ'ուզեմ որ այն օրը... խենթութիւններ ընենք... (պարտեզիկ դրան գանգակը կը գարնուշի) Գուռը կը զարնեն... երթամ բանամ (եղիւրով), և դուն ալ գնա նայէ որ խորովածը չայրի:

Գեորգ. — Մի՛ վախնար՝ վտանգ չկայ:

Մարտիկ. — Ի՛նչ կ'ըլլայ, գնա մէյմը նայէ:

Գեորգ. — Բայց ի՞նչ տաղտկալի մարդ ես:

Մարտիկ (վեր նստելով Գեորգը). — Գնա՛ ուրեմն... Տէ՛ր Աստուած, ի՛նչ տեսակ մտածութիւն ունիս (նայելը ցածրընկելով):

Գեորգ. — Է՛, կ'երթամ, կ'երթամ. (խոնարհ կը մտնէ, Մարտիկ միևնույն դռնը կ'ընկերտ սևոր, և յետոյ կը մեկնի քրիկ տակիև երգելով):

ՏԵՍԻՒ, Գ.

Հեկրիկ և Այրմանտ

Այրմանտ (բորոշի սեղանին առջև նստած, ինքնիրեն)։ — Ի՞նչ ուրախութիւն այս համեստ հոգիներուն մէջ. ի՞նչպէս կ'ապրին իրենց երջանութեան վրայ վտտահ. և ես իրենց երջանիկ երազները պիտի ոչընչացընեմ... մէջ տեղ հանելով թէ... Ո՛հ, կը զգամ որ քաջութիւն պիտի չունենամ...

Հեկրիկ (մտնելալով)։ — Պարոն Արմանտ... մտիկ ըրէ ինծի... քանի մը խօսք ու շուտով, վասն զի կրնան վրայ հասնիլ, և կ'ուզեմ որ ոչ որ գիտնայ քեզի ըսելիքս։

Այրմանտ։ — Ի՞նչպէս խոսկած կ'երեւիս։

Հեկրիկ։ — Այն օրէն ի վեր, պարոն Արմանտ, որ այս տունը հասար, անդրադարձայ տիրութիւնդ։ Գուն այլ ևս այն չես՝ ինչ որ էիր առաջ. վերջապէս՝ ձանձրութիւն կը զգաս, կը գուշակեմ։

Այրմանտ։ — Հենրիկ...

Հեկրիկ։ — Ապահով եմ որ այլ ևս երջանիկ չես։ Հօրդ փափաքած ծրագիրները թերևս տանջանքիդ պատճառ են...

Այրմանտ։ — Միթէ կրնամ ենթադրել...

Հեկրիկ։ — Բան մ'ալ չեմ ենթադրեր. բայց եթէ որ և է նեղութեան մը մէջ ինկած ըլլատ, եթէ ձեռք զարկած մասնաճիւղդ քեզի հաճելի չէ, եթէ քեզի համար չէ այս տեսակ կեանքը, ինչ գիտնամ... և եթէ քաջութիւնդ կը պակտի համարձակութեամբ ծնողացդ գուր-

ցելու՝ մտածելով որ ցաւ պիտի զգան... ուրեմն ինծի հետ անկեղծ եղիր, ճշմարիտը յայտնէ, չեմ ուզեր որ քեզմէ այդպիսի սրտի ցաւ մը հասնի հօրդ... (Զեռքը կ'երկնցընէ ականք)։

Այրմանտ։ — Սիրտս սխալ կերպով դատեր ես, օր մը... գուցէ ամենաշուտ... պիտի յայտնեմ քեզի իմ կրած նեղութեանս պատճառը... և այն ատեն...

Մարտին (նկրակ)։ — Արմանտ, Արմանտ։
Հեկրիկ։ — Մէ՛կը... լուռ կեցիր։

ՏԵՍԻՒ, Գ.

Գեորգ՝ խոնակոցէն, Մարտին և Ֆելիչիանոյ՝ պարսեղէն կը մտնեն, և Առաջիկաները

Մարտին (մտնելով)։ — Արմանտ, ահա բարեկամդ, փաստաբանը։

Այրմանտ։ — Ֆելիչիանոյ։

Ֆելիչիանոյ։ — Արմանտ. (ընդ առաջ կը փութայ և ձեռքը կը սեղմէ) Ո՛հ, բարեկամս, սրջափ ուրախ եմ գքեզ նորէն տեսնելուս համար։

Այրմանտ։ — Գուն չ'աւր եկած ես, է՛րբ հասար։
Ֆելիչիանոյ։ — Հագիւ թէ հասայ՝ առաջին մը տածութիւնս եղաւ գալ և ընտանիքդ ողջունել։

Մարտին։ — Բարի եկար, ազնիւ երիտասարդ, որդույս բարեկամները մեր բարեկամներն են։

Գեորգ։ — Որչափ ալ տուներնիս մեծ չէ, բայց միշտ իրենց համար տեղ ունինք։

Ֆելիչիանոյ։ — Բիւր շնորհակալութիւն։ —

(Հներթիկին դառնարով) Եթէ չեմ սխալիր՝ քեզի հանդիպելու հաճոյքն ունեցած եմ:

Մարտին. — Չեմ սխալիր, չէ՞. փարիզ հանդիպեցաւ, ձեր գիւղական տան մէջ... տարի մը կ'ընէ... բայց ի՞նչպէս ալ կ'անցնի ժամանակը:

Գեորգ. — Ընդհակառակն ինծի շատ երկայն եկաւ:

Մարտին. — Գիտե՞ս ինչու համար. այս չաբաճճի տղուս պատճառաւ, որ արձակուրդին հոս գալու և գրեզ ողջագուրելու խօսք տուած էր, ու խօսքին մէջ պակսեցաւ:

Ֆէյլիխանոյ. — Ուսմունքը... քննութիւնները... մրցանքի ճառին պատրաստութիւնը...

Գեորգ. — Բայց հիմայ սպասելու ժամանակն անցած է. ինքն ալ քեզի պէս փաստաբան մ'է:

Ֆէյլիխանոյ. — Ինծի պէս... այո՞, ճիշտ է:

Մարտին (Գեորգիին). — Գաւաթ մը գինի հրամայուր մեզի...:

Գեորգ. — Ասկէ ետքը զմեզ ալ պիտի չթողուս, այնպէս չէ՞, Արմանտ. (խկրը և Հներթի դիպի դարանը կ'երրաւ շիշ մը մատերս և երեք գաւար բերելու համար, և կը գետեղեն զանունը ձախակողմի սեղանիկ վրայ):

Ալանտ. — Ո՛չ, բարի հօրեղբայրս, ո՛չ... գէթ կը յուսամ:

Մարտին. — Իսկ ես ապահով եմ: Հոս Հաւրի մէջ ծնար դուն, հոս շահեցայ ես իմ բազուկներովս, իմ ուտելովս սրչափ որ պէտք կար՝ զքեզ գիտուն մ'ընելու համար: Հաւրի մէջ պէտք ես ապահովցնել քու ապագայդ. քու փաստաբանութեանդ վկայագիրը շրջանակի մը մէջ՝ ապակոյ տակ դնել պիտի տամ և զանիկայ համետին քովը պիտի կախենք. (կը

ցուցնէ նաւեար Ֆէյլիխանոյի). որպէս զի ամէնքը գիտնան՝ որ դու քու բախտը աշխատութեամբը շինեցիր, ինչպէս ես իմինս, որովհետեւ ես համեստով սկսայ հաց վաստըրիլ, և նայեցէք որ չեմ ամբձնար խոստովանելու: Ֆէյլիխանոյ. — Կարելի բան է, պարոն Մարտին, դո՛ւն եղած ես...

Մարտին (նստելով և նստեցնելով Ֆէյլիխանուն). — Հաւրի նաւահանգստին բեռնակիր... այս ինքն... գործակատար (կը խնուայ): Շատ քրտինք թափեր եմ, շատ զոհողութիւններ ւրեր եմ այս տղաս մեծցընելու և մարդ մ'ընելու համար, և սեփական տուն մը ձեռք բերելու, ուր ձերութիւնս կարենամ անցընել ապահով վիճակի մը մէջ: Երբոր երեք ֆրանգ կը վաստկէի՝ երկուրը միայն ուտելիքի կը գործածէի, և երրորդը խնայողութեան զանձանակին մէջ կ'երթար: Բայց ունեցած ենք, այո՞, նաև գէշ վայրկեաններ ալ, սակայն կը մխիթարէր զիս այն մտածութիւնը թէ զաւակս լաւ կը սնանէր և կը տարնար ստընտուին տունը, որովհետև մայրը շուտով կորսընցնելու դժբաղդութիւնն ունեցաւ: Խրիկունը՝ երբ մեր տնակը կը մտնէինք՝ օրուան մէջ վաստըրկած դրամները կը հաշուէինք, և եթէ շահածնիս իւղոտ ելլէր՝ զո՞հ սրտով իրարու կը փարէինք և Աստուծոյ շնորհքով առաջ կ'երթայինք:

Ֆէյլիխանոյ. — Այդ բանը իրաւացի պարծանքի նիւթ է ձեզի. աշխատութեամբ ձեռք բերուած բախտ մը, համբերութեամբ... և համեստութեամբ... Ահաւասիկ ինչպէս որ մեր պապերը կը հասկընային:

Մարտին. — Եւ մեր պապերը տխմարներ չէին. — Գու կենանցդ, պարոն Ֆէյլիխանոյ: (Խշուս

քան ի շարժման վերջնական գառար պարզելով, որոնք Մարտինե և որոնք կը լինեն): Համը առ այս ոսկեգոյնը բնական է: քսան տարի կ'ընէ որ մեկնած է Մատերայէն... այն ատենը իմ ուսերու վրայ կրեցի, հիմայ ալ կը կրեմ (կը խոսէ) հոս ներս (խնամարով): հիմայ ծանր չէ: Ֆէրիխանոյ (ոտը կը կրէր): — Կատարեալ... ախորժեղի... Վոֆուր ասկէց աւելի պղծեց չունի:

Մարտինե. — Վոֆուր... սիվ է Վոֆուր:

Ֆէրիխանոյ. — Փարիզի պաշտօնակալ մը... նըշանաւոր պաշտօնակալ մը... որ շատ անգամ հացկերոյթ կու տայ իր ձեռքին տակ եղող ուսանողներուն:

Գեորգ. — Աղէկ միտքս ձգեցիր հացկերոյթը. յուսամ որ պարոնը պիտի չմերժէ մեզի մասնակցելու:

Մարտինե. — Որտիտ համը մէկտեղ պիտի առնենք... հիանալի վայրի հնդկահաւ մը, որ այս առտու առանց հրացանի սպաննեցի գաւիթիս մէջ:

Գեորգ. — Վազէ Հենրիկ, գնա՛ ելակ ժողովելու աղանդերի համար. ես ալ երթամ սանը նայելու: (Հենրիկ պարտեղ կ'երթայ):

Մարտինե. — Ես ալ մտան: Իսկ դուք, տղաք, ինչ որ կ'ուզէք ըրէք, նստեցէք, քաղցեք... շրջագայելու ելէք՝ եթէ կ'ուզէք, բաւական է միայն որ սեղանին գալու չուշանաք: Գեորգ, հնդկահաւին ուշադրութիւն դիր, ստիկաներու ազահութիւն մի ըներ:

Գեորգ. — Հանգիտ եղիր. բայց նախ պարտեղ երթամ աղցան ժողովելու. (պարտիզին դռնէն կ'երթէ, իսկ Մարտինե մտնուեց):

Այրմանտ. — Վերջապէս նորէն երեցար, ի՞նչ ըրիր նայինք վեց շաբաթէ վեր՝ որ Փարիզէն

մեկնեցար, առանց որ և է բան մ'ըսելու թէ որ պիտի երթայիր:

Ֆէրիխանոյ. — Ամէն բանէ առաջ մեր պարտատէրներէն խոյս տուի, սիրելիս:

Այրմանտ. — Կամաց...

Ֆէրիխանոյ. — Վայ թշուառութեանս, իրաւունք ունիս, մոռցեր էի:

Այրմանտ. — Ուրեմն ինչ որ կ'երեի՝ դուն զիտ ազնուաբար անոնց ճիրաններուն մէջ միայնակ ձգեցիր, այնպէս չէ:

Ֆէրիխանոյ. — Ապերախտ, դու կը զրպարտես զիտ, մինչդեռ ես հասարակաց փրկութիւնը մտածեցի:

Այրմանտ. — Գո՛ւն:

Ֆէրիխանոյ. — Սիրելի բարեկամ, մեծ վտանգներու մէջ կը ճանչցուին մեծ հոգիները:

Այրմանտ. — Կատակ մի ըներ, կ'աղաչեմ... սիրտս կեղեքուած է: Այս երեք օրերուս մէջ որ հոս եմ՝ տասը տարի աւելի ծերացայ:

Ֆէրիխանոյ. — Գորէ՛ մազերդ կը բուսնին:

Այրմանտ. — Երբէն կ'ըսեմ, դադրէ՛ այդ կատակի կերպէն՝ որ բնաւ չի վայրեր այս տանը մէջ, պարկեշտ ընտանեաց մը բնակած յարկին տակ, զոր կը տեսնես: Ահա երեք օր է՝ որ նեղուած ու յոգնած տեսնելով ինքզինքս ըրտեսներէ, ու բարսպաններէն և պարտատէրներէն հալածուած... ինքզինքս հոս Հաւր ձգեցի, որոշելով որ ամէն բան խոստովանիմ՝ հօրս: Բայց երբ տեսայ բարի ծերունին և սիրելի հօրեղբայրս՝ որ բազուկնին կ'երկնցնէին ինձի՝ ժպտելով, զիտ գգուանքներով և համբոյրներով շրջապատելու համար, ըսելով թէ բոլոր իրենց ուրախութիւնը և յոյսը իմ վրաս էր... իմ վրաս միայն դրած էին... ամբջնալէս գետինն անցայ՝ մտածելով

անցեալս, և քաջութիւն չունեցայ ամէն բան
ընելու:

Ֆեյիյիսանոյ. — Լաւ որ ըսած չես. կը վախ-
նայի որ խօսած ըլլաս...

Արմանտ. — Ի՞նչպէս:

Ֆեյիյիսանոյ. — Ինչո՞ւ խեղճ մարդիկը տխրե-
ցնես, երբ ամէն ինչ դեռ կրնայ դարմանուիլ:

Արմանտ. — Ո՞ր էր թէ կարելի ըլլար, Աս-
տուած իմ: Ո՞՞ խօսէ՛, Ֆէլիչիանոյ, խօսէ՛
չուտ, պատրաստ եմ որ և է զոհոգութիւն ու
քառութիւն ընելու, և եթէ պէտք ըլլայ՝
կեանքս ալ կորսնցնելու, որպէս զի իմ յան-
ցանքովս չ'ոչընչանայ այն երջանկութիւնը՝
որ չորս կողմս կ'երեւի այս տանը մէջ... և
իմիսներս յաւիտեանս չգիտնան թէ ի՞նչպէս
ես գէշ համապատասխաներ եմ իրենց բարու-
թեանը:

Ֆեյիյիսանոյ. — Լսու կեցիր քիչ մը դուն ալ,
այրական ոգի ունեցիր: (Չորս կողմը դիտե-
լեն վերջ, ոչ ձայնը ցածքընկելով) Կը յիշե՞ս
Դեմետր հօրեղբայրս, որուն վրայօք քանի
մ'անգամ խօսեր եմ քեզի, և որ կը բնակի
Պորկոնիայի խորը:

Արմանտ. — Այո՛, ի՞նչ կայ որ...

Ֆեյիյիսանոյ. — Իրեն զղեկէն կու գամ. քանի
մ'օրէն կը մեռնի, և ինծի կը թողու իր ամ-
բողջ ժառանգութիւնը:

Արմանտ. — Ո՞՞, իրա՞ւ. կատակը մէկզի թող
կ'աղաչեմ:

Ֆեյիյիսանոյ. — Բարեկամդ իմ... ես ինքզինքս
կը մեղադրեմ՝ որ այնչափ երկար ատեն այն-
պիսի յարգելի ծերունի ազգականս մոռցեր էի:

Արմանտ. — Քանի՞ տարեկան է:

Ֆեյիյիսանոյ. — Վաթսունըութը անցած է...
Վրան աւելցուր շնչարգելութիւնն, ազդերա-

ցաւը... — Բայց ի՞նչ դղեակ, ի՞նչ ազարակ-
ներ... Ի՞նչ կալուածներ, ինչպիսի՞ զիւղական
տուն և պարտէզ, ինչպիսի՞ անտառներ... Ո՞՞,
ապահով եղիր, անոնց ամենուն ալ զինը կը-
տրել պիտի տամ. գործակալին հետ յարմար-
ցուցած եմ արդէն, որ լաւ մարդ մ'է և այն
ծերուկէն այնպիսի քաղաքավարի կերպով կը
գողնայ՝ որ մարդուս հաճոյք կը բերէ:

Արմանտ. — Բայց լսուրջ կերպով կ'ըսես... այդ
ամբաւ հարստութեանց դո՞ւն տէր պիտի ըլ-
լաս, դո՞ւն կալուածատէր:

Ֆեյիյիսանոյ. — Ի՞նչ ըսեմ... աշխարհս այս-
պէս է: Բախտը չ'իմացներ իր գալուտտը, այլ
երբոր ուզէ կը հասնի. իսկ ես հիմայ անոր
գլխի մագերէն բռնած եմ, և ապահով եղիր
որ ձեռքէս չեմ փախցըններ:

Արմանտ. — Երա՞զ են:

Ֆեյիյիսանոյ. — Առ գլխարկդ և ինծի հետ ե-
կուր. այնքան ժամանակ կը բաւէ՝ որչափ
պէտք է սիկար մը ծխելու և նամակատուն եր-
թալու համար:

Արմանտ. — Ի՞նչ բանի համար:

Ֆեյիյիսանոյ. — Նայելու թէ արդեօք Դեմետրը
և կամ գործակալը բան մը գրած են:

Արմանտ. — Խե՞նթ ես ինչ ես:

Ֆեյիյիսանոյ. — Դարձեալ պէտք եւք քու վրայ
ալ մտածել, խեղճ բարեկամս. պէտք է ազդու
միջոցներ գտնել, որ խայտառակութեան մը
առջէն առնել կարենանք: Մէյմը որ տէր ըլ-
լամ՝ քեզի փոխ դրամ կու տամ՝ ամենակա-
րևոր պարտքերդ գոցելու համար, իսկ միա-
ցածին ալ կ'երաշխաւորեմ: Վերջապէս օձիքդ
կ'ազատես բոլորովին այն շանորդի Շարան-
ցոնէն, և անկէ վերջ ամէն բան յաջող ըն-
թացքով կ'երթայ:

Արմանտ (սեղևերով ակոր ձեռքը). — Ո՛հ բարե Ֆէլիչիանոյ, քեզի պարտական պիտի ըլլամ իմ փրկութիւնս... գիտնայիր թէ որչափ տանջուեցայ...

Ֆելիչիանոյ. — Կը գուշակէի...: Այն խեղճը՝ կ'ըսէի ինքնիրենս քեզի համար, պիտի կարծէ հիմայ որ զինքը մոռցած եմ, երթամ ուրեմն զինքն ապահովցնելու և քիչ մը բալասան դնելու իր վէրքերուն վրայ:

Արմանտ. — Շնորհակալ եմ, շնորհակալ եմ:

Մարտին (ներսէն). — Գէորգ, Հենրիկ:

Ֆելիչիանոյ. — Շուտ, թէ որ հայրը գտնո գտնէ՝ ալ ազատում չկայ: — (Ինքնիրեն, միևնչեւ Արմանտ կ'երթայ գլխարկն առնելու). Օդ առնելու պէտք կը զգամ, հոս առաքինութեան և բարոյականի այնպիսի բուրում մը կայ՝ որ գլուխս կը տանի: (Կը շտշի դէտ ներսէն Մարտինի ձայնը. երկուքը խորէն կը մեկնին):

ՏԵՍԻ, Ե.

Մարտին և Գեորգ

Մարտին (մատնէն գալով՝ սուպատ մը շիշեր ձեռքը. կ'երթայ դէպ ի խոնակոցին դռքը) Գէորգ... Ի՛նչ կ'ընես... Տէ՛ր Աստուած. Տիւ պուրկ վայրկեանէ մը հոս պիտի ըլլայ, պէտք է որ ամէն բան պատրաստ ըլլար. մեկնելու օրն է, սպասել չի կրնար:

Գեորգ (նեղ ակցքէն դռքս ելլելով). — Է՛հ, հոգ մ'ընէր, ես հոս եմ. այնպէս կը խօսիս՝ որ կարծես թէ տուներնիս բռնկած կ'այրի:

Մարտին. — Ո՛ւր գնացեր էիր:

Գեորգ. — Պզտիկ դրան զարնուիլը լսեցի և դուռը բանալու գնացի: Պարոն մը եկեր է՝ որ քեզի հետ առանձին կ'ուզէ խօսիլ:

Մարտին. — Պզտիկ դուռը. այդ կողմէն մարդ չէր գար. անշուշտ օտարական մը պիտի ըլլայ, որ տանը դուռը սխալեր է:

Գեորգ. — Ո՛չ, կ'ըսեմ քեզի. Մարտին Պապայի անունն հարցուց. և կարծեմ թէ քեզմէ գատ ուրիշ մէկը չկայ այդ անունը կրող:

Մարտին (վար դնելով կողովը). — Տեսնե՛ք ո՛վ է. ներս հրամցուր:

Գեորգ (դէպ ի դռնակը). — Դերս հրամէ, պարոն, ներս հրամէ. (Շարակցուն ներս կը մտնէ և կ'ողջունէ):

Մարտին. — Պարոն...

Գեորգ. — Արդեօք ի՛նչ պիտի ուզէ քեզմէ...

Մարտին. — Ո՛ւհ, զինքը չեմ ճանչնար, չեմ գիտեր ի՛նչ կրնայ ուզել: Գուց խոհանոց գնայ, և հնդկահաւին ուշագրութիւն դիր որ չայրի: Գեորգ (կը մեկնի՝ Շարակցունը դիտելով):

ՏԵՍԻ, Զ.

Շարակցուն և Մարտին

Շարակցուն (ըստընոյնը). — Պարոն Մարտինն է՝ որուն հետ պատիւ ունիմ խօսելու:

Մարտին. — Ճիշտ... Ի՛նչ բանով կրնամ քեզի ծառայութիւն ընել:

Շարակցուն. — Պարոն, քեզի եկած եմ՝ այս քաղաքիս մէջ ունեցած բարի համբաւէդ խրատ ստուած. և եկած եմ նպատակի մը համար:

Մարտին (ողտնելով) . — Պարոն . (ինքնիրեն)
Արդեօք զիս քաղաքապետութեան խորհրդոյ
անդամ կ'ուզեն անուանել :

Շարակցուն . — Որդւոյդ վրայօք է խնդիրս :

Մարտին . — Իմ որդւոյս . . . (ինքնիրեն) . Ան-
շուշտ յաճախորդ մը պիտի ըլլայ , ե՛նչ բախտ :

Շարակցուն . — Փարիզ հոյակապ քաղաք մ'է ,
ըսելիք չկայ . . . ազնուական և գիտնական աշ-
խարհին մայրաքաղաքն է . . . բայց միանգա-
մայն անդունդ մ'է , հրաբուխ մ'է՛ որ ամէն
կեանք և երջանկութիւն այնպիսի արագու-
թեամբ մը կը լափէ , որ . . .

Մարտին . — Ներեցէք . . . բայց չեմ հասկընար
Փարիզ ինչ կապ կրնայ ունենալ . . .

Շարակցուն . — Որդւոյդ հետ . . . է՛հ , պարոն . . .
երիտասարդութիւնը կ'ուզէ իր ցանկութեանց
կատարումը . . . կեանքը հրապուրիչ բայց ան-
ցողական երևոյթ մը միայն ունի երիտասարդ
հասակին . . . և իրենք այս երևոյթը կ'ուզեն
վայելել . . .

Մարտին . — Թող կախելու զիս տանին՝ թէ որ
ըսածներէդ բան մը հասկըցայ :

Շարակցուն . — Որդիդ շատ սիրուն պատանի
մ'է . . . օժտուած է բնատուր պարզեմբերով . . .
գեղեցիկ բարոյական ձիրքերով . . . շատ փայ-
լուն ձիրքերով . . . բայց . . . բախտ ունեցաւ որ
ինձի նման համեստի մը հանդիպեցաւ իր ըն-
թացքին մէջ , ապա թէ ոչ . . .

Մարտին . — Ի՞նչ ըսել կ'ուզես :

Շարակցուն . — Եթէ ինքը այն կողպատողներէն
մէկուն ձեռքն իյնար , որոնցմով աշխարհս
լեփ-լեցուն է , ըստր իր ժառանգութիւնը օ-
ղը պիտի ելլէր :

Մարտին . — Ըլլալով բան է :

Շարակցուն . — Մի կասկածիր . ես համեստ ըն-

տանիքի մը ստացուածներով հարստանալու
փափաքող մարդ չեմ , յիսուն հազար ֆրան-
գով խնդիրը կը լմընայ :

Մարտին . — Յիսուն հազար ֆրանգ . . . իմ որ-
դիս յիսուն հազար ֆրանգ պա՞րտք ունի :

Շարակցուն . — Թերևս քիչ մ'ալ աւելի , առանց
շահերն ու ծախքերն հաշուելու . բայց հաշիւ-
ները հանգստեամբ կարգի կը դնենք : Իսկ ե-
թէ գումարը շատ մեծ կ'երևնայ քեզի՝ մէկ
անգամով պատրաստ հատուցանելու , լաւ ,
փափաքած յապաղումդ քեզի կը շնորհեմ :

Մարտին . — Բայց կարելի բան չէ . սխալ մը
պիտի ըլլայ . . . Ի՛նչպէս իմ որդիս պարտք
կրնայ ունենալ քեզի այդպիսի գումար մը .
ես անոր թոշակը , բնակութիւնը , զբերը , ա-
մէն բան կը վճարէի , և ամիսը քսան ֆրանգ
ալ կու տայի իրեն՝ մանր մունր ծախքերուն
համար :

Շարակցուն . — Ի՛հ , հորին մէջ կաթիլ մը ջուր :

Մարտին . — Յիսուն հազար ֆրանգ . բայց այդ-
չափ ի՞նչ բանի ծախած կրնայ ըլլալ :

Շարակցուն . — Հարցուցէք դերձակներուն , պան-
զոկապետներուն , ծխավաճառներուն , թա-
տրոններուն և կառապաններուն :

Մարտին . — Ո՛հ , ի՛նչ կը լսեմ :

Շարակցուն . — Ի՛հ , հիմակուան երիտասարդնե-
րը օղային կեանք մը կը վարեն , և ոսկին
ձեռքերնէն վար կը վազէ՛ ինչպէս ջուրն աղ-
բիւրէն :

Մարտին . — Ո՛հ , ո՛չ . . . դարձեալ կը պնդեմ որ
սխալմունք մ'է . . . ստախօտութիւն մ'է . . .

Ի՛նչ փաստեր ունիս ըսածիդ , ապացուցուր :
Շարակցուն . — Փաստերը գործակատարիս քովն
են . . . գեղեցիկ և օրինաւոր փոխանակագրեր ,
որոնք քեզի տարակուսելու տեղ չթողուն :

Մարտին. — Ո՛հ, բայց անզգամութիւն մ'է... անուանարկութիւն մը. (արուսի մը վրաս կ'իյնայ վնասով):

Շարակցուն. — Արի եղբւր, բարի պարոն, հանդարտ բռնէ սիրտդ, քիչ մ'աւելի փիլիսոսփայութիւն պէտք է. մտածէ որ միայն դուն չես այս տեսակ պարագաներու մէջ գտնուողը. կրնամ գրեզ վտահացընել որ ամէն օր կը տեսնեմ լացող հայրեր, որոնք կը զրկեն իրենքզիրենք՝ վճարելու համար որդւոց պարտքերը, և թէ...

Մարտին (բարկոտրեալաբար նոտք ելլելով և կոկորդիկն յռնելով). — Այ թշուառական, ուրեմն քու արուեստդ է վաշխառութիւնը:

Շարակցուն. — Զգէ՛ զիս... ձգէ՛, կը խղզես:

Մարտին. — Պէտք է խղզէի իրաւընէ: — (Յետոյ վարկտելով զինքը) Լաւ, գիտցիր ուրեմն որ պիտի չվճարեմ: Ի՞նչ. ես կեանքս քառասուն տարիներ մաշեցուցի ու հիմայ որդիս անպիտանին մէկն եղած ըլլալուն համար, պէ՛տք եմ իմ գրպանէս խեղճ դրամս վաշխառու աւագակի՞ մը գրպանը լեցընել:

Շարակցուն. — Պարոն, լեզուիդ չափ դիր:

Մարտին (կատարոտրեալաբար). — Դուն գիտէիր թէ հայր մ'ունի անիկայ... ո՛չ, պիտի չվճարեմ... պիտի չվճարեմ:

Շարակցուն. — Իրաւանցդ մէջն ես:

Մարտին. — Այո՛, իրաւանցս մէջն եմ, և զայն պիտի սկսիմ գործադրել՝ գրեզ հոսկէ դուրս վունտելով... ահա՛ դուռը... շոտ, դուրս ելիր:

Շարակցուն (ձայնը բարձրացնելով). — Ահ, ուրեմն կ'ուզէք հրապարակ հանել խայտառակութիւնը. այդ ալ կ'ըլլայ: (Մարտին կ'երթայ խոնակոցիկն դռար գոցելու) Ես ալ իրա-

ւունքներ ունիմ, ու գործադրել պիտի սկսիմ՝ քու զաւակդ բանտել տալով:

Մարտին. — Կամաց ըսէ՛... կամաց...

Շարակցուն. — Ես աւագակ եմ, հա՛... անօրէն եմ... բայց ի՞նչ անուն պիտի տար անոր՝ որ փոխ կ'անէ չհատուցանելու դիմամբ:

Մարտին. — Ախ, ինչպիսի՛ անպատուութիւն, ինչպիսի՛ անուանարկութիւն. ինչո՞ւ զիս հայր ըրիր, Աստուած իմ:

Շարակցուն. — Պարոն Մարտին, դուն պատուաւոր մարդ մ'ես... ամէնքը գիտեն... բայց ութ օրէն յետոյ Մարտին որդւոյն համար նոյնը պիտի չկրնայ ըսուի... ապահով եղիր ատոր վրայ:

Մարտին. — Պարոն... պարոն... մի՛ ըներ կ'աղաչեմ... ամօթէս գետին կ'անցնիմ... չեմ կրնար վատահամբաւութեան դիմանալ:

Շարակցուն (կեղծոտրեալաբար). — Ես բնաւ մէկու մը չարութիւն չեմ ուզեր... միայն տուած դրամս ետ ստանալ կ'ուզեմ:

Մարտին. — Ախ, անարժան զաւակ... դուն ես միայն մեր կործանման, մեր թշուառութեան պատճառը:

Շարակցուն. — Ի՛նչ, ինքը չէ միայն յանցաւորը... չար օրինակը... բարեկամները...

Մարտին. — Եւ սակայն լաւ բարեկամներ ալ ունէք:

Շիրակցուն. — Ո՞վ է նայինք... արդեօք Ֆէլիչիանոյ Լարոնը, անառակին մէկը՝ որ քու առջեւ ինքզինքը փատաբան մ'է կեղծեր:

Մարտին. — Ի՞նչպէս, զիս խաբած է... և եթէ այսպէս է՝ ուրեմն Արմանտն ալ...

Շարակցուն. — Քու որդիդ այնքան փատաբան է՝ որչափ որ ես եմ. հաւատա՛ ինձի, սրտանց կարեկից եմ քեզի:

Մարտին (գետին իյնարով ձախակորովի սեղանիկին քով)։ — Ո՛հ, աւագակ մ'է։

Շարանցուն (անոր ձեռքին մեջ դնելով իր հասցեկ)։ — Ահաւասիկ հասցէս, Փարիզի մէջ։ Մտածեցէք վրան. նայեցէք որ ժամանակին առաջն առնէք... փոխանակագրերը կանոնաւոր վիճակի մէջ են. շահերը ամէն օր կ'աճին... բայց ձեր հատուցանելու արամադրութիւնը բոլորովին զիս կը վստահացնէ։ Յարգանքներս։ Ձեր որոշմանը կը սպասեմ, որպէս զի ընելիքս գիտնամ։

Մարտին. — Այո՛... այո՛, պիտի գրեմ... ունեցածներս պիտի գոհեմ... լաւ է երակներս կըրորեմ, արիւնս թափեմ՝ քան թէ վատանուն հոչակուիմ։ Բայց զթա՛, ով պարոն, խոհեմութիւն ըրէ, որ չըլլայ թէ խօսք մը բերնէդ ելլէ մեր գծբախտութիւնը յայտնելու։

Շարանցուն. — Այդ մասին հանգիստ կեցիր։ Շատ գոհ եմ քեզի հետ ծանօթանալուս. սիրով ցտեսութիւն. (կ'երթայ գլխաւոր դռնէն դուրս եղևոր)։

Մարտին (գոցելով այն դուռը)։ — Ասկից... ասկից. (իրեն հետ դուռը կը քաշէ Շարանցունը քովընտի փոքրիկ դռնակէն)։

ՏԵՍԻԼ Է.

Հենրիկ, Տիւրպուրկ, յետոյ Գեորգ, յետոյ Մարտին և վերջը Արմանո

Հենրիկ (պարտեզէն)։ — Եկու՛ր, պարոն Տիւրպուրկ, ետե՛քս եկու՛ր, հայրեկոս տունն է։

Գեորգ (խոնավոցէն)։ — Բարե՛ւ, Նաւապէս,

բարե՛ւ, քիչ մը շփթած եմ. (պնակ մը աղջակ ձեռքը բռնած). բայց չնեղուի սիրտդ, հիմայ անմիջապէս սեղանի կը նստինք... վայրկենի մը գործ է... բոպէ մը նստէ։

Հենրիկ (օգնելով սեղանը պատրաստելու)։ — Բայց, ո՛ւր է հայրագիրս։

Տիւրպուրկ. — Այսպէս ուրեմն Մարտին կը պակսի իրեն ըրած ժամադրութեան։

Գեորգ. — Կը լսեմ որ նրբափողոցին դուռը կը գոցէ։ Պարոնի մ'ընկերելու գնացեր է, որ քիչ առաջ հոս իրեն հետ էր։

Հենրիկ. — Ո՞վ էր արգելք։

Գեորգ. — Ես ինչ գիտնամ։

Տիւրպուրկ (խնայարով)։ — Ա՛յ, ա՛յ... ինչ որ կ'երևի Մարտինն ալ իր գաղտնիքներն ունի։

Գեորգ. — Ո՛հ, գծբախտութիւն մը պիտի ըլլար՝ որ այնպիսի ձառագէտ մարդու մը հետ գաղտնիք ունենար։ — (Հենրիկի) Օգնէ ինձի, սանիկս, այս սեղանը առջեւ տանելու. (սեղանը քատրոնին մէջտեղը կը դնեն։ Մարտին կ'երևի)։

Տիւրպուրկ. — Առաջ եկու՛ր ուրեմն, բարեկամս, քայլերդ շտապէ։

Մարտին (մտնելով և ուրախօրիշև կեղծելով)։ — Ահաւասիկ եմ, բարեկամներս, ահաւասիկ։

Տիւրպուրկ. — Եկու՛ր մէյմը վերէն վար լաւ մը լուամ գքեզ, խաբեբայ։ Ինչ որ կը տեսնուի հրէջ մ'եմ՝ որ քու սիրելիներդ կը թըշուառացնես։

Մարտին. — Ինչ հանդիպեցաւ. ինչո՞ւ կը գանգատիս (ձեռքը սեղմելով)։

Գեորգ (մխտնապար հեռացնելով զինքը Տիւրպուրկէն)։ — Այո՛... այո՛... կեղծաւորութիւն կ'ընէ, վասն զի գուն ներկայ ես։ — (Մարտինի) Ո՞վ է այն պարոնը՝ որ այնչափ խորհրդամուր կերպով հետդ խօսեցաւ։

Մարտիկ (տազնուպերով)։ — Պարոն... պարոն մ'է։

Տիւրքերի (խնտարով)։ — Ա՛յ, ա՛յ... սեւ բիծեր կը սկսին երևան գալ... բարեկամ... նաւը վտանգի մէջ է, պէտք է առագաստները վար առնել։

Մարտիկ։ — Ա՛յ... ա՛յո՛, պարոն մ'է կ'ըսեմ՝ որ եկած էր գործերու համար... գործեր՝ ուրոնք...։ Սակայն քանի որ սեղանը պատրաստ է, կարծեմ կրնանք նստիլ... Գնա շուտ ապուրը բեր, կը կարծես որ Տիւրքերի առե՛ն ունի ժամանակ կորսնցնելու։

Գեորգ։ — Կ'երթամ, կ'երթամ։

Տիւրքերի (գլխարկը՝ խորը՝ զգեստակալին վրայ կախուշ կրքարով)։ — Իրաւ, ծովու մակընթացութիւնը կ'աճի կը բարձրանայ, հովը կը փչէ, և պէտք էր որ խարխուլը վերցուցած ըլլայի։ Բայց չուզեցի առանց վերջին անգամ մ'ալ ձեզի մնաս բարովս ըսելու՝ այնքան հեռուները մեկնիլ։

Մարտիկ։ — Իսկ Արմանտ... ս'եր է, ի՞նչ կ'ընէ, արդեօք մեկնեցա՞ւ։

Հեկորի (կանչելով)։ — Պարոն Արմանտ, եկու՛ր, հայրդ գրեզ կ'ուզէ։

Արմանտ (գուարրուրեալով մտնելով)։ — Ահաւասիկ եմ։ (Տիւրքերի տեսնելով Ո՛հ ներէ՛, պարոն Տիւրքերի, որ հոս չէի գրեզ ընդունելու համար։ Բարեկամ մը, ընկերակից մը... Փարիզէն հասնելով՝ զիս իրեն հետ տարաւ՝ շուր հասած համալսարանի ընկեր մը բարեւելու։

Մարտիկ։ — Ի՛նչ, ըսելիք չկայ, բնական է բարեկամները... բարեկամները ամէն բանէ առաջ։

Տիւրքերի։ — Ինչո՞ւ կը հեզնես զինքը, վասն զի սպասեցո՞ւց։ (Մարտիկի հետ կը խնտայ)։

Արմանտ (խնդրելով)։ — Ա՛հ, կը յուսամ որ հիմայ ամէն բան պիտի շտկէ այն խնդուկ Ֆէլիչանոյ բարեկամս։

Հեկորի (մտնելով)։ — Ի՛նչ որ կը տեսնեմ՝ բարեկամիդ ներկայութիւնը... քեզի զուարթութիւնդ վերադարձուցեր է։

Արմանտ։ — Հիմայ հանգիստ և անխռով եմ։ Գեորգ (մտնելով՝ ձեռքը սպորտի սխաւառակը)։ — Ահաւասիկ ապուրը. ուրեմն սեղան սկսինք. դո՛ւ, նաւապետ, հոս մէջտեղը. (կը սկսի ծառայել)։ Արմանտ, բարեկամդ պիտի չգա՞յ։

Արմանտ։ — Խնդրեմ՝ սկսինք՝ առանց իրեն ըստպատելու. մոռցուած կարևոր գործ մը ստիպեց զինքը մեկնիլ, բայց ազանդեբիս...

Մարտիկ։ — Դատ լաւ, շատ լաւ, թող հանգիստը նայի, երբոր գայ՝ լաւ կերպով կ'ընդունուի, և բան մ'ալ պիտի չկորսնցընէ ուշ մնացած ըլլալուն համար։

Տիւրքերի։ — Կը տեսնեմ, բարեկամ, որ ծովը մրրկոտ է։

Մարտիկ (խնդրելով շնորհակալ)։ — Ի՛նչ կ'ըսես. ընդհակառակն... ընդհակառակն։

Արմանտ (խնդրելով)։ — Արդեօք ի՛նչ ունի հայրս։

Տիւրքերի։ — Կը ցաւիմ որ քիչ առնէն պէտք եմ գձեզ թողուլ, բայց կը յուսամ որ յիշատակս պիտի մնայ ձեզի հետ, և թէ ձեր ընտանեկան հաւաքմանց մէջ՝ գէթ երբեմն երբեմն պիտի մտածէք ձեր Տիւրքերի բարեկամին վրայ։

Արմանտ։ — Հեռու տեղ կ'երթաք, նաւապետ։ Տիւրքերի։ — Աւստրալիա, անկէ աւելի մօտը չէ. հինգ ամսուան փոքրիկ ճամբորդութիւն մը, առանց ուրիշ բան տեսնելու՝ բայց միայն երկինք ու ջուր։ Ա՛յն վաճառատունը որ վար-

ձու բունեց նաւօ, իր ունեցած ամբողջ ապրանքը վրան բեռցուցած է, որ եթէ կարենամ Հար դառնալ առանց դժբախտութեանց հանս գրպելու՝ պիտի կրկնապատկուի:

Հներիկ (տաք ելլելով ապուրի պեակները վեր գրկելու համար). — Մեր մաղթանքները պիտի ուղեկցին ձեզի՝ իբրև յաջողութեան հաւաստիք: (Մարտիկ գաւաթները կը լեցնէ. Հենրիկ սեղանին վրայ աղցանը կը դնէ, Գեորգ անդրանաչը կը ձրամղրէ):

Մարտիկ, — Տիւպուրկի կենդանութեան. բաժանիս զարնէք:

Տիւպուրկ. — Ձեր կենդանութեան, բարեկամք իմ. (կը զարնեն, և կը խմեն):

Մարտիկ (հակի վերջ). — Ահաւսիկ. գիտենք թէ ինչ վիճակի մէջ կը թողունք գիրար, բայց թէ ինչ վիճակի մէջ պիտի տեսնուինք նորէն՝ չի գիտցուիր:

Տիւպուրկ. — Յոյս ունենանք ապագային վրայ, ձախորդութեանց վրայ պէտք չէ մտածել:

Մարտիկ. — Այո, ապագան ... շատ անգամ մարդօ կ'աշխատի զայն ապահովցնելու, ու վերջը չարաբախտ օր մը... դրար:

Գեորգ. — Վերջ պիտի տան թէ չէ՞ այդ շարագուշակ յիմար խօսքերուդ:

Տիւպուրկ. — Իբարմէ բաժնուած ժամանակնիս միայն բարի յոյսի վրայ պէտք է խօսիլ:

Հներիկ. — Բայց ինչ ունիս, հայրիկ:

Տիւպուրկ. — Ամպի մը պէս զուարթ ես:

Գեորգ. — Իբրև կ'ըսեմ, այն պարոնին այցելութիւնը գրեթէ տակնուվրայ ըրաւ:

Այնմանա. — Ի՞նչ կ'ըսես, հայրս այցելութիւն մ'ընդունած է:

Գեորգ. — Այնպիսի մէկէ մը՝ որ չուզեց իր անունն ըսել, և երկուքը առանձին սենեակ մը քաշուեցան:

Այնմանա (ունանգատուրեալբ). — Ա՛հ:

Մարտիկ. — Մտիկ ըրէ, Տիւպուրկ. երկու հին բարեկամաց մէջ շատ երկայն խօսելու պէտք չկայ, մանաւանդ որ ժամանակը սուղ է, և դուն չուսով պիտի մեկնիս: Գուն լաւ գործ մը կրնաս ընել, և համեստ մարդու մը ծառայութիւն մ'ընել, մեր հին ընկերակիցներէն մէկուն:

Տիւպուրկ. — Եթէ կարելի բան մ'է՞ շատ սիրով, ինչո՞ւ չէ:

Մարտիկ. — Մորիստոնը միտքդ կու գայ:

Տիւպուրկ. — Անիկայ՝ որ Ֆէստան քաշուեցաւ, համեստօրէն ձեռք բերած փոքրիկ գրամագլխով մը... այո, շատ լաւ կը յիշեմ:

Մարտիկ. — Գիտցիր ուրեմն որ հիմայ անիկայ բոլորովին կործանած է:

Ա՛հնքը. — Կործանած է:

Տիւպուրկ. — Ա՛հ, ինչ կ'ըսես:

Մարտիկ. — Փառասիրութիւնը անոր ըզըզ գարձուց, ուզեց ուրիշ շատերուն պէս ընել, գրամով խաղալ...

Տիւպուրկ. — Թշուա՞նը...

Մարտիկ. — Եւ հիմայ պէտք է որ նորէն սկսի աշխատիլ՝ հացը շահելու համար, ինչպէս որ տառջ կ'ընէր:

Գեորգ. — Այո է այն գեղեցիկ լուրը՝ որ քեզի իմաց տալու եկան:

Մարտիկ. — ձիշտ ստիկայ:

Տիւպուրկ. — Իսկ իր որդի՞ն... որդի մ'ունէր ինքը:

Մարտիկ. — Այո, որդի մը... իր միակ յոյսը ... որդի մը, որ հօրմէն սաստիկ սիրուած էր:

Տիւպուրկ. — Ար գինքը փարիզ գրկեց օրէնս գիտութիւն սորվելու համար, ինչպէս դուն Արմանաը:

Մարտին. — Այո՞... և այդ որդին Հաւրի մէջ
կը գտնուի, առանց դրամի, առանց ապաւէն
մ'ունենալու... գործ մը կը փնտռէ ապրելու
համար... և հազած զգեստէն զատ բան մը
չունի:

Գեորգ. — Խեղճ տղայ:

Տիւրք. — Իսկ ես ի՞նչ կրնամ ընել իրեն:

Մարտին. — Զինքը նաւիդ մէջ առնել և հետդ
տանի:

Աւելորդ. — Ա՛հ, նաւով տանի՛լ:

Գեորգ. — Իրեն հետ տանի՛լ... բայց առաջարկդ
անզեղութիւն մ'է, Մարտին: Իսկ իրեն ըն-
տանիքը և իր հայրը կ'ազգէ՞ն որդին իրենցմէ
հեռացընել:

Մարտին. — Ինքն է որ կը փափագի, և մա-
նաւանդ թէ խնդրեց որ Տիւրքուրկին յանձն-
արարեմ: Տիւրքուրկ, դուն շատ անգամ ինձի
ըտեր ես որ եթէ հետդ գործունեայ և ուսեալ
պատանի մ'ունենայիր, որ կարենար քու գոր-
ծերուդ մէջ քեզի օգնել՝ երջանիկ պիտի ըլ-
լայիր. առ այդ խեղճ տղան: Կը պաղատիմ
քեզի իր ընտանեաց և իր հօրը կողմանէ, որ
հիմայ թշուառութեան մէջ ինչպէս է:

Գեորգ (ոտք կ'երկէ և կը գրկէ Արմանոսը. Հնե-
րիկ կը վերցնէ աղցանը և աղանդերը կը
նրանցրնէ) Ո՞հ Արմանտ, ո՞հ, ի՞նչպէս շնոր-
հակալ ըլլամ Աստուծոյ՝ որ զմեզ այդպիսի
փորձանքի չէ մատնած:

Տիւրքուրկ (Մարտինի ձեռքէն բռնելով). — Մար-
տին, ի՞նչ ունիս:

Մարտին. — Բան չկայ... բան չկայ. լուռ կե-
ցիր:

Հենրիկ (իւրիւրիւ). — Զեմ գիտեր ինչո՞ւ հա-
մար, բայց կը դողամ:

Գեորգ. — Բայց գովեստի արժանի է այն երի-

տասարդ որդին՝ իր ըրած զոհին համար. Ը-
րածը հիանալի բարեգործութիւն մ'է:

Մարտին. — Տիւրքուրկ, վրադ ունեցած վստա-
հութեամբս՝ քու սնուամբը խօսք տուի, կը
հաւանի՞ս, այնպէս չէ՞:

Տիւրքուրկ (ըիջ մը մտածելու կենալէ յետոյ).
— Բարեկամութիւնը իր պարագրերն ունի, և
եւ պիտի կատարեմ:

Մարտին (յուզումաբ սեղմելով Տիւրքուրկի ձեռ-
քերը). — Տիւրքուրկ, գիտցիր որ ըրածդ բա-
րեգործութիւն մ'է, և Աստուած ի նպատակ քե-
զի պիտի նշանակէ զայն:

Գեորգ. — Նաւապետ, այն ագնիւ տղուն հետ
զաւելիդ պէս վարուէ, կ'աղաչեմ իր հօր կող-
մէն:

Տիւրքուրկ. — Խօսք կու տամ:

Գեորգ. — Մարտին, միթէ ամէն բանէ զրկուած
ճամբայ պիտի ինկնայ այն խեղճ տղան...
Եկուր, Հենրիկ, ինձի օգնելու: Արմանտի
զգեստեղէններու դարանը լեցուն է Աստուծոյ
տուած բարեքներով և նոյն իսկ չափէն աւե-
լի է. դիւրաւ պիտի գտնենք խեղճ ճանապար-
հորդը հագուեցնելու նիւթեր: Հաճութիւն ու-
նի՞ս, Արմանտ:

Արմանտ. — Հարկ է որ հարցընես, տուէ՞ք,
տուէ՞ք: (Կը շաշի կաշի զանգալը):

Տիւրքուրկ. — Շո՞ւտ ըրէք, վասն զի ժամանակ
չկայ, նախ գանգակը դիտ կը կանչէ:

Մարտին (ոտք երկելով). — Վերջին գաւաթ մ'ալ
քու կենացդ, ագնուստիրտ բարեկամս:

Տիւրքուրկ. — Զեր կենաց, բարեկամներ: (Կը
զարնէն բաժակիկն և կը խմէ):

Գեորգ (եւ դառնալով). — Նաւապետ, երթաք
բարով. կ'աղաչեմ հօկեցէք այն խեղճ երիտա-
սարդին վրայ. (Գեորգ կ'ողջագործէ և կը մեկ-
նի):

Հերիկ (ցած ձայնով Տիշպուրիկի). — Ե՛ս ալ
զինքը քեզի կը յանձնեմ, նաւապետ:
Տիշպուրիկ. — Մնաք բարով, քնաք բարով, բա-
րեկամներս:
Ալեկըր. — Երթա՞ս բարով, նաւապետ, բարի
ձանապարհ, բարի յաջողութիւն. (Տիշպուրիկ
դուրս կ'երէ խորեկ՝ Մարտիկի հետ):

ՏԵՍԻԼ Ը.

Արևանտ, յետոյ Մարտիկ, յետոյ Ֆէլիչիանոյ

Արևանտ (մտածկոտ). — Ճճմարե՛տ են հօրս
բտածները... Մորիստոյ... այս անկարծելի
կործանումը... իր որդւոյն մեկնիւր... սիրտս
մահացու սարսուտ մը կը պատէ, և չեմ գի-
տեր ինչո՛ւ:

Մարտիկ (դեպի Արևանտ մտտեկարով՝ կը ճայի
սենը զսպռած բարկութեամբ մը):

Արևանտ. — Հայր... ի՞նչ ունիս:

Մարտիկ (դուրս հանելով Շարանցոնի ձաւակը).
— Նայէ՛, կը ճանչնաս այս անունը:

Արևանտ (կարդարով). — Շարանցոն:

Մարտիկ (վայրկեան մը յուշրեկ յետոյ). —
Կրնաս դուն արդեօք օրինագրքիդ մէջ գտնել
տիպոս մը, պատիժ մը քու ըրածիդ յարմար:

Արևանտ. — Ո՛հ, հայր իմ, աւելին մի՛ ըսեր,
խնայէ՛, սիրտս խորտակուած է:

Մարտիկ. — Յածցո՛ւր ձայնդ. մի՛ յափշտա-
կեր հօրեղբորմէդ իրեն մի՛ միակ միտիթարու-
թիւնը որով զքեզ համեստ մէկը կը կարծէ:
Հիմայ կը հասկընաս ուրեմն անոնց առջև
կեղծած դերս, և այն՝ ինչ որ հիմայ դուն
պէտք է ընես... մեկնէ՛:

Արևանտ. — Մեկնի՛ւ, թողու՛ զքեզ... հօրեղ-
բայրս... Հենրիկը...

Մարտիկ. — Մեր ծերութեան հացը կերար...

Արևանտ. — Արդարացումներ չունիմ, գիտեմ,
և ոչ ալ դուք պիտի հաւատաք ընելիք խոս-
տովներուս: Բայց կրնամ ես դարմանել ըրած
մըստս, և դուք բնաւ նեղուելու բան պիտի
չունենաք իմ անցելոյս համար: Այն բարե-
կամս՝ որ այս առտու հոս տեսար, քիչ ա-
տենէն...

Մարտիկ. — Անտակովթեանցը ընկերը...

Արևանտ. — Հարուստ է... շուտով պիտի հա-
րրտանայ, և իր առաջին մտածութիւնն ե-
ղաւ ինձի օգնութեան հասնիլ: Անեցած բո-
լոր պարագքերս պիտի վճարեմ... կ'երգնում,
հայր իմ, և նոյն իսկ այս վայրկենիս վա-
զեմ... (կշմարելով Ֆէլիչիանոն որ խորը կ'ե-
րևեայ) Ո՛հ, Ֆէլիչիանոյ, եկո՛ւր, եկո՛ւր հայրս
ապահովքընելու. ինքն ամէն բան գիտէ, տե-
տեր է Շարանցոնը...

Ֆէլիչիանոյ (գրռիւր կախած). — Ա՛խ...

Արևանտ. — Բայց ես իրեն ըսի քեզի համար
թէ անկեղծ բարեկամ մ'ունիմ, և թէ քիչ
ատենէն շնորհիւ կտակին...

Ֆէլիչիանոյ (նամակ մը ներկայացրեկով). —
Կարգա՛:

Արևանտ. — Ո՛հ, Աստուած իմ, ծեր հօրեղ-
բայրդ...

Ֆէլիչիանոյ. — Մեռած է:

Արևանտ. — Եւ ժողովութիւնը թողուցեր է...

Ֆէլիչիանոյ. — Իր գործակալին:

Արևանտ. — Կորսուեցանք:

Ֆէլիչիանոյ. — Ինչպիսի՛ թշուառութիւն:

Մարտիկ (աչքերը սևեղ վրակ սևեղած). —
Ահա թէ ինչպէս կը լմնցրեն այս պոռոտա-

խօս պարոնները... խաղամոլներ... անպիտաններ... դատարկապորտներ... կը ցաւիմ վրանիդ: Եւ այսպիսի տղաքները բանտի մը մէջ նետելը՝ հօր մը համար անիրաւութիւն պիտի համարուի: (Ֆարիշառներ) Կորսուեցէք ասկէջ. ինծի թողուցէք պաշտպանել այն հաւատարմութիւնն և բարի համբաւը՝ զոր ցելի մէջ խոթեցիք: (Ֆելիքիստոն) Քեզի կ'ըսեմ, պարոն փատաբան, զգուշացիր մէյմ'ալ ոտք կոխելու այս տանս մէջ:

Ֆելիքիստոն (ժողովարար յոչոքրեաւր մը). — Ա՛խ, պարոն, մեռել մը մի՛ նախատեր:

Մարտին. — Մեռել մը... քեզի բախտ մը պիտի ըլլար՝ թէ որ մեռած ըլլայիր:

Ֆելիքիստոն. — Վերջացնելու մօտ եմ կեանքիս մրրիկները:

Մարտին. — Այ յիմար գլուխ:

Ֆելիքիստոն. — Ինծի համար թողութիւն չեմ խնդրեր, չէ... բայց քիչ մը ներողամտութիւն՝ այս խեղճ տղուն համար, որուն միակ յանցանքն այն եղած է՝ որ Փարիզէն մեկնելէն առաջ Շարանցոնը չէ ստակեցուցած: Մնաս բարով, Արմանտ, իմ քաջ բարեկամս:

Արմանտ (տիրապիւն մտածումս մէջ՝ ձեռքը կը սեղմէ):

Ֆելիքիստոն (Մարտինի). — Այս իրիկուն ծովուն շուրջ բարձրացած ըլլալու է, նաւահանգրտին ծովափունքն ալ ամայի... և ես լողալ չեմ գիտեր... բայց աւելի կ'ուզեմ ընկրղմիլ ծովուն մէջ՝ քան պարտապաններու բանտերուն մէջ փտտիլ. (խորէն կը մեկնի):

Մարտին. — Բարի՛ ճանապարհ. ապահով եղիր որ ես զքեզ ազատելու պիտի չգամ: (Հեռուէն զանգակի ձայն մը կը լսուի):

ՏԵՍԻԼ Թ.

Գեորգ, Հեկիկի՛ պաշտպանով և Առաջինները

Գեորգ. — Տիւպուրկ կը մեկնի. չլսեցի՞ք զանգալը. անաւասիկ, Արմանտ, անա ինչ որ կըրցանք հաւաքել այն խեղճ տղուն համար... սիրտս կը զգածուի՛ իբր թէ իմ տղաս ըլլար...

Մարտին (ընդհատելով). — Արմանտ, դուն ալ պիտի երթաս անոր պայտուսալը տանելու: (Մարտին կը դառնայ Հեկիկի, որ իրեւրիկն րեքի կերպով մը կը զարնէ) Ի՞նչ կ'ուզես:

Հեկիկ (ցած ձայնով). — Ո՛հ, հայրիկ, ներէ՛ ինծի. ես հոն էի, ամէն բան լսեցի: Ա՛ն, ան ամբողջ ինծի վերաբերած դրամը... բայց զե՛մ, մի՛ թողուր որ երթայ...

Մարտին (ցած). — Ի՞նչ, զքեզ զրկե՛լ՝ որպէս զի... ո՛չ, ո՛չ, բնա՛ւ:

Գեորգ. — Ա՛հա պատրաստ է. ուրեմն Արմանտ, շուտ բրէ:

Արմանտ (նազիւ սանձել կրկնալով իր յուզումը). — Այո՛, այո՛:

Մարտին (խտտոքեալով). — Տիւպուրկին ըսէ՛ որ յոյս ունիմ իրեն խոստման վրայ:

Գեորգ. — Ըսէ՛ որ ամէն կըրպով իրեն խնամքին կը յանձնեմ մեր պաշտպանեալը:

Արմանտ. — Այո՛... այո՛...

Գեորգ. — Ինծի նայէ... այսպէս ողջագուրէ իմ կողմանէս այն թշուառ տղան. (կը գրկէ Արմանտը, որ գրռիւր կը դարձնէ յուզումները ծածկելու նախար):

Հևերիկ (արցունքները զուպելով և տարով գլխարկը)։ — Իմ կողմանէս ալ սեղմէ իր ձեռքը։ Արևմտա (առանց Գեորգիէն տեսնուելու՝ կը մտակնայ իր ձորը, և սևոր ձեռքը կը բռնէ նախընտրելու։ Մարտիկ ինքզինքը կը բռնադատէ և շուտով մը ձեռքը ետ կը քաշէ, և առանց խօսել կարենալու՝ նշան կ'ընէ Արևմտի մեղազանգելու։ զանգակի մը վերջին հարուածը կը բռնէ)։

ՏԵՍԻՒ Ժ.

Հևերիկ, Մարտիկ և Գեորգ

Գեորգ (Մարտիկի մտակնայով որ տխրաբան մէջ ընկողմած է, և սևոր ունեւուն շէնկով)։ — Մորիսոյի վրայ կը մտածես, այնպէս չէ՞. ես ալ նոյնպէս. պիտի տեսնէ՞ արդեօք իր որդին։

Մարտիկ (գրոշխը դնելով իր շարձուղիներով)։ — Աստուած ողորմած է, ինքը կը կարգադրէ ապագան։

Գեորգ. — Բայց ի՞նչ տարբերութիւն. մինչդեռ մենք հանգիստ ու երջանիկ պիտի ըլլանք, այն թշուառներուն յարկին տակ միայնութիւնը և տխրութիւնը պիտի տիրէ։

Մարտիկ. — Վատնե՛լ, ցրուե՛լ... սեփական ստացուածքը... ո՛հ, ամենամեծ յանցանք է։

Գեորգ. — Բայց երբ մէկն ուզէ համեստ ապրիլ, ամէն բանի կրնայ արիաբար դարման տանիլ։

Մարտիկ. — Այո՛, արիութեամբ, լաւ ըսիր... Եւ եթէ այդպիսի աղէտ մը իմ գլուխս եկած ըլլա՞ր։

Գեորգ. — Ինչո՞ք Մարտին, կարեկցութեամբ և համակամութեամբ պիտի ջանայինք զքեզ մը խիթարել։

Մարտիկ (կուրծքին վրայ սեղմելով Գեորգին ու Հևերիկը)։ — Մերելի և ազնիւ սրտեր, ուրեմն այս վայրկենէս սկսէ՞ք ձեր սիրոյ և զթութեան գործը։

Գեորգ. — Մարտին, ի՞նչ կ'ուզես ըսել... գոյնդ նետերս ես... կու լա՛ս... այո՛, արցունքներ աչքերէդ կը հոսին... բան մը կը ծածկես դու ինձմէ... կ'ուզեմ գիտնալ... խօսէ՛... միթէ Մորիսոյ...։

Մարտիկ. — Անոր տան մէջ երջանկութիւնը կը թագաւորէ, ս'վ Գեորգ, իսկ մերինին մէջ տխրութիւնը պիտի տիրէ։

Գեորգ. — Չեմ ըմբռներ ըսածդ... չեմ կրնար... ո՛հ, Աստուած իմ, չեմ ուզեր հասկընալ ըսածդ։

Մարտիկ. — Գէորգ, զքեզ խաբէցի... ես եմ որ ինքզինքս ցնորական վաստակներու մատնեցի, և անպատուութենէ ազատելու համար՝ պէտք եմ ամէն ունեցածներէս զրկուիլ։

Գեորգ. — Գո՛ւն... (տնայնաբանա՛մբ) Ա՛հ, ուրեմն ի՞նքն է... (ընդամենը ինքուրեք մը) իմ Արմանտոս է...։

Մարտիկ. — Ինքն է որ մեկնեցաւ։ (Գեորգ կ'ուզէ վագել, ծուկկերը կը դուրսն և նուազած կ'իջնայ Մարտիկի բազկի վրայ)։ Հևերիկ գետին կ'իջնայ ձեռքով)։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Հաւրի ծովեզերքին մէկ մասը. աջակողմը Բրիտանիա պանդոկին սրճարանը, ձախակողմը տուն մը՝ որ փոզոցի մ'անկիւնը կը ձեացնէ:

ՏԵՍԻՒ Ա.

Լորենցոյ, Ֆելիչիանոյ՝ շոգեկաւարի պաշտօնէի տարագոյլ, քեփն վրայ պգտիկ վերաբերու մը, ներս կը մտնէ՝ մերանաղձոտ կերպով երգելով:

Լորենցոյ. — Ա՛հ, պարոն Ֆելիչիանոյ, դուն հոս Հանր եկած ես:

Ֆելիչիանոյ. — Լորենցոյ, բարեւ քեզ:

Լորենցոյ. — Ե՞րբ հասար:

Ֆելիչիանոյ. — Այս առտուան ձեզընթացով:

Լորենցոյ. — Ուրեմն շոգեկաւարը սովորականէն առաջ հասած է:

Ֆելիչիանոյ. — Մանաւանդ թէ ուշ մնացինք: Այս գիշեր տասը վայրկեան կորսընցուցինք Տիւսվիլի մէջ՝ Ֆէսանի ճանապարհորդներն առնելու համար:

Լորենցոյ. — Իսկ դուն աղէ՞կ ես միշտ:

Ֆելիչիանոյ. — Շատ աղէկ... բայց քիչ մը յոգնած:

Լորենցոյ. — Կը հաւտամ: Երկաթուղւոյն վրայ պաշտօնաւորի մը գործը պարապորդ մարդու մը գործ չէ:

Ֆելիչիանոյ. — Քեզի յարմար գործ մը չէ՞ ուրովհետեւ աշխատելու կամք չունիս, և ծուլութիւն ընելու համար՝ սենեկապանութիւն կ'ընես, որպէս զի քիչ աշխատիս, ինչպէս երբ մեր ծառայութեան մէջ եղած ատենդ կ'ընէիր:

Լորենցոյ. — Այն ատեն ես խիղճ չունէի, ո՛չ, խիղճ չունէի. բայց հիմայ անոր պատիժը կը կրեմ, կը հաւատա՞ս ինձի: Ուրեմն ի՞նչ կը հրամես, սո՛ւրճ մը, փո՛նջ մը, գաւաթ մը իր սի՛ր արդեօք...

Ֆելիչիանոյ (նստելով). — Գաւաթ մը զարեւջուր և սիկար մը:

Լորենցոյ. — Խմորեղէններ ունինք, հատը յիտուն հարիւրչէք:

Ֆելիչիանոյ. — Կը ձանձրացնես զիս, մէկ հարիւրչէքնոց սիկար մը տուր:

Լորենցոյ. — Հինգ հարիւրչէքնոց սիկար ալ ունիմ, կ'ուզե՞ս:

Ֆելիչիանոյ. — Մէկ հարիւրչէքնոց ըսի քեզի: Այս անբանն ալ ինձի ամենասուղ բաներ առաջարկելու մոլութիւնն ունի:

Լորենցոյ. — Պարոն, ուրիշ անգամ այդ տեսակ բաներ սովորութիւն ունէիր:

Ֆելիչիանոյ. — Այո՛, իրաւ է. բայց սովորութիւններն ստիպուեցան ինձմէն հեռանալու, ժամանակ մը կար՝ որ գնոյն չէի նայիր... բայց այսօրուան օրս հաշուի կ'առնեմ:

Լորենցոյ (խնդրաբար). — Ինչպիսի՞ յեղաշրջումն (կ'երբայ):

Ֆելիչիանոյ (օրագիրն աւելելով). — Ահա յո՞ւ վայիկն օրագիրը... առանց սիրտս նետելու՝ ձեռքս չեմ կրնար առնել. — Հասնող նաւեր.

— Տորիտ, Երեք բարեկամներ ... իմ ինչ հոգս... Իսկ գաղթականութիւններէն բնաւ հասնող նաւ չկայ, բնաւ:

Լորենցոյ (պետք եղածները բերելով) . — Ահա գարեջուրը և մէկ հարիւրէքնոց սիկարը: Է՞ն, կեանքը ստուգիւ անիւի ելեւէջ մ'է. մտածել որ երկու տարի առաջ շայլօրէն կը հագուէիր սգուէիր, մինչդեռ հիմայ համազգեստի վերարկու և գլխարկ կը կրես: Կը յիշե՞ս Օթէօյ լի մէջ ամարանոցը... հոն զեղխութեան օրեր կը սահէին, վարդագոյն կեանք մ'էր: Որո՞նք մտքէն կրնար անցնիլ՝ թէ օր մը Հաւրի մէջ պիտի հանդիպէինք իրարու, դու՝ շոգեկառաց երկրորդական պաշտօնեայ մը՝ յոյս ունենալով յառաջադիմելու, իսկ ես Բրիտանիա պանդօզիին ծառայ մը՝ սրճարանի մը կամ ճաշատան մը տէր ըլլալու սպասելով:

Ֆելիչիանոյ (տեղը դնելով օրագիրը) . — Ինծմէ գողցած գրամներովդ, անպիտան:

Լորենցոյ . — Իմ խնայողութեամբս, պարոն, աշխատութեանցս, հնարքներուս արդիւնքով: — Աղէկ միտքս եկաւ, հանգչելու չե՞ս երթար սենեակդ՝ հինգերորդ յարկին մէջ:

Ֆելիչիանոյ . — Այսօր չեմ կրնար: Մէկուն մը հետ խօսելիք ունիմ, որ անշուշտ քիչ ատենէն հոս կ'ըլլայ:

Սրճարանէն ձայներ . — Մանչ, մանչ:

Լորենցոյ . — Ահաւասիկ, պատրաստ եմ. (կ'երբայ):

ՏԵՍԻԼ Բ.

Ֆելիչիանոյ, Հեւրիկ, որ խորեկ կու գայ աւապարանքով՝ ձեռքը երաժշտական խաղերու գլանիկ մը, վայրկեան մը կանգ կ'առնէ՝ չորս կողմը նայելով:

Ֆելիչիանոյ (ընդ առաջ վազելով) . — Շնորհակալ եմ, Հեւրիկ, որ զիս չես մոռցած. ինծի հետ ազնուութեամբ կը վարուիս:

Հեւրիկ . — Միշտ կը վախեմ որ հայրագիրս տեսնէ քեզի հետ խօսիլս:

Ֆելիչիանոյ . — Մի վախեր, ինքը պէտք է դեռ կայարանն ըլլայ՝ բեռերը կապելու համար: Խեղճ ծեր, որոշ գիտեմ որ ինծի դէմ միշտ հակակրօութիւն մ'ունի, որուն արժանի ալ եմ: Այս տանս մէջ սենեակ մը վարձեցի՝ որ իրեն մօտենալու և հետը խօսելու առիթ ունենամ, բայց երբ կը տեսնեմ քարայտակին վրայ կանգ առնելով՝ անոր իր համետին վերայ հանգչիլը և քրտնաթոր ճակատը սրբելը, կը դողամ ու յանցաւորի մը պէս կը փախչիմ: Հաւատա՛ ըսածիս՝ որ արեանս կէտը կու տայի՝ իրեն ձեռքը սեղմել կարենալու համար: Հեւրիկ . — Գոհ եղիր աւ այժմ իմս սեղմելով: Այն սէրը՝ զոր բացակայ Արմանտին վրայ կը ցուցնես՝ զիս կը պարտաւորէ եղբօր մը պէս սիրելու գրեզ:

Ֆելիչիանոյ . — Ուրեմն, վերջին ճամբորդութեանս ատեն լուր մ'ունեցար իր վրայօք, իրմէ նամակ առիւր:

Հեւրիկ . — Բնաւ, իսկ դո՞ւն:

Ֆելիչիանոյ. — Ես ալ չառի:

Հենրիկ. — Ի՞նչ պիտի ըլլայ արդեօք այս մըւտակայ լուսթեան պատճառը:

Ֆելիչիանոյ. — Կարելի է անցած գնացած բաներէն վերջ՝ Արմանտ իր հօրը բան մը գրելու չի համարձակիր:

Հենրիկ. — Այէ՛կ՝ իր հօրը, բայց քեզի՞, ինձի՞. ես այնպիսի մէկը չեմ որ վախ կարենամ ազդել իր վրայ:

Ֆելիչիանոյ. — Տիւպուրկ նաւապետը ձեզի իմացուցեր էր՝ որ խաղաղ նաւահանգիստ հասեր է:

Հենրիկ. — ձիւտ է, բայց անկէց վերջ վեց ամիսներ անցան:

Ֆելիչիանոյ. — Գրած ալ էր՝ որ Արմանտ գովելի ընթացքի մէջ կը գտնուի:

Հենրիկ. — Վէց ամիս... և անկէ ի վեր... և ոչ իսկ տող մը՝ ոչ Արմանտէն և ոչ հաւապետէն. կը վախեմ որ դժբախտութիւն մը հանդիպած ըլլայ: Հայրագիրս վախս կ'անդրադառնայ և կը ջանայ զիս վտահազրնել, բայց իր սրտին խորը ինձի հաւասար ինքն ալ կը տանջուի... և գիտեմ որ քու սիրտդ ալ հանգիստ չէ, այնպէս չէ՞:

Ֆելիչիանոյ. — Աւելորդ կասկածներ են, պէտք չէ միշտ չարը մտածել. անշուշտ Հաւր դառնալու ճամբուն վրայ են, և պէտք ես գիտնալ որ բաց ծովուն վրայ այնչափ դիւրին չէ նամակատուիք գտնել: Ո՛վ գիտէ թէ ժամանակու հոն ալ տուփեր չգետեղուին, բայց հիմկու հիմայ միայն հեռագրի թելն է՝ որ յանձնարարութիւնները կը տանի: Ուրեմն գուր տեղ ինքզինքդ մի՛ տանջեր: — Աւաւտ մը աւոր ցամաք ելլելը պիտի տեսնես ողջառողջ, քաջառոյգ, և ամէն մէկ գրպանը մէյմէկ միլիոնով լեցուն:

Հենրիկ (գրուխը կրկնցնելով). — Միլիոններ... ո՛հ, երազներ:

Ֆելիչիանոյ (զուարթութեամբ). — Արեգական պէս պայծառ ճշմարտութիւններ են ըսածներս. միթէ ամէնքը միլիոններ չէ՞ն վաստակիր. արդէն ասոր համար ստեղծուած է Աւստրալիան:

Հենրիկ. — Աստուած լսէ՞ ձայնդ: Գոհ պիտի ըլլայի եթէ Արմանտ կարենար՝ որ մը դարմանել ըրած վնասը: Խեղճ հայրագիրս՝ այնչափ երկար ատեն աշխատելէ վերջ, որ իր ծերութեան օրերուն քիչ մը բարեկեցիկ և հանգիստ ապրէր, հիմայ ընդհակառակն հազար զրկումներ և յոգնութիւններ կրելու բռնադատուած... ո՛հ, խեղճ ծերունոյ մը համար կարգէ դուրս ցաւալի բան մ'է:

Ֆելիչիանոյ. — Քեզի գանք, դասատուութիւններէդ ի՞նչ պտուղ կը քաղես:

Հենրիկ. — Գեշ չէ. Աստուծմէ տրուած քիչ մը հանճարս օգտակար ընելու կը ջանամ. կարելոյն չափ օգտակար ըլլալու կ'աշխատիմ անոնց՝ որ զիս իրենց որդւոյն պէս սնուցին, և այս կողմանէ գէթ հանգիստ եմ:

Ֆելիչիանոյ. — Աւելի՛ լաւ. շատ ուրախ եմ:

Հենրիկ. — Բայց երբ ազատ ժամանակ մ'ունենամ՝ կ'երթամ նաւահանգիստ՝ նաւերուն մտնելը տեսնելու համար, և կը յուսամ...

Ֆելիչիանոյ. — Նկարուռն նաւուն հասնիլը տեսնելու, այնպէս չէ՞: Բայց զքեզ խօսքի բռնելու լաւ չէ, գնա՛ ուրեմն, և բարի՛ յաջողութիւն: Ես ալ Տիւշամէլ վահառատան տէրերուն քով պիտի երթամ, որոնք Նկարուռնը բռնաւորեցին, և եթէ հոն աղէկ լուր մ'ըլլայ՝ քեզի պիտի սպասեմ, որպէս զի ի դարձիդ հաղորդեմ:

Հենրիկ (ձեռքը սեղմելով). — Ո՛րչափ բարի ես.

ցտեսութիւն, պարոն Ֆէլիշիանոյ: Հիմայ դաս մը տալու կ'երթամ, յետոյ կու գամ: Խօսք տուած եմ հայրագրիս՝ որ կերակուրի ատեն հոս գամ: Խնդիրը՝ անակնկալ մ'ընելու վրայ է, գոր յարմարցուցեր ենք. ցտեսութիւն ... քեզի ալ բարեյաջողութիւն կը մաղթեմ. (կը մեկնի):

Ֆէլիշիանոյ (նայեացրոյ ընկերերոյ լսնոր). — Էրթամ բարով, երթամ բարով: — Այս տղան ճշմարիտ գանձ մ'է... գէթ սիրտ ունի: Իսկ այն անբան Արմանտը տող մ'ալ չի գրեր իւրեն, ո՛հ, կը կատկածիմ դժբախտաբար որ նաև հոն ալ անմտութիւններ մը գործած չըլլայ. (կը իսկ գարեջուրը և սիկարը կը վառէ):

ՏԵՍԻՒ Գ.

Ֆէլիշիանոյ և Շարակցուն

Շարակցուն (ձեռքերուն մեջ ձաւկորդորքեան պարիերոյ և ստուարարուդրերոյ. Լտեհեկ կու գաւն թեւեակիրենր՝ որունը իրեն կ'ուզեն ծառայել թեւեկուն առնելոյ). — Թողուցէք ինձի, բաներնի՛դ գնացէք... կրողը տանի զձեզ ... ես ինքս կրնամ բեռներս տանիլ...

Ֆէլիշիանոյ. — Ո՛հ, արդեօ՞ք... չէ... չեմ խաբուիր (յանկարծ գարնելոյ Շարակցունի ուսերուն):

Շարակցուն (քաւեակոյ). — Է՛, ո՛վ է. (ձանչևարով) Դո՛ւն, Ֆէլիշիանոյ:

Ֆէլիշիանոյ. — Շարանցո՛ն, այն աւազակը, որ...

Շարակցուն. — Ներէ՛, պարոն, բայց...

Ֆէլիշիանոյ. — Բայց ի՞նչ, հիմայ արդեօք համեօտ մարդ մ'եղեր ես:

Շարակցուն. — Լուսայափոխ մ'եմ, սիրելի պարոն:

Ֆէլիշիանոյ. — Ո՛հ, ըսելիք չկայ. ուրախակցեմ՝ ի պատիւ աշխարհիս անպիտաններուն...

Շարակցուն. — Իսկ այս կատակի կերպը՝ որուն ժամանակ մը կը համբերէի՛ երբ միասին շահու յարաբերութիւն ունէինք, հիմայ ա՛յլ ևս ինձի վայել չէ:

Ֆէլիշիանոյ. — Այ՛ո, հիմայ որ զիս փետտեցիր ու խաշած սագ մը դարձուցիր, այնպէս չէ՞... է՛հ, ըսէ՛ նայինք, ծեր կողորդիլոս, ի՞նչ գուճաղիպութեամբ շար կը գտնուիս, արդեօք նոր գողութիւն մը...

Շարակցուն. — Բաղնիքներու ժամանակն է, ա՛նոր համար եկած եմ, ինչպէս ուրիշ շատեր:

Ֆէլիշիանոյ. — Իսկ քու դրամներդ, որուն թողուցիր հոգալու:

Շարակցուն. — Շիտակն ըսե՛մ, այդ մասին ալ մտածելու բան չունիմ. ճշմարիտ բարեկամ մը գտայ՝ որ ինձի ընկերացու դրամատուն մը բանալու, և ես ալ իմ բոլոր հարստութիւնս իր ձեռքը յանձնեմ եմ, և միասին Ամերիկա պիտի երթանք՝ ամէն ձախորդութենէ ազատ ըլլալու համար:

Ֆէլիշիանոյ (նկղեակիւն). — Խոհե՛մ մարդու մը պէս գործեր ես:

Շարակցուն. — Այս ըսածէս կրնաս ուրեմն հասկընալ՝ որ անսահման վստահութիւն ունիմ անոր վրայ: Իսկ դու, խելաթամի, ի՞նչպէս կ'անցընես օրերդ: Դար մ'է որ չես տեսուիր բնաւ... Ֆէլիշիանոյ կը փնտրուի, բայց Ֆէլիշիանոյ աներևոյթ է:

- Ֆելիչիանոյ.** — Ես երկաթուղւոյն մէջն եմ:
Շարանցուն. — Երկաթուղւոյ Ընկերութեան շահակից ես:
Ֆելիչիանոյ. — Ողորմելի պաշտօնեայ մ'եմ, տարին հազար երկու հարիւր Ֆրանգաց թուշակով մը:
Շարանցուն. — Ստուգիւ, զգեստդ ալ կը ցուցնէ, ուշ չէի դրած... բայց աղէկ է, յարմարեր է քեզի. իսկ քու Արմանտ բարեկամդ:
Ֆելիչիանոյ. — Ուրիշ խաւարած աստղ մ'ալ... Աւտորալիա մեկնեցաւ:
Շարանցուն. — Իրա՛ւ, խեղճ տղայ:
Ֆելիչիանոյ. — Աղէկ կ'ըսես, խեղճ տղայ. այդ է քու մեռելաթաղի աղօթքդ:
Շարանցուն. — Իսկ իր հայրը՝ Վարտին Պապմն:
Ֆելիչիանոյ (ըսեւ իրենցով). — Ո՛հ, անոր վերայ չխօսինք... քու պատուոյդ համար: Մերկացած, կործանուած՝ որդւոյն ձեռքով և քեզ մով, ապրելու համար բռնադատուեցաւ նորէն շալակն առնել իր համետը: Տես... ահա հաւաստիկ... ինքն է որ կու գայ. նայէ թէ ինչ դարձուցեր ես Վարտին Պապմն:

ՏԵՍԻՒ Դ.

Վարտին և Առաջինները, յետոյ Լորենցոյ

Վարտին նաշանագատի բեռնակրաց զգեստով, և դժուարութեամբ կը տանի հաւնտին վրայ գետնորշած պաշտասկներ և կանխարասիներ: Յնդափոխուեր և բոլորովին: Առաջին Արարուածիկ մէջ կրած սև մագերը ձերկեցի

նէ, իսկ իր դեմքը և քարուածքը բարոյակակ նեղութեանց հետքերը կը գոչցնեն՝ որոցնէն շուշած կ'երեւի:

- Շարանցուն (ցած ձայնով Ֆելիչիանոյին).** — Ի՛նչ, իմ պայուսակներս բերող բեռնակիրն ի՛նքն է:
Ֆելիչիանոյ. — Այո՛, Արմանտի հայրն է:
Շարանցուն (խեղճիւրեմ). — Այս հանդիպումը ինձի շատ անհաճոյ է: — (Դեպ ի պակտի դարձած) Վանչ, քեզի կ'ըսես. (Լորենցոյ դուրս կ'երի). շուտ... ա՛ն այդ պայուսակները և պանդոկը տար. (Լորենցոյ կ'օգնէ Մարտինի հաւնտը վար դնելու համար). քսան հարիւր չէք տուր այդ բարի մարդուն:
Լորենցոյ (անկնկարով զակիկայ). — Ո՛հ, պարոն Շարանցունը:
Մարտին (գրոշխը վերցրնելով). — Շարանցուն: Շարանցուն (խեղճիւրեմ). — Ապուշ. (Ֆելիչիանոյի ցտեսութիւն):
Մարտին (կեցնելով Շարանցունը և իր գլխարկը հանելով). — Երեցէ՛ք, պարոն, դուք Շարանցուն կը կոչուիք:
Շարանցուն (շփոթած). — Այո՛... այո՛, Շարանցուն:
Մարտին. — Չեմ սխալիր... այո՛, զքեզ կը ճանչնամ. կը փափագէի քեզի առանձին խօսք մ'ըսել:
Շարանցուն. — Բայց ժամանակս չի ներեր, վասն զի...
Մարտին. — Մէկ խօսք մը միայն:
Շարանցուն (քաջ մ'առնելով դեպ առաջ). — Ուրեմն շուտ ըսէ, վասն զի գործ ունիմ:
Մարտին (մտնելալով և երեսն յաւելով). — Շունչանորդի՛:

Շարակցուն. — Պարոն...

Մարտին (գլխարկը կը դնէ և առանց պատասխան մը տարու՝ կընակը կը դարձրնէ Շարակցունի):

Լորենցոյ. — Ահա քսան հարիւրէք:

Մարտին. — Տո՛ւր, երիտասարդ... այս ստակը գողցած չեմ ես... չէ...:

Շարակցուն. — Մնաս բարով, Ֆէլիշխանոյ. (կ'երբայ):

ՏԵՍԻՒ Ե.

Մարտին և Ֆէլիշխանոյ

Մարտին (բռունց մը վերցնելով՝ միևնույն Շարակցուն դուրս կ'երդէ). — Երկու տարիէ ի վեր՝ շատ կը փափագէի այս անօրէնին հետ դէմ առ դէմ գտնուելու. միտքս դրած էի որ զինքը խղրեմ, սակայն շնորհակալ եմ Աստուծոյ որ զիս ոճիրէ մ'ազատեց: — Բայց եթէ բնագոյումիս հետեւէի՝ վայ էր իրեն, բըստունքս դեռ կը ծառայէ ինձի: (Մըրելով մահատը) Սակայն քրտնած եմ. սրունքներս չեն բռներ. (նամուտը վար կը դնէ՝ դեպի տանը մտնելովը, և ականջը կը նետի). ո՛հ, հինցած սրունքներս, ձեր զսպանակները ծանգոտեր են: (Ֆէլիշխանոյ՝ որ խորը մնացեր էր, առաջ կու գայ՝ իրբ րե յսն պիտի ըսէ Մարտինի, բայց յանկարծակի կը կընայ) Ահա միւսը... բայց ասիկայ քիչ յանցանք ունի... երիտասարդութեան կրնայ աչք գուցուիլ, բայց անոր... անոր, ո՛չ:

Ֆէլիշխանոյ (իւրեքրեք, շփոթած, կ'ուզէ մեկ-

նիլ). — Անկարելի է, քաջութիւնս կը պակսի:

Մարտին. — Դարձիր... դարձիր, զիտեմ թէ ինչ է ուզածդ:

Ֆէլիշխանոյ. (Մարտին առանց ականջը՝ ձեռքը կ'երկնցրնէ. Ֆէլիշխանոյ կը նետուի ականջը վրայ և կը սեղմէ ուրախութեամբ). — Պարոն Մարտին, սրբափ ժամանակէ ի վեր կը փափագէի ձեռքդ սեղմել:

Մարտին (կատակով). — Ես գրեզ ձուկերուն փորը կը կարծէի:

Ֆէլիշխանոյ. — Ստուգիւ կ'ուզէի ինքզինքս խղրեմ, որոշեցի, բայց...

Մարտին. — Բայց շատ չէիր սիրեր աղի ջուրը:

Ֆէլիշխանոյ. — Ճիշդն ըսե՞մ. ինքզինքս ալիքներուն մէջ ձգելու վրայ էի՝ երբ յանկարծ գողափար մ'իսկու միտքս, զոր երբէք չէի յղացած: Եթէ աշխատիմ, ըսի ինքնիրենս... Փորձենք... Եւ փորձեցի, և աշխատանքը ինձի սիրել տուաւ նորէն կեանքը: Աշխատելու նպատակս էր՝ չճանչցած հաճոյքիս փորձն առնել, բայց կեանքս ինձի հաճոյական դարձաւ:

Մարտին. — Ծովը նետուիլ, ինքզինքն սպանել... է՛հ, ըսելիք չկայ, զեղեցի՛կ հնարք. բայց վատերը միայն իրենք զիրենք կը սպանեն... Իսկ եթէ մարդ մը սիրտ և երկու բազուկներ ունի, կը ջանայ եղած չարիքը դարմանել: Քսակահատը աշխատաւոր ըրէք, և ահա կ'ունենայք համեստ մարդ մը:

Ֆէլիշխանոյ. — Ես ալ ճանչցայ այս ճշմարտութիւնը, տեսայ անդունդը՝ որուն մէջ պիտի գահավիժէի, և կը յուսամ որ ճիշտ ժամանակին ինքզինքս զսպեցի:

Մարտին. — Սրտիդ խորը բարի բան մը ֆնա-

ցեր է եղեր, երիտասարդ... Գիտցիր որ երկար ժամանակ է ի վեր գրեզ կը դիտեմ՝ առանց արտաքուստ ցուցնելու. շատ անգամներ խօսեր եմ մեծաւորներուդ հետ, և գիտեմ որ իրենց համարմունքը շահեր ես. և ահա այս է պատճառը որ իմս ալ կը յայտնեմ քեզի : Բեռնակրի մը համարմունքը մեծ բան մը չէ... բայց վերջապէս... (Ֆէլիչիանոյ յուզուելով զրոշիւր կը դարձնէ և ձեռքերն աչքերուն վրայ կը դնէ) Ո՛չ, մի ամբջնար, միայն ի բնէ չարերն են՝ որ երբեք արցունք մը չեն գտներ... (դադար) : Ա՛խ, եթէ միտն ալ քեզի պէս վարուէր... բայց և ոչ իսկ տող մը... ո՛հ, առաջուան պէս չար և պարսպորդ մտացած պիտի ըլլայ... կը տեսնես...

Ֆէլիչիանոյ. — Ո՛ր գիտէ. դուք ալ կը տեսնէք որ երիտասարդութեան վրայ պէտք չէ յուսահատիլ. կարելի է որ Արմանտ ալ զգաստացած և ուղիղ ճամբան բռնած ըլլայ :

Մարտին. — Ո՛չ, ո՛չ... բոլորովին դէպ ի չարը հակուսն ունեցած էր, որուն ալ դարման չըկայ : Թշուառակա՛նք : Եւ սակայն կը սիրեմ միշտ զինքը, գիտե՛ս Ֆէլիչիանոյ, կը սիրեմ միշտ : Եթէ գիտնայիր թէ իր պատճառաւ ի՛նչ հնարներու բռնադատուած եմ դիմելու : Ամէն օր կեղծ պատմութիւն մը կը հնարեմ իր հօր եղբայրը միամտեցնելու համար... շինծու նամակներ... Բարեբախտաբար հրեշտակ մ'ունիմ որ միտքս կը հասկընայ և ինծի կ'օգնէ՝ խեղճ եղբօրէս իրականութիւնը ծածկելու համար, վասն զի եթէ գիտնար ճշմարտութիւնը՝ ցաւէն պիտի մեռնէր :

Ֆէլիչիանոյ. — Գիտեմ թէ ո՛վ է այդ հրեշտակը. չենրիկն է :

Մարտին. — Այո՛, ինքն է... և խեղճը արժանի

էր աւելի բարեբախտ ըլլալու : Լուս կեցիր, ահա՛ Գէորգը կու գայ, կ'աղաչեմ բնաւ նշան մը չուսս՝ որ չըլլայ թէ կասկած մ'առնէ :

Ֆէլիչիանոյ. — Հանգիստ եղիր, արդէն պէտք է որ երթամ, ընելիք գործ մ'ունիմ, յետոյ քիչ մ'ալ քնանալու պիտի երթամ, վասն զի երկու գիշեր կ'ըլլայ՝ որ չեմ քնացած :

Մարտին. — Օր պիտի գայ՝ որ կարող պիտի ըլլաս կորսընցուցած քունիդ տեղն հանել. ուրեմն երթաս բարով. (ձեռքը կ'երկնցնէ) :

Ֆէլիչիանոյ. — Ահա ձեռքի սեղմում մը՝ գորամբողջ տարեկան թոշակիս հետ պիտի չփոխէի :

Մարտին (զուարթ). — Խե՛ւ ես... այդքան չ'արժեր. դարձեալ շոյալուծիւն մի՛ սփօիր. (Ֆէլիչիանոյ կը մնկնի, Գէորգ վերջին բառերուն ներս կը մտնէ, աղքատիկ հագուած, և թևին տակ կողով մ'ունի) :

ՏԵՍԻԼ Զ.

Մարտին և Գէորգ

Մարտին. — Է՛հ, ապրի՛ս, հոս ես, յարմար տեսնին եկար... շնչաօպառ եղած եմ... գիտե՛ս, այս առտու շատ աշխատեցայ, և այս իրիկուն առ նուագն հինգ ֆրանք պիտի կարենանք զնել զրամանոցին մէջ :

Գէորգ. — Այո՛, դու կը կարծես որ այդ բանն ինծի ըսելով՝ հաճոյք պիտի պատճառես... դու ինքզինքդ կը հիւժես, կը կորսընցնես առողջութիւնդ, և երբ գրեզ կը տեսնեմ՝ սիրտս կը յուզուի :

Մարտին. — Է՛հ, հիմայ աւելի առողջ եմ՝ քան թէ երբ կալուածատէր էի, կը գիրնայի, խոզ մը դարձած էի... հոս սուր, տեսնեմ եփողը ճարտարութիւնը ցոյց տուեր է:

Գեորգ. — Համն առ սա ապուրին, ծերուկս:

Մարտին (կ'առնէ ապուրը և կ'երթայ կը նստի համեախին վրայ). — Ինչպէս անուշ կը ծխայ, ինչպիսի քաղցր բուրումն, կարծես ճարտար խոհարարի մը ձեռքէն ելած հերիսա մ'է... կուտակալին փոխանորդն անգամ անշուշտ աւտոր նման բան չ'ուտեր. (կ'ուտէ):

Գեորգ. — Վերջէն այս գինին ալ խմէ՛ գոր քեզի համար գներ եմ:

Մարտին. — Գինի՞, չափազանց է, ինծի գէշ կը սորվեցնես, զիս կ'արես:

Գեորգ (նստեկալով). — Զօրանալու պէտք ունիս, կ'աշխատիս ամբողջ օրը: — Եթէ դու ինծի մտիկ ընէիր՝ քովերնիս ֆնացած քիչ մը բանով՝ պատառ մը հաց հանգիստ կերպով և առանց նեղութեան կրնայինք ուտել:

Մարտին. — Իսկ յետոյ՞ քսան ամիս վերջը՝ հիւանդանոցին մէջ: Ա՛հ, ո՛չ, երբ արգանակը կը սպառի՝ պէտք է կատտային մէջ ջուր լեցնել:

Գեորգ. — Այդ տարիքիդ՝ բեռնակրութիւնը ընել. այս կերպով զքեզ կը մաշեցնես, և ես ալ համբերեմ՝ որ...

Մարտին. — Մարդոս այն արուեստը կ'ընէ՛ ինչ որ գիտէ և կրնայ ընել. ոչ ոք զմեզ մեղադրելու իրաւունք ունի՝ քանի որ կը ջանանք համեստութեամբ ապրելու: Իսկ միւս կողմանէ՛ ես աղէկ սկզբունք դրած եմ: Այն օրը՝ որ բաճկոնիս վրայ դրի գործաւորի նշանաւ ցոյցը, ես ինծի ըսի. «Կ'ուզեմ ասիկայ դնել զինուորական մետալիս քով, զոր վաստկեցայ

Լուսիկ (ձեռքերնին տալով). — Ահաւասիկ:

Նեկտառինէ. — Շարքի վրայ, պատրաստ. ես և Վարգուհի պարագլուխ զոյգը պիտի կազմենք, Երանեակն ու Պայծառը՝ երկրորդ զոյգը, Երրորդն ալ Հովիտիմէն և Արուսեակը. այսպէս (զանոնք կարգի կը դնէ). սկսինք ուրեմն:

Վարդուշի. — Իսկ Լուսիկը մաս պիտի չունենայ:

Լուսիկ. — Եթէ հաճիք՝ այս միւս դափը կրնամ զարնել:

Շուշան. — Եւ գիտցած գողթնական երգը ալ պիտի երգես:

Լուսիկ. — Շատ սիրով:

Նեկտառինէ. — Զեզ տեսնեմ ուրեմն. սկսեցէք. (Պարելոռ նշանը կու տայ. Շուշան և Լուսիկ դափ կը զարնեն, և ամենքը կը պարեն):

Լուսիկ (նետեկալ պարերը կ'երգէ). — «Գարի մարդոց ողորմութիւնն՝ իբրև անձբու մ'է Մայիսի, երկրիս ծարաւը սա կ'անցնէ, նա քաղցածին անօթութիւնն»:

Շուշան. — Ի՛նչ գեղեցիկ ձայն... (Պարը կը դադարի՝ փառանձեմի նստեկալով):

ՏԵՍԻԼ Դ.

Փառանձեմ և Առաջիկներև

Փառանձեմ. — Իշխանուհի օրիորդ...

Նեկտառինէ. — Ի՛նչ կայ:

Փառանձեմ. — Գայիանէ Տիկինը հիմայ ձեզի կը սպասէ, կ'ըթէ որ դասի ժամանակն է:

Նեկտառինէ. — Հիմայ ուրիշ բանով զբաղած

եմ, չեմ ուզեր ըղեղոս չարչորկել. ըսէ իրեն որ չեմ կրնար գալ:

Շուշան. — Շատ լաւ կ'ըսէ: Առաջ տանինք.

(դափր կը ձեռնկոխէ):

Փառասնձեւ. — Բայց մտածէ որ... (Շուշան կ'ընդհատէ զարնելը):

Նեկտառիկե. — Երբ կ'ըսեմ թէ չեմ կրնար՝

ըսել է թէ չեմ ուզեր գալ:

Շուշան. — Չէ՛ս տեսներ. հոս ալ դաս կ'առնունք. (դափր կը զարնէ):

Փառասնձեւ. — Իշխանուհին մօտիկ սենեկին մէջ կը զբաղի, այս խառնաշփոթ աղաղակը...

Շուշան. — Խառնաշփոթ աղաղակ... Զուրցածդ ըսելու խօսք է (բարկոշրեալ):

Նեկտառիկե. — Երթանք, երթանք սուրիշ կողմ. պէտք չէ մօրս նեղութիւն տանք. Փառասնձեւ իրատուք ունի:

Վարդուհի. — Ուրեմն ընելիք փորձերնի՞ս... Նեկտառիկե. — Կ'ընենք... (մտածելով) պարտիզին մէջ կ'ընենք:

Փառասնձեւ (խնդրաբար). — Ուրիշ կերպ կարելի չէր. կարծես կաղամբներու մէջ ծնած է:

Շուշան. — Ուրեմն երթանք, պարտէզ երթանք. հոն աւելի ազատ պիտի ըլլանք: Նայէ՛ Ղուսիկ, ամէն բան հաւաքէ և հետերնիս եկունք.

(զուարթօրէալ) յառաջ ուրեմն, աղջիկներ, շուտ ըրէք, քալեցէք, ինչ կեցեր էք արձաններու պէս:

Պայծառ. — Ո՞ր կողմէն պիտի երթանք:

Վարդուհի. — Ետեւէս եկէք. (կը մեկնի):

Շուշան. — Ո՞հ, երեսունըհինգ տարեկան հասակո՞ւ այսպիսի խխունջներու հետ չեմ փոխեր:

Նեկտառիկե. — Միշտ գուարթ ես, Շուշան:

Շուշան. — Խղճիս վրայ բնա բեռ մը չունիմ, Իշխանուհի. (կը մեկնի):

ՏԵՍԻԼ Ե.

Փառասնձեւ միայնակ

Փառասնձեւ. — Ո՞րքան խելուկ պատաւ մ'է այս Շուշանը. իր խենթութիւնը խօսքերով օրիորդ Նեկտառիկէի խելքը կը դարձընէ: Ո՞վ գիտէ ինչ աղմուկ, ինչ շտապ պիտի հանեն. պատճառը. որովհետեւ գեղացի աղջիկ մը պիտի գայ. և ոչ իսկ Իշխանուհիի մը համար այսքան խառնակութիւն հանել կ'արժէր: Տիկին Իշխանուհին ալ՝ որ արքունեաց մէջ ապրեր է, որ այնքան ճամբորդութիւններ ըրած է, աչք կը գոցէ և սանձ չի դնէր օրիորդին այսպիսի հակամարտում. կոյր սիրով գերի դարձած է իրեն աղջըկան, և կը թողու նաև որ իր վիճակին անվայել գործեր ընէ:... Ի՞նչ ըսեմ. ուրախութիւն ընել կ'ուզեն, լաւ, թող ընեն, բայց հարկ եղած պատշաճութեամբ: Կրնան վարպետ երաժիշտներ բերել տալ, քաջ արուեստատուներ... չէ՛, կարծես պէտք կը զգան որ երգիչները գեղացիներ ըլլան, պարողները գոհիկ լալուսներ... Ո՞հ, ինչ գեղացիկ պատիւ կը բերեն այդպիսիները Օրբէլեանց ազգատոհմին... Ի՛հ, եթէ Լիպարիտ Օրբէլեան իշխանը մէյմը գերեզմանէն գլուխը վեր վերցընէր ու տեսնէր թէ...

ՏԵՍԻԼ Զ.

Իշխանուհի Օրբելեանց և Փառանձեւ

Իշխանուհի. — Գիտե՞ս, Փառանձեւ, քիչ ա-
տենէն հոս պիտի հասնի Չապէլ օրիորդը. ի-
րեն ուղեկից վարձուորներէս մէկը կանխեց ի-
մացուց անոր գալուտը:

Փառանձեւ (ձեզօրեկ). — Շատ ուրախ եմ:

Իշխանուհի. — Աղջկոս ո՞ր է:

Փառանձեւ. — Պարտէզն է, իր սիրած տեղը,
և իրեն հետ կան Չուլիք մը գեղացի կնիկնե-
րու և աղջկներու:

Իշխանուհի. — Կը հասկընամ, կը հասկընամ:
Փառանձեւ (ձեզներով). — Հանդէս մը կը պա-
տրաստէ՞ այդպիսի փառաշուք մուտք մը տօ-
նելու համար:

Իշխանուհի. — Օրիորդ Փառանձեւի խօսքերը
միշտ խայթիչ պիտի ըլլան:

Փառանձեւ. — Խայթի՞չ... (խնտարով) մանա-
ւանդ թէ ես ալ ձեր ուրախութեան կը մաս-
նակցիմ:

Իշխանուհի. — Եւ պէտք է որ այդ ուրախու-
թիւնդ անկեղծ ըլլայ, և դուն պէտք է վար-
ժեցընես ինքզինքդ ամէն կերպով մեծարելու
Չապէլ օրիորդը, կը հասկընամ: Չապէլ իր
ունեցած ազնիւ ձիքերով՝ թէ՛ աղջկանս և
թէ՛ (ծանր ձայնով) իմ սէրս վատրկեր է:
Իր հանգուցեալ հայրը պատուաւոր մարդ էր,
և ինծի հաւատարմաբար ծառայեր է երկար
տարիներ...

Փառանձեւ (կշանաշոր ձայնով մը). — Եւ իր
մայրն ալ նմանապէս...

Իշխանուհի (վեռնքեամբ մը խօսքը կտրելով).
— Մեռածներուն յիշատակը միշտ յարգել
պէտք է, օրիորդ:

Փառանձեւ. — Ըսելիք չկայ:

Իշխանուհի. — Բաւական է... Այդ կերպը կը
վայլէ՞ խելացի և խոհեմ աղջկանս մը: Եթէ
դուն քու պատիւդ պահել չես գիտեր, գէթ
ինծի ունենալիք մեծարանքէդ մի պակտիր:
(Բարկացած) Չեմ ուզեր որ տանս մէջ մէկու
մը վրայօք չար մտածուի և խօսուի. և ար-
դարութեան պարտք կը համարիմ՝ ինծի ծա-
ռայողներուն պակտութիւններն ուղղելու:

Փառանձեւ. — Ներուժն կը խնդրեմ... ա՛յ չեմ
ընէր... (Ինքնիրեն) Ի՜նչպէս ալ կրակ դար-
ձաւ:

Իշխանուհի (ձանդարտօրեկ). — Կը ներեմ քե-
զի, կը ներեմ... Հիմայ պարտէզ գնա՛ և քե-
զի գուրցած լուրս աղջկանս հաղորդէ. թող
գայ պատրաստուի՝ Չապէլն ընդունելու. կը
փափաքիմ որ ընելիք բարեգործութեանս բո-
վանդակ հաճոյքն ինքն ալ զգայ:

Փառանձեւ. — Շատ լաւ, Իշխանուհի... (Ինքն-
իրեն) Այնքան տիկիններու ծառայեր եմ,
բայց ասկէց յիմարը տեսած չեմ. (կը մեկնի):

Իշխանուհի (միայնակ). — Մե՞ղք որ այսպիսի
կոկիկ օրիորդ մը՝ ուրիշները խայթելու գէշ
սովորութիւնն ունի... Բայց յանցանքը այն
տիկիններունն է՝ որոնց քով ծառայեր է. և
դժբախտաբար կը գտնուին այնպիսի տիրու-
հիներ՝ որ կը զուարճանան չարախօսութիւն-
ներով և ծաղրաբանութիւններով, և դատա-
պարտելի հաճոյքով՝ կը սնուցանեն այսպիսի
ախտ մը իրենց աղախիններուն սրտերնուն
մէջ, մինչդեռ խղճով պարտաւոր էին սանձել
ու զսպել զանոնք... Բայց ես յոյս ունիմ՝
որ...

ՏԵՍԻՒ Է.

Իշխանունի և Տիկիկ Գայիակե

Գայիակե. — Իշխանունի, զուր տեղ այս առաւօտ...

Իշխանունի. — Ըտելիքդ գիտեմ... Կերէ, տիկին. այս առաւօտ Կեկտառինէն իրաւցընէ ժամանակ չունի ուսման զբաղելու:

Գայիակե. — Թէ որ միայն այս առաւօտ ըլլար՝ այնքան անխոհեմ չէի գտնուիր՝ գանձ գատելու իր վրայօք. բայց խղճի պարտք կը զգամ ճշմարտութիւնը ձեզմէ չծածկելու: Ի՞նչու երկար ժամանակ չէ՞ որ դատարարակուհի ընտրուելու պատիւն ստացայ ձեզմէ, բայց այդ քիչ ատենուան մէջ ալ կարող եղայ հասկընալու որ ձեր դուտարը գրեթէ բնածիր առտելութիւն մը կը զգայ ուսանելու: Չեռքէս եկած ջանքը չխնայեցի իր եռանդը վառելու, բայց զուր տեղ...

Իշխանունի (ցաւագիւն). — Բայց անօգուտ մնաց ըրած ջանքդ, գիտեմ:

Գայիակե. — Հետեւաբար իմ աշխատութիւնս ապարդիւն տեսնելով...

Իշխանունի. — Ապարդիւն... չըսիր ինծի ուրիշ անգամ որ աղջիկս ամենամեծ եռանդ ցոյց կու տայ տուած բարոյական դասերուդ:

Գայիակե. — Ճշմարիտ է, բայց գրականութեան վերաբերեալ ամէն դասերուս մէջ բոլորովին հակառակը ցոյց կու տայ:

Իշխանունի. — Փանի որ քեզի ալ հնար չեղաւ ուսմանց համար իրեն զգացած այդ խորշումը

չնշելու, ես զո՞ն պիտի մնամ՝ եթէ սրտի կըլթութիւնը իրեն սովորեցնես: Կը տեսնես որ կարգէ դուրս բերումս ունի առաքինութեանց համար, և այնպիսի սէր ունի դէպ ի արդարութիւնը՝ որ...

Գայիակե. — Չարմանալի սէր մը, ես ալ համոզուած եմ: Բայց ներեցէք համարձակութեանս, թէ որ իրեն թոյլ չարուէին տեսակ մը ցրուածութիւններ, կարգ մը մարդկանց հետ կենակցութիւններ...

Իշխանունի. — Հազար անգամ փորձեցի, տիկին, բայց արդիւնք մը չունեցայ: Վերջապէս համոզուեցայ որ այս իրեն ուսմական բերմունքները հետեւանք մ'են ի սկզբան իր սրտին վրայ եղած տպաւորութեանց:

Գայիակե. — Ի՞նչպէս:

Իշխանունի. — Պատշաճ է որ ամէն բան քեզի բացատրեմ: Այս զուտ մեծցած է գիւղի մը մէջ՝ Մարգարիտ կոչուած կնիկէ մը, որ Որնի գիւղին մէջ ունեցած կալուածներէս մէկուն մէջ պատուաւոր վարձուորի մը կիներ էր...

Գայիակե (նշանաւոր ձայնով մը). — Հիմայ ամէն բան կը հասկընամ:

Իշխանունի. — Բայց խղրեմ զիս մի մեղադրեր, տիկին, ես բնադատուեցայ զինքը այդ կնիկան խնամքին յանձնելու: Ամուսինս Պարսից կառավարութենէն ուղարկուեցաւ Պետերբուրգ՝ տէրութեան ծանր գործերու համար: Իր մեկնելէն երկու ամիս վերջը՝ ծնայ այդ զուակս. և որովհետեւ թէ՛ իմ և թէ՛ տղուս առողջութիւնն ամենազէջ վիճակի մէջ էր, բըծիչները խորհուրդ տուին՝ թէ՛ փորրիկը և թէ՛ զիս վտանգէ ազատելու համար, որ զիւղացի առողջ և լաւ ստընտուի մը յանձնեմ տղան սնուցանելու հօգը. և Մարգարիտը այդ

պաշտօնին յարմար դատուեցաւ. և իմ խնդիրքիս զիջանելով՝ ինքն ալ իրեն նորածին աղջիկ զաւակը ուրիշ կնկան մը յանձնեց սնուցանելու:

Գայիակե. — Կ'երեւակայեմ ձեր մայրենի սըրտին զգացած ցաւը:

Իշխանուհի. — Այո, ամենասաստիկ ցաւ. բայց ուրիշ մեծագոյն մ'ալ վրայ հասաւ: Պետրը բուրգէն հասած նամակներ ինձ իմացուցին՝ որ իշխանը վտանգաւոր հիւանդութեան մ'ենթարկուեր էր, որ յառաջ եկած էր ճանապարհի վրայ կրած նեղութիւններէն: Ամուսնական սէրս չթողուց որ վայրկեան մ'իսկ կորսնցնեմ. եղբայրս ճանապարհի ընկեր առած և օգտուելով կարաւանէ մը՝ որ անմիջապէս ճամբայ ինկնալու վրայ էր՝ մեկնեցայ դէպ ի Ռուսաստան, առանց կարենալու զիւղի մէջ թողած զաւակս համբուրելու:

Գայիակե. — Խեղճ տիկին:

Իշխանուհի. — Դժբախտ արկածներս շարունակուեցան. իրաւ է որ էրիկս ազատեցաւ՝ շնորհիւ իմ ցուցած սիրալիր խնամքներուս, բայց որովհետև թշուառ հայրենիքս Երեւանը՝ պատերազմով յաղթական Թուրքերուն ձեռքը մատնուեցաւ, անկարելի եղաւ մեր վերադարձը, որովհետև գերի բռնուելու հրաման ելած էր մեզի դէմ: Կատաղի Թուրք Սէլիմ փաշան, որ պատերազմին սպարապետն էր՝ յարունիս գրաւեց մեր բոլոր ստացուածները: Էրիկս՝ Լիպարիտ իշխանը սրտին ցաւէն մեռաւ, և ո՞ գիտէ ինչ ձիւն պիտի գար իմ փոքրիկ գառնուկիս Նեկտառինէի զլխուն՝ թէ որ ազնիւ մօրաքոյրը զինքը իւր գիւղական առանձնոցին մէջ քովը շատէր չպահէր:

Գայիակե. — Ո՞րքան ցաւալի և սրտաշարժ են ձեր դժբախտութիւնները:

Իշխանուհի. — Այսպէս անա պէտք եղած դաստիարակութեան խնամքը չունեցաւ զաւակս: Քոյրս՝ ամենագին տիկին մը՝ կարելի եղածն ի գործ դրաւ՝ գէթ կրթի կրթութիւնը տալու տղուս, և առաքինի զգացումներով իր հոգին զարդարելու, սիրել տալու ողորմածութիւնն և արդարութիւնը, բայց չկրցաւ ուղղել զինքն իրեն ստացած գիւղական կրթութեան բերմունքներէն:

Գայիակե. — Ինչ որ կը տեսնեմ՝ և ոչ իսկ իմ ջանքս այդ նպատակին պիտի կարենայ հասնիլ:

Իշխանուհի. — Ատոր վրայ հոգ մ'ընէր. իրեն բարոյական կրթութիւնը կը փոխարինէ ամէն պակասութեանց, և ես մեծ հաճոյք կը զգամ՝ տեսնելով թէ օրիորդն ինչպէս բարերարութեան զգացումներով տոգորուած է: Արդարութեան պարտք կը համարի օգնել խղճեցուն և աղքատներուն, և մասնաւոր գիւղացի կարօտներու. ինքն անձամբ կ'աշխատի և դերձակներուն ալ պատրաստել կու տայ շատ մը զգեստեղէններ՝ ամենէն աւելի մերկերը հագուեցընելու համար: Բայց իր սրտին ամենէն աւելի մերձաւոր, ամենէն աւելի զգուելի անձն է Չապէլ օրիորդը, որ իրեն կաթնասուն ընկերն եղած է:

Գայիակե. — Հիմայ կը հասկընամ թէ ինչո՞ւ այսքան հանդիսաւոր պատրաստութիւն կը տեսնէ զինքն ընդունելու համար:

Իշխանուհի. — Միւս կողմանէ այս ալ ըսելու եմ՝ որ Չապէլն ալ արժանաւոր է ամէն ցոյցերու. կարելի չէ զինքը չսիրել՝ երբ տեսնէ մարդս անոր գեղեցիկ ձիւղերը և բարի հոգին: Եւրբ հեռք վերաբերութիւն ունենաս, տիկին, դու ինքնին պիտի դատես ըսածիս ճշր:

մարտութիւնը. դարձեալ, պիտի զարմանաս՝ թէ ինչպէս նման է Նեկտառինէիս՝ արտաքին դէմքով ու հասակով. իրաւ՝ երկու անգամ միայն զինքը տեսեր եմ, բայց այդ նմանութիւնը աչքիս զարկեր է: Պետրբուրգէն դառնալէս վերջը՝ երբ տասը տարեկան մը կար՝ փափաքեցայ որ զինքն ալ իմ քովս պահեմ, և իր ունեցած բնատուր հանճարը դաստիարակութեամբ զարգացնել տամ նաև ուսմանց ու գիտութեանց մէջ. բայց կրնա՞ր հաւատալ, տիկին, որ այն օրհնած Մարգարիտ մայրը, որ ոչ միայն այրի մնացեր էր էրկանէն, այլ նաև աղքատութեան մէջ ինկած էր...

Գայիակեհ. — Ինչ, հակառակ կեցաւ ձեր փափաքին:

Իշխանուհի. — Այո՛, կարգէ դուրս պնդագլխութեամբ, այնպէս՝ որ կարծես թէ նախանձ կը զգար՝ որ իր գաւազը կը սիրէի... մանաւանդ թէ չուզեց անկէց վերջ զինքը մեր տունը բերել... Աստուած հոգւոյն ողորմի՛... բայց հայրենիքս դառնալէս վերջը՝ կարծես թէ ալ առաջուան ճանչցածս չէր այդ Մարգարիտը, ալ առաջուան պէս հաւատարիմ և սիրալիւր վարձուոր մը չէր. իր վարմունքին մէջ բոլորովին խորամանկ, կասկածուտ և ծածկամիտ կերպ մը ցոյց կու տար...

Գայիակեհ. — Կարելի է որ գաղտնի պատճառ մ'ունեցած ըլլայ...

ՏԵՍԻՒ Ը.

Զապել, Շողակար և Ասալիները

Զապել (ոչրախ զուարթ ներս մտներով՝ իր յարգանքները կ'ընէ). — Յարգանքնե՛րս, Տիկին Իշխանուհի:

Իշխանուհի. — Ո՛հ, Զապէլ... ապրի՛ս... չէի կարծեր որ այսքան շուտով գաս. (կը դիտէ զիւր ռշի ռշով):

Զապել. — Զձեզ տեսնելու փափաքս՝ չթողուց որ դանդաղիմ:

Շողակար. — Աստուգիւր և ոչ իսկ քուն եղանք, Իշխանուհի:

Զապել. — Այո՛, ամէն մէկ ժամը կարծես դար մը կ'երևար ինձի. անձկանօք արշալուսին կը սպասէի, որ պիտի բանար կենացս ամենէն աւելի երջանիկ օրը... յետ այնքան դժբախտութեանց (հաւալանքով):

Իշխանուհի. — Սիրելի գառնուկս, մօտ եկուր ուրեմն, եկուր բազկացս մէջ և ողջագործէ զիս (եռանդեալ):

Զապել (ակնածելով). — Ստուգիւր, չեմ համարձակիր...

Իշխանուհի. — Չե՛ս համարձակիր... Չե՛ս ուզեր որ զքեզ ողջագործեմ...

Շողակար. — Մի՞ընչալէն է, Իշխանուհի, ակնածութենէն կը քաշուի. խեղճ աղջիկ, ինքզինքն արժանի չի համարիր... կը հասկընա՞ք. մենք բոլոր գեղացիներս ալ այսպէս ենք. իրարու հետ կատակներ կ'ընենք, սրախօտութիւններ, ազատ համարձակ վարմունք ունինք

և ամէնքնիս ալ պէտք եղածին պէս շարժիլ գիտենք... բայց Տիկիներու առջեւ կը շփոթիմք, կ'ապշինք. երկու բառ քովէքով չենք կրնար բերել:

Գայիսնէ (ժպտեցով). — Եւ սակայն շատ լաւ կը խօսիս... (իւրնիւրնէ) Զուարճալի՜ կնիկ մ'է:

Շողակար. — Հապա, քեզ տեսնեմ, Զապէլ, քաշուածութիւնդ մէկդի թող... Հոս եկուր. (կը դնէ զիւրքը իշխանուհոյն բազկաց մէջ)... Այնքան փափաք ունէիր տեսնելու, և հիմայ կը քաշուիս...

Զապէլ. — Ո՛հ, այո՛ (կ'ողջագոչրէ իշխանուհին) ... Ներեցէք բունն զգացմանցս՝ որ սրտէս կը բխին. մարդկային ակնածութիւնք կարող չեն արգելք ըլլալու ներքին մղումներու:

Իշխանուհի. — Ամենեւին մի՛ քաշուիր, սիրելիս. (կը գրկէ զիւրքը և երեսը դիտեցով) Գիտե՞ս, պէտք է որ հետս իբրև իմ գաւազս վարուիս:

Զապէլ (կուշ յայ):

Գայիսնէ (իւրնիւրնէ). — Իրացընէ ազնիւ հոգւոյ տէր է:

Շողակար. — Բայց ինչո՞ւ կու լաս. փոխանակ մխիթարուելու, ուրախանալու... կու լսիս... սիրելիս, կը վայլէ՞ որ այս վայրկենիս լացդ բռնէ:

Իշխանուհի. — Թէ որ Աստուած մայրդ քեզմէն առաւ, զիս քեզի մօր տեղ կը դնէ, և ես կ'ուզեմ իմ Նեկտառինէիս պէս սիրել զքեզ... ինչո՞ւ չես խօսիր:

Զապէլ. — Ա՛խ, թող այս արցունքներս իմ երախտագիտութիւնս յայտնեն:

Իշխանուհի. — Ազնիւ՜ օրիորդ (յուզուած)... Ի՞նչպէս կ'երևնայ քեզի մեր Զապէլը, տիկին Գայիսնէ:

Գայիսնէ. — Իր համեստութիւնն և պարզասրբտութիւնը զիս կը հիացնէ:

Զապէլ. — Չափազանց բարեսիրտ էք, տիկին... Ներեցէք որ առաջուց պարտաւորութիւնս կատարելու գանց ըրի... Քիչ մ'ապշած վիճակի մէջ եմ... Քարգանքներս, տիկին... (կը ծռի և Գայիսնէ կ'ողջագոչրէ զիւրքը):

Շողակար. — Թէպէտ և գեղջկուհի մ'է, բայց կարծեմ լաւ կը խօսի, այնպէս չէ՛... Ո՛հ, ապահով եղէք, պէտք եղածէն աւելին ալ զիտէ: Խեղճը միշտ կը սովորի, ձեռագիրներ կը կարդայ, մեր գիւղի վարժապետին պէս կը գրէ... և այնպիսի նամակներ կը՛ շարադրէ, որ սուրհանդակին ցրուած նամակներէն աւելի լաւ գրուած են... Իշխանուհի, ձեր դուստրը կրնայ վկայել Զապէլի նամակագրութեան մասին, որուն ստէպ կը գրէր...

Զապէլ. — Աղէկ ըսիր, ս՛ր է իմ սիրելիս, իմ բարերարս Նեկտառինէն. Ի՞նչ կ'ընէ, ինչո՞ւ չի գար տեսնուելու:

Գայիսնէ (ժպտեցով). — Քեզի համար զբաղած է:

Զապէլ. — Ինձի՛ համար... Ըսածնիդ չեմ հասկընար:

Իշխանուհի. — Լաւ, լաւ. պիտի հասկընաս: Տիկին, հաճէ՛ զինքը պարտէզ տանելու:

Գայիսնէ. — Շատ սիրով:

Իշխանուհի. — Պիտի տեսնես, Զապէլ, որ բարեկամուհիդ ոչ երբեք այնքան ճարտար եղած է իր սէրը քեզի յայտնելու՝ քան որչափ այս քու գալստեանդ պարագային առթիւ. գնա, վայլէ քաղցր անակնկալ մը:

Շողակար. — Երթանք, երթանք. անակնկալ բաներն ինձի շատ ախորժելի են:

Իշխանուհի. — Ո՛հ, խնդրեմ դուն հոս կեցիր, Շողակա՛թ:

Շողակար. — Հո՞ս կենամ:

Իշխանունի. — Այո՞, քեզմէ տեղեկանալիք բաներ ունիմ:

Շողակար. — Ես ալ տեղեկութիւններ ունիմ տալիք. համաձայն ենք... (իւրեւրեւ) Հասկըցայ, զիս իրեն քով պահելու միտք ունի... (ուրախօշոտակ) Երանի՛ թէ:

Իշխանունի (համբուրելով Չապիլը). — Նայէ որ դառնալու չուշանաս, անհամբեր քեզի կը սպասեմ:

Չապիլ. — Այդպիսի քաղցր հրամանի մը սիրով պիտի հնազանդիմ... (Յաժ ձայնով Շողակարին) Խոհեմութիւն:

Գայիակէ (Չապիլի). — Հրամայէ՛ երթանք. (կը մեկնին):

ՏԵՍԻՒԼ Թ.

Իշխանունի և Շողակար

Շողակար. — Ահաւասիկ մինակ ենք. հաճեցէք հարցաքննելու:

Իշխանունի. — Շողակար, դուն ազատ համարձակ բնաւորութեան տէր կ'երեւնաս, մէկ կողմանէ պարզասիրտ, միւս կողմանէ ալ քիչ մը հետաքրքիր մէկը:

Շողակար (ժպտելով). — Ճշմարիտ է, Իշխանուհի. մենք գիւղացի կնիկներս ամէնքս ալ այդպէս ենք:

Իշխանունի. — Թէ որ ըսէիր մեկը ամէն կնիկներս՝ գուցէ սխալած չէիր ըլլար:

Շողակար (ժպտելով). — Ինչպէս որ կը հաճիք, Իշխանուհի:

Իշխանունի. — Քու մայրդ Մարգարիտի հարուստ եղած ատեն՝ իրեն կը ծառայէր, այնպէս չէ՞:

Շողակար. — Ամենաճիշդ. իսկ ես իրեն ծառայեցի նաև իրեն աղքատութեան մէջ ինկած ժամանակ, երբոր իր խեղճ էրիկը՝ Գնէլը՝ ձեր կալուածէն դուրս վաճառեցին Թուրքերը, որուն համար սրտի ցաւէն մեռաւ: Վստահ եղէք, Իշխանուհի, որ ոչ միայն սիրտս բարի է, այլ և աչքաբաց մէկն եմ, հաւատարիմ և աշխատասէր. ամէն բան քիչ թէ շատ ձեռքէս կու գայ: Թէ որ դիտումս ունիք զիս որ և իցէ բանի համար ձեր ծառայութեան մէջ զործածելու...:

Իշխանունի. — Այդ մասին, այո՛, խօսիլ կ'ուզեմ քեզի հետ:

Շողակար (ուրախօշոտակ, իւրեւրեւ). — Գուշակածս ձիշդ է. պատրաստ եմ:

Իշխանունի. — Կրնաս ուրեմն ինձի ըսել թէ ինչո՞ւ համար Մարգարիտը չուզեց որ Չապիլն իմ քովս պահեմ, և չուզեց բնաւ զինքն ինձի բերել:

Շողակար. — ձիշդ ըսելով՝ պատճառը չեմ զիտեր... Գուցէ թէ նախանձը...:

Իշխանունի. — Կարելի՞ բան է որ մայր մը նախանձի իրեն զուակին երջանկութեան վերայ:

Շողակար. — Ի՛հ, Մարգարիտը մայր մը չէր այն թշուառ զաւակին նկատմամբ, այլ ըստուգապէս դու մ'էր. այն ժամանակէն սկսած՝ որ զինքը տնէն դուրս հանելով՝ ուրիշի մը սնուցանելու տուաւ՝ սէրը վրայէն պակսեցաւ, և ալ չէր կրնար աղէկ աչքով տղան տեսնել...:

Իշխանունի. — Ուրեմն իմ Նեկտարինէ՞ս աւելի կը սիրէր:

Շողակար. — Այո՛, Իշխանուհի... Ամէնքնիս
ալ մէկ հոգի մ'ունինք, պէտք չէ սուտ խօ-
սելով զանիկայ դատապարտութեան մատնենք:
Ամէն սէր, գգուանք, խնամք կը ցուցնէր միայն
Նեկտարոհինէն համար...

Իշխանուհի. — Խեղճ կնիկ:

Շողակար. — Բայց խեղճ կին մը՝ որ չարասիրտ
էր, ազահ և նախանձոտ...

Իշխանուհի. — Խոհեմութի՛ւն... Արդարութիւն
չէ այսպիսի բաներ հուշակելը:

Շողակար. — Է՛հ, այս ըսածներս մեր գիւղին
սագերն ալ գիտեն. ես ինքս ամբողջ գեղա-
ցիներուն ըսեր եմ:

Իշխանուհի. — Գէշ ըրեր ես. սիրոյ դէմ գոր-
ծեր ես:

Շողակար. — Ընդհակառակն ես կարծեմ թէ
սիրոյ գործ է՝ մեր ընկերներն զգուշացնել չա-
րերէն: Մենք գիւղի բնակիչներս ամէնքս ալ
այս կերպով կը վարուինք. իրարու պակտու-
թիւնները փոխադարձաբար մէկմէկու կ'իմա-
ցընենք՝ որ վատ հետևանքներ առաջ չգան...
Հասկըցա՞ք, Իշխանուհի:

Իշխանուհի. — Ուրեմն պակտութի՛ւն մը կը
համարիս Մարգարիտին՝ իմ գաւակիս վրայ
ունեցած այնքան սէրը:

Շողակար. — Այ, Իշխանուհի. ես ալ ձեր գա-
ւակը սիրած եմ և կը սիրեմ: Երբոր մօրքորո-
ջը քով առանձնացած ժամանակը իրեն այ-
ցելութեան կ'երթայի՝ ինծի ընծաներ կու տար
... բայց ես կը սիրէի նմանապէս Զապէլն
ալ: Միայն իր մայրն էր՝ որ հետը անսիրտ
կերպով կը վարուէր: Մտածեցէք մէյմը, ա-
մէն մէկ շարժումնքին զինքը կը յանդիմանէր,
երեսն ի վեր կը պոռչըտար, կը սպառնար,
ունեցած գրքերը կը պատըռտէր, վարժապե-

Յակոբոս (Ինչպես վերը) — Այո՛:

Մեղգուն. — Անշուշտ ինքը պիտի ըլլայ. արդէն
ուրիշ ո՞վ կրնայ ըլլալ: Այնչափ ալ մութ է
փողոցը՝ որ բան մը չի զանազանուիր: Պըտտ,
ինչ ցուրտ է: Անտարակոյտ պիտի հիւանդա-
նամ: (Կ'կլլէ խորը եղած դու՛նէն: Տեսարանը
կը մնայ մուշ: Կարձ դարարե մը ետքը՝ կը
մտնեն Մեղգուն և Յակոբոս):

ՏԵՍԻԼ Բ.

Մեղգուն և Յակոբոս

Մեղգուն. — Պարոն, ես գրեց չեմ ճանչնար:

Յակոբոս. — Հոգ չէ: Բարի մարդ մ'եմ, գիտ-
ցի՛ր:

Մեղգուն. — Բայց զիս ինչո՞ւ խաբեցիր: Հարցու-
ցի քեզի՝ թէ Կիրակոսի՞կն ես, և ինծի պա-
տասխան տուիր՝ այո՛: Այս ըրածդ աղէկ բան
չէ:

Յակոբոս. — Երէ՛, ես Յակոբոսիկ իմացայ,
որովհետեւ ես Յակոբոս կը կոչուիմ:

Մեղգուն. — Բայց տարբերութիւն կայ:

Յակոբոս. — Բնաւ տարբերութիւն չկայ. եր-
կուքն ալ իկ կը վերջանան, ուստի հոմանիշ
են:

Մեղգուն. — Գոռհիկն ալ իկ կը վերջանայ...
Բայց, վերջապէս, ինծմէ՛ ինչ կ'ուզես այս
ժամուս:

Յակոբոս. — Ե՛. բան մ'ալ չեմ ուզեր:

Մեղգուն. — Ո՛հ. ինչո՞ւ զիս արթընցուցիր, քունս
վեր վար ըրիր: Ինչո՞ւ զիս ստիպեցիր որ գու-
ռը բանամ քեզի: Մէկ խօսքով, հոս ինչո՞ւ
մտար:

Յակոբոս. — Ո՛հ, այս աղուոր է. վասն զի անծրե կու գար:

Մեկոն. — Իմ ի՞նչ վրաս պէտք է թէ անծրե կու գայ:

Յակոբոս. — Կ'ուզէիր որ թրջուի՞մ: Նայէ մէյմը, նայէ... (Կը նսնէ թիկնոցը, կը զնցէ գայն դեպ ի Մեկոն և նորեկ վրան կ'առնու):

Մեկոն. — Ի՞նչ կ'ընես. զիս բուր կը թրջես: Կեցիր, էհ. խե՞նթ ես:

Յակոբոս. — Կը զգաս է՞հ, ինչպէս թրջուեր եմ... քու պատճառաւ:

Մեկոն. — Ի՞մ պատճառաւ:

Յակոբոս. — Յայտնի է, փողոցին մէջ զիս ժամ մը սպասեցուցիր: Պէտք էիր գալ շուտ մը բանալ ինձի:

Մեկոն. — Ես քու ծառա՞դ եմ ինչ եմ:

Յակոբոս. — Բայց գթութիւնը... Դու գութ չունիս. թողու մարդ մը ճամբուն մէջուդ, տեղատարափ անծրեի մը տակ, աննկարագրելի, անբացատրելի բարբարոսութիւն մ'է:

Մեկոն. — Բայց դու տուն չունի՞ս:

Յակոբոս. — Տարակոյս չկայ թէ ունիմ, և եթէ կ'ուզես գիտնալ՝ վարձքն ալ շատ սուղ կը վճարեմ. վասն զի երևակայէ մէյմը՝ ամէն մէկ սենեկին համար կը վճարեմ վաթսունը հինգ դահեկան:

Մեկոն. — Ուրեմն ինչո՞ւ...

Յակոբոս. — Զե՞մ երթար իմ տունս, կ'ուզես ըսել:

Մեկոն. — Ճիշդ:

Յակոբոս. — Իմ փափագս ալ այն է. այս օդովս սակայն...

Մեկոն. — Աղուոր օդով ամէն մարդ ալ կրնայ քալել... (Ինքիսն) Եթէ վախ չունենայի՛ կը հասկըցնէի քեզի:

Յակոբոս. — Դու իրաւունք ունիս, իմ սիրելի... անունդ ի՞նչ է:

Մեկոն. — Մեկոն:

Յակոբոս. — Իմ սիրելի Մեկոնիկո. սակայն եթէ ես քիչ մը խոնաւութիւն առնում, երկրորդ օրը բանս բուսած է, հիւանդ կ'ըլլամ:

Մեկոն. — Իսկ հիմա՞կ...

Յակոբոս. — Հիմա՞կ իմ գաղափարս է այս գիշեր հոս անցընել, իմ Մեկոնիկիս հետ:

Մեկոն. — Բայց դու յիմար ես:

Յակոբոս. — Մանաւանդ թէ շատ խելացի կը խօսիմ:

Մեկոն. — Կինդ տագնապի մէջ պիտի ըլլայ:

Յակոբոս. — Ամուրի եմ:

Մեկոն. — Քու տղաքներդ...

Յակոբոս. — Բնաւ ունեցած չեմ:

Մեկոն. — Վերջապէս, ես պիտի քնանամ:

Յակոբոս. — Քնացիր, մի նայիր, ես այս գիշեր այս աթոռի վրայ կ'անցընեմ:

Մեկոն. — Բայց, ի՞նչ կ'ըսես դու:

Յակոբոս. — Եւ կը խոտանամ որ զքեզ չեմ խոտվեր:

Մեկոն. — Ո՛հ, մէյմը նայէ թէ զխուս ինչ պիտի գայ եղեր: Պարոն Գրաբոսիկ...

Յակոբոս. — Յակոբոսիկ, Յակոբոսիկ:

Մեկոն. — Նոյն բանն է:

Յակոբոս. — Զէ:

Մեկոն. — Թող ուզածդ ըլլայ: Իմ Յակոբոսիկո, աթոռի մը վրայ կարելի՞ բան է քնանալ: Ոսկորներդ կը կոտրես, և այն ատեն...

Յակոբոս. — Վարժած եմ: Երևակայէ որ երբոր ինձի իյնար դրան ծառայութիւնը...

Մեկոն. — Վերջապէս, պիտի երթա՞ս թէ չէ:

Յակոբոս. — Ընդհակառակն կ'առնում կը նըստիմ. (սրտս մը կ'առնէ կը նստի):

Մեկզուն. — Հա՞րկ է կրկնեմ քեզի՝ որ ես կ'ուզեմ քնանալ իմ տասնընհինգ ժամս:

Յակոբոս. — Տասնընհինգ ժամ: Անոյշնե՛ր ըւլայ:

Մեկզուն. — Յայտնի է:

Յակոբոս. — Եթէ կ'ուզե՛ս երեսուն ալ քնանցիր: Գնա՛, գնա՛ անկողին, ես քեզի պզտիկ նեղութիւն մ'ալ չեմ տար: Վաղը լուսնալուն պէս՝ կ'երթամ կամացուկ մը՝ առանց ձայն ձուն հանելու:

Մեկզուն. — Եթէ դու հոս ըլլաս, ես պիտի չկարենամ քնանալ:

Յակոբոս. — Համարէ թէ հոս չըլլամ:

Մեկզուն. — Բայց սակայն... (խեղճիւրեմ) կրողը տանի այս իմ վախս:

Յակոբոս. — Զգեստներդ հանէ՛, հանէ՛, առանց քաղաքավարութեան. համարէ թէ քու տանդ մէջ ըլլաս...

Մեկզուն (խեղճիւրեմ). — Մէյմը նայէ՛, իրեն տունն ալ եղաւ:

Յակոբոս. — Շուտ, շուտ, անկողին, անկողին:

Մեկզուն (խեղճիւրեմ). — Հիմայ ինքը կը հրամայէ: Եւ սակայն պէտք է հնազանդիլ իրեն... Անկարելի է որ կարենայ մէկը երեակայել գլխուս եկածը: (Բարձրաձայն) Ուրեմն...

Յակոբոս. — Գիշեր բարի, բարի հանգիստ:

Մեկզուն. — Քեզ լոյս բարի: Շատ դժուար պիտի ըլլայ որ ես կարենամ քնանալ. (կը մտնէ անկողին):

Յակոբոս. — Ես այս աթոռիս վրայ հանգիստ կերպով կը կենամ: Գլուխս կը կռթնցընեմ ստոլիկին, և համով համով կը քնանամ... Կերակուրս մոռնալու վրայ էի: Առէկ ըրի որ գնեցի. հոս գրպանս է: Լաւ կ'ըլլայ որ շուտ մ'ուտեմ զայն... Ո՛հ, աղէկ միտքս եկաւ: Պարոն Մելգոն, պարոն Մելգոն:

Մեկզուն. — Նայէ, սիտար արդէն զիս անհանգիստ ընել. քնանալու վրայ էի:

Յակոբոս. — Ներէ: Որովհետեւ վաղը՝ արեւը ծագելուն պէս, լռիկ մնչիկ պիտի երթամ, կ'ուզէի հիմակուրնէ շնորհակալ ըլլալ քեզի՝ այս գիշերուան ինծի տուած ասպնջականութեանդ համար:

Մեկզուն. — Պէտք չկայ:

Յակոբոս. — Ուրեմն շատ շատ շնորհակալութիւն:

Մեկզուն. — Ծառայ եմ:

Յակոբոս. — Գիշեր բարի:

Մեկզուն. — Քեզ լոյս բարի:

Յակոբոս. — Այսպէս անկրթութեան գործ մը ըրած չեմ ըլլար: Ինչպէս ծանր է այս թիկնոցս: Զուրով բոլորովին խիտմ դարձած է... Լաւագոյն կ'ըլլայ որ տարածեմ զայն... կարծեմ յարմարագոյն տեղն այս է: (Կը տարածէ անկողինի վրայ):

Մեկզուն. — Ի՞նչ կ'ընես:

Յակոբոս. — Կը տարածեմ այս թիկնոցս, որ թրջած է բոլորովին: Դու պառկէ, քնացիր, անհանգիստ մի ըլլար:

Մեկզուն. — Անկողինս կը թրջես:

Յակոբոս. — Զ'անցնիր, ապահով կեցիր:

Մեկզուն. — Բայց ես չեմ ուզեր այս խոնաւութիւնը: Կ'ըսէի ես թէ պիտի չկարենամ քնանալ:

Յակոբոս. — Ի՞նչ ձանձրանալի մարդ ես եղեր:

Մեկզուն. — Ո՛հ, այս նոր բան է:

Յակոբոս. — Լուս կեցիր է՛հ. կը տարածեմ այս աթոռիս վրայ... (կը կատարէ):

Մեկզուն. — Վերջապէս. խելքդ ո՛ր էր:

Յակոբոս. — Գիշեր բարի:

Մեկզուն. — Քեզ լոյս բարի:

Յակոբոս. — Ո՞վ կրնար երևակայել երբեք որ երկիրքը այնչափ ջուր թափէ: Եւ ցուրտ ալ կ'ընէ... Բոլոր լեռները ձիւն է: Կը սկսիմ՝ սարսուիլ... Կարծես թէ ալ անձրևի ձայն չեմ լսեր... Արդեօք օդը բացուեցաւ: Իրաւ այս բանը զիս անհանգիստ կ'ընէր... Կ'ուզեմ ըստուգել: (Կ'երթայ պատռնակիկն և կը բանայ գայն: Պիտի շուշի ակձրևելը):

Մեղզուն. — Ի՞նչ պաղ հով է: Ի՞նչ կայ: (Դառնալով, կը տեսնէ Յակոբոսը պատռնակիկը) Պատուհանը բացուած: Ի՞նչ կ'ընես:

Յակոբոս. — Քիչ մը համբերէ, ի՞նչ եղար: Կ'ուզէի օդը դիտել:

Մեղզուն. — Կ'ուզես որ յօդացուէ՞ մը բռնուիմ... Փակէ:

Յակոբոս. — Անհանգիստ մի՛ ըլլար: Ահա կը հնազանդիմ:

Մեղզուն. — Եւ յետոյ երես ալ ունէիր ըսելու՝ որ զիս անհանգիստ պիտի չընես:

Յակոբոս. — Եւ ի՞նչ է քեզի տուած անհանգըստութիւնս:

Մեղզուն. — Տես ի՞նչ աներեսութիւն: Ո՞հ, պարոն, ես ալ քեզմէ ձանձրացայ. (կըկրով ակնոյիկիկն վրայ):

Յակոբոս. — Քնացիր, չընթրուկէ:

Մեղզուն. — Վայ քեզի, եթէ համարձակիս նորէն զիս անհանգիստ ընելու... (խնդրիկն) Զանաք զինքը վախցնելու:

Յակոբոս. — Ապահով կեցիր, չեմ ըներ... Գիշեր բարի:

Մեղզուն. — Քեզ լոյս բարի:

Յակոբոս. — Լաւ կ'ըլլայ որ հաշեմ, որովհէտե ես ալ միտք ունիմ քանի մը ժամ քնանալու: Բոլոր պէտք եղածը դնենք այս ստուիկիս վրայ... (Կը հսակ գրպակէն հաց և

բուշրի մէջ փարրած ուտելիքներ): Կը պակտին սակայն պնակներ, անձեռոցներ, և ես առանց անոնց չեմ կրնար ընել... այնպէս վարժած եմ: Հոս սակայն բան մ'ալ չկայ: Կարելի՞ բան է որ այս մարդօ գուրկ ըլլայ այսքան կարևոր բաներէ: Այն սենեկին մէջ պիտի ըլլայ անշուշտ ամէն պէտք եղածը: Կան յինք... (Կ'առնու ձրագըր և ներս կը մտնէ):

Մեղզուն. — ճրագը մարեցի՞ր: Ապրիս, ապրիս: Հիմակ ալ ապահով կը քնանամ: Պատասխան չի տար... Պարոն Մատթէոս, պարոն Մատթէոս... Արդեօք ելաւ չքուեցաւ գնաց: Օրհնած ըլլայ երկիրք. (ակնոյիկիկն վրայ նստելով):

ՏԵՍԻԼ Գ.

Յակոբոս և Մեղզուն

Յակոբոս (ակնոյիկով աշտակակով, կրկու պնակով և անձեռոցներով). — Ամէն բան գոռայ... (ընկրով բոլորը ստոյիկիկն վրայ):

Մեղզուն. — Ի՞նչպէս: Գու իմ խոհանոցս մտեր ես: Ի՞նչ յանդգնութիւն: Ի՞մ պնակներս, ի՞մ անձեռոցներս:

Յակոբոս. — Ի՞նչ, կ'ուզէիր որ անասուններո՞ւ պէս ուտեմ:

Մեղզուն. — Ի՞նչպէս կ'ուզես կեր... Բայց պարոն Մատթէոս...

Յակոբոս. — Յակոբոս:

Մեղզուն. — Յակոբոս, Զակքէոս, Կարալամպոս, կրճղը տանի գրեգ: Ի՞նչ անգութ ճակատագիր էր՝ որ զիս ստիպեց բանալու քեզի դուստ:

հայէ՛ չհամարձակիս այն առարկաները գործածելու, գիտես:

Յակոբոս. — Է՛ր նչպէս պէտք է ընեմ:

Մեղոն. — Իմ ի՛նչ փոյթս է: Ճիշդ այսօր գընցի գանոնք, և ոչ ալ դէռ գործածեր եմ:

Յակոբոս. — Ես առաջինն ըլլալու պատիւը պիտի ունենամ:

Մեղոն. — Պիտի ունենաս, այո՛, իմ մաշած հողաթափներս:

Յակոբոս. — Պարգևէն՝ կը հասկնամ թէ ինչ մարդ է պարգև տուողը:

Մեղոն. — Չիս կը ծաղրածես ալ հա՛:

Յակոբոս. — Աստուած չընէ:

Մեղոն. — Քեզի՛ պէս թշուառական, անկողիներէս մէջմը իջնեմ՝ գիտեմ ընելիքս...

Յակոբոս. — Անհանգիստ մի՛ ըլլար, կրնաս պաղ առնել:

Մեղոն (ինքիտե՛ն). — Է՛հ, թէ որ այս վախս չըլլար...

Յակոբոս. — Է՛հ, մէկդի թող, սրդողելու բան չկայ: Վերջապէս ի՛նչ գէշ գործ ըրի այս բաներս առնելով:

Մեղոն. — Եւ ո՞վ քեզի սորվեցուց ձեռքդ դընել այն բանին վրայ որ քեզի չի վերաբերիր: Ուրիշներուն խուցերը մտնել, և համարիլ ըզքեզ իբրև բացարձակ տէր մը...

Յակոբոս. — Կ'ուզէի հրաման խնդրել, բայց կը վախնայի որ գքեզ արթընցնեմ: Ալ ուրիշ անգամ չեմ ընեք:

Մեղոն. — Ա՛հ, գուցէ միտքդ դրեր ես նորէ՛ն դառնալու:

Յակոբոս. — Կրնայ ըլլալ, աշխարհք է:

Մեղոն. — Գալով անոր՝ այն ետքը կը տեսներք:

Յակոբոս (փայփայելով գիւրջը). — Դու ա՛յնչ չափ ազնիւ ես որ...

Մեղոն. — Չեռքերդ վա՛ր, վա՛ր, պարոն թորոս:

Յակոբոս. — Այս երրորդ անգամ է արդէն որ կ'ըսեմ քեզի թէ ես Յակոբոս կը կոչուիմ:

Մեղոն. — Բայց ա՛լ գլուխ ֆա՛ց քովս:

Յակոբոս. — Ուրեմն ա՛լ ինձի բարկացած չես, է՛հ... Լաւ է, անմիջապէս կերակուրի կ'երթամ: Կ'ուզե՛ս հրամե՛լ: Եկուր, մէկտեղ ուտենք:

Մեղոն. — Ես անօթի չեմ: Չիս հանդարտ ձըգե՛ս՝ աւելի աղէկ կ'ըլլայ:

Յակոբոս. — Ա՛հ, քնանա՛լ կ'ուզես: Կը տեսնես որ գքեզ չեմ արթընցներ: Գիշեր բարի:

Մեղոն. — Քեզ լոյս բարի:

Յակոբոս. — Իմ հրաւէրս չուզեց ընդունիլ: Իրեն համար աւելի գէշ և ինձի համար աւելի աղէկ... ամբողջ ես կ'ուտեմ: Պատրաստենք ուրեմն... Աղէկ միտքս եկաւ. իսկ գինի՛ն: Վա՛յ թշուառութեանս. ասոր վրայ չէի մտածած... Ի՛նչպէս ընելու է... Իմ ասպնջականս ապահովապէս պիտի ունենայ: Պարոն Մեղոն, պարոն Մեղոն:

Մեղոն. — Նորէն սկսանք... Բայց այս նոր տեսակ հալածանք մ'է:

Յակոբոս. — Ներէ: Արդեօք գինի ունի՞ս:

Մեղոն. — Դեռ ի՛նչ, ես պանդոկապե՛տ եմ:

Յակոբոս. — Ծերերը միշտ պահճու շիշեր կ'ուտենան. անիկայ իրենց կաթը կ'անուանեն:

Մեղոն. — Ես բան մը չուտիմ:

Յակոբոս. — Կը վճարեմ, է՛հ: Չեմ պահանջեր որ գայն ընծայես ինձի:

Մեղոն. — Գնա՛ գնէ: (Ինքիտե՛ն) Եթէ յաջողէի՛ մէջմը դռնէն դուրս դնել գինքը:

Յակոբոս. — Ո՛ր էր թէ ապուշ ըլլայի... Սակայն ես առանց խմելու ուտելով՝ պիտի խըղդուիմ:

Մեղցուն. — Ո՛ւր էր թէ, Աստուած տար:
 Յակոբոս. — Բայց դու Ներոն մ'ես:
 Մեղցուն. — Եւ դու մէկ... Հիմայ պարտապա-
 նաց բան մը ըսել պիտի տայիր ինծի... Մէյ-
 մը զիս հանդարտ թող:
 Յակոբոս. — Լաւ ուրեմն, համբերութիւն: Գի-
 շեր բարի:
 Մեղցուն. — Քեզ լոյս բարի:
 Յակոբոս. — Չեմ կրնար զիս համոզել որ գի-
 նիէ գուրկ ըլլայ: Այն դարանին մէջ՝ որ խո-
 հանոցը տեսայ, պէտք է որ գտնուի: Կ'ուզէի
 այնպիսի կերպով ընել որ ծերուկը չանդրա-
 դառնար... Կ'երթամ կամաց կամաց, առանց
 շուկ մը հանելու... (Կը մտնէ աշակոյղը
 կանացուկ, և կ'երէ շուտ մը շիշով մը) Գու-
 չակեցի: Ա՛լ հիմայ բան մը չի պակտիր: Պա-
 տրաստենք ուրեմն պէտք եղածը... (կը սրս-
 տրաստէ) հոս հացը, հոս շիշը... գաւաթը
 կը պակտի. բայց հոգ չէ... Ո՛րչափ փոշի կայ
 այս պնակներուս վրայ: Հարկ է մաքրել գա-
 նոնք: Պէտք է ունենամ ձեփճերմակ թաշկի-
 նակ մը... (Պնակը մտարեղոջ ժամանակ՝ ձեռ-
 քիկ վար կ'իջնայ):
 Մեղցուն. — Մայրիկո. (վեր ցատկերով) Ի՞նչ է-
 դաւ:
 Յակոբոս. — Թողութիւն կը խնդրեմ, ձեռքէս
 պնակ մը ինկաւ և կոտրեցաւ:
 Մեղցուն. — Իմ նոր հողէ ամաններս, կոտ-
 րուած...
 Յակոբոս. — Նայէ... խեղճ բան. (կը ցուցնէ
 կոտորուակը):
 Մեղցուն. — Ա՛հ, բայց ասիկայ ա՛լ քու խնթու-
 թիւններուդ չափը կ'անցընէ: Պիտի քաշեմ
 զքեզ դատարանը՝ փնտնելուդ տուժը հատու-
 ցանելու համար, պարոն Պետրոսիկ:

Յակոբոս. — Յակոբոսիկ:
 Մեղցուն. — Գետինն անցնի Յակոբոսիկն ալ,
 Պետրոսիկն ալ: Կ'ուզեմ որ վճարես:
 Յակոբոս. — Լաւ, լաւ. կը գոհացնեմ զքեզ:
 Ո՛րչափ պիտի արժէ, երեսուն փարա:
 Մեղցուն. — Ի՞նչպէս երեսուն փարա... անգ-
 ղիական հող է:
 Յակոբոս. — Ըլլայ անգղիական, ըլլայ գաղ-
 ղիական, վերջապէս եղածը դժբախտութիւն
 մ'էր: Կ'ուզէի փոշին վրայէն թափել. նայէ
 ինչպէս ըրի... (Միշտ ալ սրբերոջ ժամանակ
 ձեռքիկ գետիկ կ'իջնայ) Ա՛հ:
 Մեղցուն. — Մէկա՛ն ալ: Հիմայ ա՛լ դու ինծի
 հետ գործ ունիս (կ'իջնէ ակերդիկէն):
 Յակոբոս (ստոյիկիկ միջոցով պաշտպանուե-
 լով). — Ի՞նչ, ինծի բռնութիւն պիտի բա-
 նեցնես:
 Մեղցուն. — Այն պնակներուն համար կը պա-
 հանջեմ տասըհինգ դահեկան, և շուտ մը,
 ապա թէ ոչ...
 Յակոբոս. — Քայլ մ'ատաջ մի գար, վասն զի
 ... (Կը քաշէ անձեռոցը և վար կը ձգէ շիշը
 և ուտելիքները) Ո՛հ:
 Մեղցուն. — Իմ շիշս:
 Յակոբոս. — Իմ ճաշս:
 Մեղցուն. — Գու զիս կերար:
 Յակոբոս. — Ես ֆացի անկերակուր:
 Մեղցուն. — Աւագիկ:
 Յակոբոս. — Ո՛հ, դժբաղդութիւն, որուն վրայ
 ա՛լ չեմ ուզեր պարիլ: (Կը նսնէ բանալի մը
 իջրև. քի ստորանակ մ'ըլլար) Թող ցնդի ու-
 դեղս օդուն մէջ:
 Մեղցուն. — Կեցիր, կ'աղաչեմ: Խենթ ըցար, Ի՞նչ
 եղար:
 Յակոբոս (իւրիքիկ, բանալիկ հանդիսատեսնե-

- րուն ցուցնելով) . — Վախցուցի զինքը բանալիով մը: (Բարձրաձայն) Այո:
- Մեկզուն. — Վա՛ր այն բանը, վա՛ր... Զգարչ կեցիք, չարձըկուի:
- Յակոբոս. — Առանց կերակուրի մնալը...
Մեկզուն. — Ամէն բանին դարձանը կայ:
Յակոբոս. — Անգղիական ամանները կոտրելը...
Մեկզուն. — Եւ ոչ իսկ վրանին կը մտածեմ...
Բայց այն բանը վա՛ր դիր, վասն զի կը վախնամ:
- Յակոբոս (կատակերգորեն). — Քեզի պարտական եմ կեանքս. (կը դնէ բանալի գրպանը):
Մեկզուն. — Ո՛հ, ապրի՛ս: Այն քաջութիւնը քեզի պէս մարդուն համար չէր:
Յակոբոս. — Ուրեմն դու ինձի կը ներե՞ս:
Մեկզուն. — Բոլոր սրտովս:
Յակոբոս. — Ուրեմն բարեկամ ենք:
Մեկզուն. — Բարեկամին բարեկամը:
Յակոբոս. — Փորձ մը տուր նայինք ինձի:
Մեկզուն. — Հիմայ խելքիդ ի՞նչ փչեց:
Յակոբոս. — Բան մը չէ... միայն կ'ուզեմ որ անկողին դառնաս, և անոյշ անոյշ քու քունդ քաշես:
Մեկզուն. — Ալ փափագ չունիմ:
Յակոբոս. — Ա՛յդպէս անքաղաքավար մի՛ ըլլար: Կը ճանչնամ որ գէշ էր գործածս, բայց սօսկէ վերջը արձանի մը պէս պիտի մնամ: Սիրտս մի՛ կոտրեր հա, իմ սիրելի... Մեզոսնիկս, այնպէս չէ՞:
Մեկզուն. — Այո՛:
Յակոբոս. — Ուրեմն...
Մեկզուն. — Ուրեմն ի՞նչ:
Յակոբոս. — Անկողին մտնելովդ և աչքերդ փակելովդ և ես կատարեալ լուսթիւն մը պահելովս՝ պիտի քնանաս: Մեծապէս պիտի տխրէի՛

- եթէ իմ պատճառուս ձախորդութեան մը հանգիստ էիր:
- Մեկզուն. — Եիտակը...
Յակոբոս. — Շուտ, շուտ ուրեմն . ժամանակ մի՛ կորսընցներ... (Զինքը կը տանի անկողին):
Մեկզուն կը պառկի Գիշեր բարի:
Մեկզուն. — Քեզ լոյս բարի:
Յակոբոս. — Իմ խեղճ կերակուրս (զետիկը դիտելով գայլ) : Եւ ինձի կ'արժէ ութսուն փարա... Վաղը կ'ուտեմ. կը պատուիրեմ թագաւորական նախաճաշ մը: Սակայն հիմակուհիմայ պարապ փորով պիտի չկարենամ քնանալ... իմ փորոտիքներս իրար պիտի անցնին: Աղէ՛կ միտքս եկաւ . ողբերգութիւնս լմացընեմ... (Կը հանէ գրպանէն ձեռագիր մը): Ի՞նչ պատել պիտի բերէ ինձի: Ողբերգութիւն մը՝ տասուերկու հանդէսով և երկու նախերգանքով, որ կ'ըլլան տասնըչորս: Տասնըչորս հանդէս: Չկայ միտք մը՝ որ այսպիսի գործի մը կարող ըլլայ: Միայն տիպոսը կարող լուր՝ ապշած կը մնաս . « ՎՐԻՃՆԵՐԻ ՍՏՈՒՆԵՆԵՐ » : (Կը կարդայ) « Հանդէս եօթներորդ: Տեսարանը պիտի ներկայացնէ Աճերի քաղաքին մէջ ընդարձակ անապատ մը: Շատ մ'աթուներ հոս և հոն սփռուած : Երաժշտութեան քանի մը ամանակներէ ետքը՝ պիտի փրթի սաստիկ փոթորիկ մը, և փայլակնացայտ շողիւնէ մը՝ որ պիտի պատռէ ամպերը, պիտի ելլէ Ապտիւմիր, որ մտայոյց պիտի անցնի մորիկներու և ամպերու մէջէն: — Տեսիլ առաջին: Ապտիւմիր միայն. (կ'արտասանէ)

Անվերջ . . .

- Մեկզուն (վեր ցատկելով) . — Ո՛վ է:
Յակոբոս. — Ապտիւմիր:

- Մեկզուն. — Ո՞վ: Չբանաս իրեն, գիտես:
 Յակոբոս. — Արդէն մտած է:
 Մեկզուն. — Ի՞նչ, իմ տունս բացիր անոր:
 Յակոբոս. — Բայց, չէ, մը...
 Մեկզուն. — Ո՞ր մտաւ ուրեմն:
 Յակոբոս. — Եօթներորդ հանդէսին առաջին
 տեսիլին մէջ:
 Մեկզուն. — Ի՞նչ խենթ բաներ կը խօսի:
 Յակոբոս. — Մտիկ ըրէ, մտիկ... գլուխ գործոց
 մ'է:
 Մեկզուն. — Ո՞րը:
 Յակոբոս. — Իմ ողբերգութիւնս:
 Մեկզուն. — Կորսուէ՛, ես...
 Յակոբոս. — Այս կերպով պիտի պտտի Ապ-
 տիւմիր... (կը պարտի կատակերգօրէն, ար-
 տասաներով)
- Անվրէժ պիտի չի մնայ այնքան ոճիր մ'.
 Թափեցիր արիւն, և ըստ բոլոր արիւնդ...
 (դէպ ի Մեկզունիև դարձած):
- Մեկզուն (խեղճիւն). — Արդեօք ինծի՞ կ'ըսէ...
 Խենթըցած չըլլայ: Այն ատեն գործս աղէկ է.
 (անկողիէն վար կ'իջէ):
 Յակոբոս (խեղճիւն վերջ)
 Հրավաս բոցն որ կուրծքիս մէջ կը վառե
 Չը պիտի բաւ մարել, վայրագ սալար
 Ըտտուերներ, եկէ՛ք ձեր միտքն արտայայտել:
- Այն ատեն ամէն կողմանէ դուրս պիտի ելլեն
 ճերմակ ստուերներ և սև ստուերներ:
 Մեկզուն. — Սև ստուերներ ալ:
 Յակոբոս. — Յայտնի է. զանազանութիւնը ա-
 խորժելի է... որոնք լուսմուռ պիտի երթան
 գրաւելու այն նստարանները երգելով...

- Մեկզուն. — Ի՞նչպէս երգելով, քանի որ լուռ
 մուռ են... Ալ ասկէց անդին աւելի բան չեմ
 ուզեր լսել:
 Յակոբոս. — Լուռ կեցիր, մի ընդմիջեր զիս...
 (արտասանելով)
- Ախրոնի բանտէն՝ շանթի,
 Որտտուծի, փայլակի մէջ
 Այս աշուղի անտառիս ասկ
 Մենք խիստ ձմեռը պիտի դանք...
- Մեկզուն. — Ա՛հ, ձմեռ էր:
 Յակոբոս. — Այո, յունուար ամսոյն մէջ:
 Մեկզուն. — Պաղ առած պիտի ըլլան:
 Յակոբոս. — Ապրիլ, ստուերները ոչ պաղ կը
 զգան, ոչ տաք:
 Մեկզուն. — Եւ այն ատեն ինչո՞ւ...
 Յակոբոս. — Լուռ կեցիր. իմ քերթողական
 խանդիս վրայ հիացիր... (կ'արտասանէ)
- Եւ այն պերճալի աթուներուն վրայ
- Մեկզուն. — Ի՞նչ պերճութիւն, վայ թշուառու
 թեանս:
 Յակոբոս. — (խեղճիւն վերջ)
- Պիտ' երգուն զրէժ,
 Եւ մինչև գուլպան
 Պիտ' իջնէ ահեղ:
- Մեկզուն. — Ո՛հ, ինչ ափեղցըփեղ բան:
 Յակոբոս. — Ի՞նչ տողեր, ի՞նչ տողեր:
 Մեկզուն. — Գուլպան հոն ինչ կը մտնէ:
 Յակոբոս. — Այն ատեն Ապտիւմիր ... մտիկ
 ըրէ Ապտիւմիրի որ կը խօսի...
 Մեկզուն. — Կ'աղաչեմ որ լուռ կենայ՝ գէշ չը-
 ներ:

Յակոբոս. — Արտեանունքդ մի թարթափեր,
յոնքերդ անգամ մի շարժեր: Այն ատեն Ապ-
տիւմիր... (սրտասուկերով)

Աղետաւոր ըսպէն ահա կը հասնի
Իմ զայրութիւն ծայրապատար փըթեւուն,
Բընութիւնն իսկ անգամ պիտի սասանի
Էւ սարսուռի սարսափէն...

Պիտի լսուին ոմանք ճամբուն մէջ՝ որ պիտի ա-
ղաղակեն կառավարին, որպէս զի մտրակէ
տղաքներէն ոմանք՝ որ կառքին ետեւ ելած
են «Ջարկ, զարկ»:

Մեղոն. — Ա՛հ, ա՛հ, ա՛հ:

Յակոբոս. — Ի՛նչպէս, դու կը խնտամ:

Մեղոն. — Արձաններն անգամ կը խնտային...
Ա՛հ, ա՛հ, ա՛հ...

Յակոբոս. — Քեզի պէս տգէտ և անզգայ մարդ
կ'ըլլա՞յ:

Մեղոն. — Խորհուրդ մը տամ քեզի:

Յակոբոս. — Ըսէ տեսնենք:

Մեղոն. — Քու այդ հոգակաւոր ողբերգութիւնդ
այրէ:

Յակոբոս. — Է՛հ... իմ տասնըջո՞րս հանդէսով
ողբերգութիւնս:

Մեղոն. — Միայն տասնըջորս:

Յակոբոս. — Բայց այդ անկարելի է... Լսէ,
լսէ, այս միւս պարը:

Մեղոն. — Կ'աղաչեմ, ա՛լ ոտանաւոր մի ար-
տասաներ, ապա թէ ոչ՝ պիտի բռնադատես
զիս որ թողում երթամ:

Յակոբոս. — Այն պարագային մէջ՝ տանը տէրը
ես կը մնամ... Էւ ուրիշ կողմանէ այս ան-
ձընովս...

Մեղոն. — Բայց ըսէ մէյմը ինծի. կրնանք

զիտնալ արդեօք թէ ինչ է պատճառը՝ որով
այս գիշեր ետեւէս ինկար զիս հալածելու:

Յակոբոս. — Ե՛ս զքեզ հալածեմ: Քեզի համար
կարող եմ ես ինչուան երթալու խղճուելու...
զինիի տակառի մը մէջ: Մանաւանդ թէ լսէ
իմ մէկ մտածութիւնս:

Մեղոն. — Ա՛լ ուրիշ բան մ'ալ չեմ ուզեր լը-
սել:

Յակոբոս. — Ես միայն եմ, դու միայն ես,
մենք միայն ենք: Ուրեմն մէկտեղ ապրինք:
Ես կու գամ բնակելու քեզի հետ, և ընտա-
նիք մը կը ձևացնենք:

Մեղոն. — Ա՛յս պակաս էր... Ի՛շտ, ընդհա-
կառակն կը հրամայեմ քեզի որ շուտ մը դուրս
ելլես, երթաս կորսուիս. ապա թէ ոչ՝ լուս-
նալուն պէս՝ կ'երթամ մերձակայ ոստիկանա-
տունը...

Յակոբոս. — Ուրեմն կը վազնտես զիս:

Մեղոն. — Ի՛նչ ըսել է, և ցա՛խ աւելով:

Յակոբոս. — Վ՛նտել զի՞ս... Յակոբոս ֆալա-
ճօչեա՞ն:

Մեղոն. — Ի՛նչ... Յակոբոս ֆալաճօչեա՞ն .
դո՞ւ:

Յակոբոս. — Այո՛, քու եղբայրդ, որ այս քսան
տարիէն ետքը քեզի կը դառնայ Ռուսաստա-
նէն: Բայց կարելի՞ բան է որ ես այնպէս
փոխուած ըլլամ որ զիս չճանչնաս... Այո՛,
այո՛, զրկէ զիս... ես քու Յակոբոսդ եմ:

Մեղոն. — Իմ եղբայրս... (կը գրկուի) Դեռ
կը պահես քու այն բնական գուարթութիւնդ:

Յակոբոս. — Պիտի ուզես ուրեմն զիս վնտել:

Մեղոն. — Ի՛նչ կ'ըսես... Բայց ինչպէս դար-
ձեր ես առանց ինծի բան մը գրելու:

Յակոբոս. — Ուզեցի զքեզ յանկարծակիի բե-
րել:

Մեղգոն. — Եւ քնչպէս ալ չճանչցայ գրեզ այն
քու խենթուկ կերպերէդ:

Յակոբոս. — Միշտ մէկտեղ պիտի մնանք:

Մեղգոն. — Մինչև մահ. (տասուներկուքը կը
գարկն):

Յակոբոս. — Ահա կէս գիշեր. երթանք ուրեմն
ճանգչելու. վաղը կը սկսինք նոր կեանք մը:



Հայաստանի Ազգային գրադարան



NL0420547

